

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Քրիստոս յարեա՛լ ի մեռելոց..... 109

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՂԱԿՆԵՐ 112

ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ

ՄԱԿԱՐ ԱՐՔ. ԱՇԳԱՐԵԱՆ — Ս. Գրիգոր Լուսավորիչով՝ զօրացած..... 117

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն

Մատթեոս Աւետարանի (4.4-9) 123

ՊԱՏՄԱ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին 130

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Բացայայտում մը Միջին Արեւելքի

քրիստոնեաներու հոգեւորութեան 133

ՅՕՂՈՒԲՃՆԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ԹԻՐԻԻՄԵԱՆ — Հայ եկեղեցական երգին

ծագումն ու զարգացումը 137

ԱՌԱՔԵԼ ԱՐԴ. ԳԱՏԵՅՃԵԱՆ — Քառեակ՝ Քրիստոսի հետքերով..... 143

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱԵԱՆ — Աստուածիմաստութիւն 146

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 156

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ..... 157

ՏՕՆԱԿԱՆ..... 160

ՀԱՅ ԴԱՏ..... 182


ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ..... 193

ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ 195

ԳԻՏԱԺՈՂՈՎ 203

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ 210

ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒՄ.....	215
ԴՊՐԵՎԱՆՔ	216
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	220
ԽՈՐԷՆ Ա. ԿԵԴՐՈՆ	223
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ	226
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ.....	228
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	232



ՊԱՇՏՏՈՒՆԿԱԿԱՆ ԿՄԱԿԳԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԵՆ ԿԻԿԿԻՈՅ

ՂԳ. ՏԱՐԻ 2024

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

ԹԻԻ 3-4

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Ամուր հաւատքով շաղախուած ու հոգեւոր ցնծութեամբ լեցուն ա՛յս վկայութեամբ քրիստոնեաներ զիրար կ'ողջունեն ու աշխարհին կ'աւետեն հրաշափառ յարութիւնը Աստուծոյ Որդւոյն: Սա սովորական արտայայտութիւն մը չէ, այլ քրիստոնեական կրօնին էութիւնը կազմող հաւատքի վկայութիւն մը՝ պատմական անհերքելի իրողութեան վրայ հաստատուած: Արդարեւ, հաւատքի այս վկայութեամբ առաքելներ Երուսաղէմէն դուրս հին աշխարհի գանազան շրջաններուն մէջ, նաեւ՝ Յայաստանի, իսախալ, թաղեալ ու յարուցեալ Քրիստոսը քարոզեցին եւ եկեղեցիներ հիմնեցին: Հաւատքի ա՛յս վկայութեամբ հզօրացած, եկեղեցիներ քաջութեամբ դիմագրաւեց պատմութեան բոլոր արհաւիրքները:

Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնը հինգ յիշեցումներ կը կատարէ: Յիշեցումներ, որոնք պէտք է արմատանան մեր կեանքին մէջ.-

Առաջին, **Քրիստոսի յարութիւնը առա՛նցքն է մեր հաւատքին:**

Քրիստոսի յարութեան դէպքը թեական նկատող նորադարձ քրիս-

տոնեաներուն, Պօղոս Առաքեալ կ'ըսէ՝ «*Եթէ Բրիստոս յարութիւն առած չէ՝ զո՛րք է մեր քարոզութիւնը, զո՛րք է նաեւ ձեր հաւատքը*» (Ա.Կր 15.14): Բրիստոսի յարութիւնը աղբիւրն է քրիստոնեայ մարդու հաւատքին, անոր վաւերականութեան ու զօրութեան: Բրիստոսի յարութեան վրայ հիմնուած է եկեղեցին, որպէս Բրիստոսի խորհրդական մարմինը: Բրիստոսի յարութեան հաւատքով կը կենսագործուի եկեղեցւոյ առաքելութիւնը:

Երկրորդ, **Բրիստոսի յարութիւնը յաղթանակն է կեանքին:**

Եկեղեցին շարականներուն ու աղօթքներուն ճամբով Բրիստոսի յարութիւնը կը բնորոշէ, որպէս յաղթանակ՝ մահուան դէմ: Մահը, այլ խօսքով՝ չարը, մեղքը ու սատանան, ըլլալով մարդու փրկութեան դիմաց կանգնող արգելք, Բրիստոս իր մահով յաղթեց մահուան, «*մահուամբ զմահ կոխեաց*» եւ իր խաչով յարութիւն կերտեց: Առաքեալը կը հաստատէ, թէ Բրիստոս իր յարութեամբ «*մեզի յաղթանակ պարգեւեց*» (Ա.Կր 15.57): Այդ յաղթանակը յաւիտենական կեանքի յաղթանակն է մահուան դէմ:

Երրորդ, **Բրիստոսի յարութիւնը երաշխի՛ք է մարդու յարութեան:**

Առաջին Ադամով մահը մուտք գործեց աշխարհ, իսկ երկրորդ Ադամով, Բրիստոսով՝ յարութեան յոյսով շաղախուած կեանքը: Այլ խօսքով, «*ինչպէս մարդով մը սկիզբ առաւ մահը, նոյնպէս մարդով մը սկիզբ կ'առնէ մեռելներու յարութիւնը*» (Ա.Կր 15.21): Բրիստոս իր յարութեամբ մարդը մահուան տիրապետութենէն ազատագրեց եւ յարուցեալ կեանքի յոյսը տուաւ. «*Քանի մենք մեռանք Բրիստոսի հետ, կը հաւատանք թէ նաեւ անոր հետ պիտի ապրինք*» (Յռ 6.8), նորոգեալ կեանքով, որպէս մահէն կեանքի եկած ու Բրիստոսի միացած մարդեր: Յետեւաբար, Բրիստոսի միանալով, ինչպէս իր հետ թաղուեցանք, նոյնպէս իր հետ յարութիւն կ'առնենք հոգեւորապէս, իսկ Բրիստոսի երկրորդ գալուստին, մեռելներէն՝ մարմնապէս: Արդարեւ, յարուցեալ Բրիստոս համայն մարդկութեան կը ներկայանայ «*որպէս առաջին օրինակ մեռելներու յարութեան*» (Ա.Կր 15.20):

Չորրորդ, **Բրիստոսի յարութիւնը յիշեցո՛ւմ է ուղղուած մեր ժողովուրդին:**

Յիշեցում՝ որ Բրիստոսի յարութեան առաջին հաւատացող ժողովուրդը եղանք: Յարութեան հաւատքը մեր կեանքին հետ շաղախեցինք: Անո՛վ հզօրացած դիմագրաւեցինք պատմութեան հալածանքներն ու ցեղասպանութիւնները: Անո՛վ պայծառակերպուած ստեղծեցինք ու վերստեղծեցինք, շինեցինք ու վերաշինեցինք՝ հակառակ մեզ շրջապատող դժոխային պայմաններուն: Անո՛վ գօտեպնդուած վերականգնեցանք ու վերակազմակերպուեցանք եւ վերակերտեցինք մեր Հայրենիքը: Բրիս-

տոսի յարութիւնը եղաւ մեր տառապալից կեանքը յարութեան շունչով ու ոգիով, հաւատքով ու տեսլականով հզօրացնող երկնային ուժ:

Հինգերորդ, ***Քրիստոսի յարութիւնը Նաեւ պատգա՛մ է ուղղուած մեր ժողովուրդին:***

Պատգամ՝ հաւատարիմ մնալու Քրիստոսի յարութեան խորհուրդին եւ գայն իրենց հաւատքի կեանքով ու առաքելութեամբ թարգմանած մեր հայրերու սրբազան կտակին: Նաեւ հեռո՛ւ մնալու քրիստոնեական արժէքները նսեմացնող կենցաղակերպերէ ու գործելակերպերէ: Հեռո՛ւ վանելու մեզ շրջապատող չարերն ու չարիքները: Պատգամ՝ մերժելու խաւարը ու բացուելու լոյսին, մերժելու վիատութիւնը ու փարելու յոյսին, մերժելու մահը ու կառչելու կեանքին: Արդ, սիրելի՛ հայորդիներ, զիրար ողջունենք մեզ շրջապատող տագնապները հաւաքաբար յաղթահարելու յարութեան հաւատքով: Չիրար ողջունենք Քրիստոսի յարութեան յաղթանակին մասնակից դառնալու յանձնառութեամբ, ինչպէս դարեր շարունակ մասնակից դարձանք Քրիստոսի խաչի ճանապարհին: Չմոռնանք երբեք, որ «*Քրիստոս մեզի համար մեռաւ, որպէսզի մենք իրմով կենդանի ըլլանք*» (Ա.Թս 5.10):

*

* *

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Յարութեան տօնին առիթով, եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով եկեղեցաշէն իրագործումներով երկար գահակալութիւն: Կ'ողջունենք նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեանը, իրենց մաղթելով բեղմնաւոր ծառայութիւն Հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Հայրապետական օրհնութեամբ ու հայրական սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, Հոգեւոր դասը, Ազգ. Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր հաւատացեալ ժողովուրդը: Կ'աղօթենք առ Աստուած, որ իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Հայաստանի եւ Սփիւռքի մեր ազգին զաւակները, որպէսզի կարենանք, Յարուցեալ Փրկչին յաղթանակով հզօրացած, վերանորոգել մեր կեանքը եւ դիմագրաւել ներկայ ժամանակներու բազմազան մարտահրաւերները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,

Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեանին, վարդապետական Լանջախաչ կրելու իրաւունք ստանալուն առթիւ)

Ի գնահատութիւն հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս որպէս Կիլիկեան Ուխտի Միաբան Ձեր մատուցած ծառայութիւններուն՝ թէ՛ Կաթողիկոսարանի մէջ Ձեր ստանձնած պարտականութիւններուն եւ թէ՛ թեմերէ ներս Ձեզի վստահուած պատասխանատուութեանց ճամբով, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք **ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆԶԱԽԱՉ** կրելու իրաւունք:

Վստահ ենք որ Աստուծոյ օրհնութեամբ պիտի շարունակէք Ձեր նուիրեալ գործունէութիւնը՝ ի սպաս մեր սուրբ եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ մեր հաւատացեալ ժողովուրդին:

Կ'աղօթենք որ Ամենաբարին Աստուած ֆիզիքապէս ու հոգեպէս զօրացնէ Ձեզ՝ Իր շնորհաց հեղումովը Ձեր անձին վրայ, որպէսզի վերանորոգ խանդով շարունակէք Ձեր հոգեւոր առաքելութիւնը, եւ կարենաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի բառերով ըսել՝ *«Ծառայք անպիտանք եմք, զոր պարտեաքն առնել արարաք»* (ՂՈՒԿԱՍ ԺԷ. 10):

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

*Տուալ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 27-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Տիգրան Մանսուրեանին,
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալուն առթիւ)

Խոր գոհունակութեամբ կարդացինք Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի վկայութիւնը՝ երաժշտական մարզէն ներս Ձեր բերած ներդրումին մասին: Նաեւ ուրախութեամբ իմացանք, որ այս տարի կը նշուի Ձեր ծննդեան 75-ամեակը:

Արդարեւ, շուրջ քառասունըհինգ տարիներ Ձեր երաժշտական ինքնուրոյն վաստակով ու յօրինումներով դուք ոչ միայն առաւել եւս ճոխացուցիք ու հարստացուցիք մեր մշակոյթի այս բերքառատ դաշտը, այլ մանաւանդ համաշխարհային բեմերէն հայ երգին ու երաժշտութեան վայելքը հրամցուցիք օտար երաժշտասեր հասարակութեան՝ Եւրոպայէն մինչեւ Ամերիկեան ցամաքամասերը: Դուք նաեւ հետամուտ եղաք Ձեր երաժշտական կարողութիւնները ի սպաս դնելու մեր նորահաս սերունդին եւ պատրաստելու զանոնք, որ ստանձնեն մեր ժողովուրդի երաժշտական անմար ջահը:

Առ ի գնահատանք երկար տարիներու Ձեր մշակութանուէր անխոնջ գործունէութեան, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր հովանիին ներքեւ պահէ Ձեզ, որպէսզի կարենաք նոյն խանդով ու աշխոյժով Ձեր երաժշտական վաստակը ի սպաս դնել մեր մշակոյթին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուալ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 30-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԱ.*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Տրդատ Քինյ. Թաշճեանին, Քահանայական լանջախաչ կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Շահան Արք. Սարգիսեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ

կրելու արտօնութիւն՝ յընթաց տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ Հայ Եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ, պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԲ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Զաւէն Ինճեճիկեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան ստանալուն առթիւ)

Ուրախութեամբ կարդացինք Քանատայի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի վկայութիւնը՝ Քանատայի հայութեան կեանքէն ներս Ձեր ունեցած երկար տարիներու անձնուէր ու անսակարկ ծառայութիւններուն մասին:

Արդարեւ, որպէս անդամ Քանատայի թեմի Ազգային Վարչութեան եւ Ազգային Երեսփոխանական Ժողովին, դուք գործօն մասնակցութիւն բերիք թեմի կազմաւորման ու բարգաւաճման մէջ: Կարելոր ներդրում ունեցաք նաեւ գաղութի ազգային, եկեղեցական, կրթական, մշակութային ու ընկերային կեղ-

րոններու գործունեութեան մէջ: Բժախնդրութեամբ հետեւեցաք Ձեզի վստահուած ծրագիրներու գործադրման ու իրագործման՝ ի խնդիր Քանատայի հայութեան հաւաքական կեանքի առաւել զարգացման ու արդիւնաւորման գանազան բնագաւառներէ ներս:

Ընդառաջելով Առաջնորդ Սրբազանի եւ Ազգային Իշխանութեան խընդրանքին, եւ ի գնահատութիւն Ձեր ազգանուէր ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանիքի անդամներուն պարգեւէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային անսպառ բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 21-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԸ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Ռաֆֆի Արսլանեանին, «Ասպետ»ի կարգի շքանշան ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական սիրով կ'ողջունենք Ձեզ: Հոգեկան խոր գոհունակութեամբ իմացանք *Համազգայինի* կեդրոնական վարչութենէն եւ *Մելանքթոն* եւ *Հայկ Արսլանեան Ճեմարանի* տնօրէնութենէն, որ յատուկ սէր եւ նախանձախնդրութիւն կը շարունակէք տաճել կրթական այս օճախին նկատմամբ:

Արդարեւ, անձնապէս ծանօթ ըլլալով Ձեր ընտանիքին, կ'ուզենք ուրախութեամբ հաստատել, թէ Արսլանեան գերդաստանի ազգանուէր ու մշակութանուէր ոգին կը շարունակէ մնալ արծարձ՝ նահապետական այս ընտանիքի բոլոր անդամներու կեանքին մէջ: Ահա այդ ոգին անգամ մը եւս գործնական արտայայտութիւն կը գտնէ Ձեր նիւթական յանձնառութեամբը՝ Ճեմարանի մէջ նոր մանկամտորի կառուցման:

Արդ, ի գնահատություն ընդհանրապես Ձեր կատարած բարերարությանց ու յատկապես *Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանին* նկատմամբ Ձեր ցուցաբերած սիրոյն, եւ անոր առաքելութեան առաւել արդիւնաւորման ի խնդիր Ձեր ունեցած ներդրումին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

ԱՍՊԵՏԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր ընտանիքին պարգեւէ քաջառողջութիւն, եւ՝ նորանոր իրագործումներով հարուստ երկար տարիներ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 23-ն Փետրուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԼԷ.*



ՔԱՐՈՋԱԽՕՍԱԿԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՈՎ՝ ԶՕՐԱՅԱԾ՝

«Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հո՛ն է Քրիստոս, Հօր Աստուծոյ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու, որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով՝ որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ ձեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ» (Կղ 3.1-4):

Գործութիւն Աստուծոյ՝ իր անսահման սիրոյն, ողորմութեան, բարիքներուն ու օրհնութեանց համար, որոնցմով կ'ողողէ ու կը լիացնէ մեր կեանքը: Շնորհակալութիւն Աստուծոյ, որ իբրեւ ուխտաւոր, մեզի շնորհեց առիթը ներկայ գտնուելու Կաթողիկոսարանի ուխտի օրուան եւ մասնակից դառնալու այդ առթիւ մատուցուելիք Ս. եւ Անմահ Պատարագի խորհուրդին եւ ստանալու անկէ ծաւալուող աստուածային բարիքներն ու օրհնութիւնները եւ տօնելու Հայկեան Ազգի մեծ պաշտպան, երկրորդ Լուսաւորիչ՝ Ս. Գրիգոր Մեծ Հայրապետի շարժարանքներուն ու վիրապ մտնելուն յիշատակը, որ միաժամանակ անուանակոչութեան տօնն է նաեւ Կաթողիկոսարանիս համանուն տաճարին:

Առաքեալը կը հաստատէ, որ մենք յարութիւն առինք Քրիստոսով: Բնականաբար, ակնարկութիւնը հոգեւոր յարութեան է եւ ոչ թէ մարմնաւոր, որ երկրորդ գալուստին տեղի պիտի ունենայ: Այնքան ատեն երբ մեզքի տիղմին մէջ կը թաւալէինք՝ հոգեւորապէս մեռած էինք, բայց երբ Քրիստոսի հաւատալով Աստուածգիտութեան լոյսին դարձանք եւ Մկրտարանի Ս. աւագանի

* Խօսուած՝ Կիրակի, 17 Մարտ 2024-ին, Անթիլիասի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայրավանքին մէջ, Կաթողիկոսարանի «Ուխտի Օր»ուան առիթով:

շուրին մէջ մխրճուելէ՝ մեռնելէ ետք, դուրս բերուեցանք, Քրիստոսով յարութիւն առնելով, ուստի մեր ճիգն ու ջանքը պիտի ըլլայ, իբրեւ յարութեան, լոյսի ու ցերեկուան, երկնաւոր ու յաւիտենական կեանքի համար վերածնած հոգեւոր զաւակներ, կատարել այն՝ ինչ որ մեր նոր ու նորոգուած բնութեան պատշաճ է: Այնպէս պէտք է ապրինք ու ընթանանք, որ մեր կեանքը ներդաշնակ ու յարիր ըլլայ մեր երկնաքաղաքացիութեան, այսինքն՝ Քրիստոսը հագած ճշմարիտ քրիստոնեայ հաւատացեալին:

Ուստի, որպէս մտածելակերպի եւ ապրելակերպի փոփոխութիւն ապրած մարդիկ, ի՞նչ բանի վրայ կեդրոնացուցած ենք մեր ուշադրութիւնը: Ի՞նչ բանի վրայ դրած ենք մեր յոյսը: Ի՞նչ բաներ գրաւած են մեր սիրտն ու հոգին: Որպէս առաջնահերթութիւն կեանքի, ի՞նչ բան է որ կը հետապնդենք, այլ խօսքով՝ ի՞նչ է մեր կեանքի վախճանական նպատակը:

Պօղոս առաքեալ կը թելադրէ, որ մեր ուշադրութիւնը երկինք դարձնենք, երկնային այն երեւոյթներուն ու ճշմարտութիւններուն, որոնք մեզ արժանի կը դարձնեն յաւիտենական ժառանգութեան: Ան մեզ կը հրաւիրէ, որ մեր յոյսը յաւիտենական արքայութեան կապենք, որովհետեւ հո՞ն է, կ'ըսէ, Կեանքը եւ Կենսատուն, Կենդանին եւ Կենդանացնողը, հո՞ն է Յարուցեալն ու Յարուցանողը. հո՞ն է Յոյսը եւ յոյսին մէջ մեզ հաստատողն ու յուսադրողը, հո՞ն է հաւատքի հիմնադիրը եւ կատարելագործողը եւ մեզ հաւատքի մէջ կանգուն պահողը, հո՞ն է Լոյսը եւ Լուսաւորողը, ինչպէս նաեւ հո՞ն է անմահ Արքան եւ իր արքայութեան արժանացնողը, հո՞ն է Քրիստոսը՝ Հօր Աստուծոյ աջ կողմը նստած:

Այնքան ատեն որ մեր հին մարդը, մեղսասէրն ու աշխարհասէրը, մարմնաւոր կիրքերու եւ ցանկութեանց ստրուկը չենք մեռցուցած, չենք կրնար մեր ուշադրութիւնը երկինք դարձնել: Քանի որ քրիստոնէական ճշմարիտ կենցաղը կը պահանջէ, որ մեր հին ինքնութիւնը՝ մեղքով ապականած մարդը մեռցնել եւ նորը, այսինքն՝ Քրիստոսը հագնիլ, փոխելով մեր բարոյական վարքը, թոյլ տալով որ Քրիստոս ապրի մեր մէջ եւ իր կամքին համաձայն ձեւակերպէ մեզ՝ ըլլալու այն՝ ինչ որ ինք կ'ուզէ որ ըլլանք:

Երբ հաւատքով կը կառչինք Քրիստոսի, կը հնազանդինք անոր պատուիրաններուն եւ անոր խոստումներուն համաձայն կ'ապրինք մեր կեանքը, բնականաբար մեր մեղքերը կը մեռցնենք ու Քրիստոսի հետ յարութիւն կ'առնենք՝ Ս. Հոգիի զօրութեամբ նոր կեանքը ստանալով Աստուծմէ: Ասկէ ետք, մեզի կը մնայ մեր առօրեան սրբութեամբ ապրիլ ու արդարութեամբ գործել, համաձայն մեր նորոգուած բնութեան: Այս իմաստով, Քրիստոսով յարութիւն առնողներս յստակ պատասխանատուութիւն ունինք Տիրոջ հանդէպ: Փաստօրէն, մեր ուշադրութիւնը Յիսուսի պէտք է դարձնենք եւ սաղմոսերգուին նման բոցավառ սրտով իրեն փափաքինք. «Ինչպէս եղջերուն կը փափաքի շուրի վտակներուն, այնպէս ալ ես, ո՛վ Աստուած, ես քեզի՛ կը փափաքիմ:

Ծարա՛ւ եմ Աստուծոյ, կենդանի՛ Աստուծոյ, ե՞րբ պիտի գամ՝ ներկայանամ Աստուծոյ»: Առիթով մը Տէրը կ'ըսէր. «Ձեր հարստութիւնը ո՛ր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

Ուստի, սիրտդ կը փափաքի՞ ու կը կարօտի՞ Քրիստոսի: Ի՞նչ բան կը լեցընէ ու բաւարարութիւն կու տայ սրտիդ: Աչքերդ ի՞նչ բան կը տեսնեն: Կը տեսնե՞ս Քրիստոսը Աստուծոյ աջ կողմը նստած, այսինքն՝ իր աստուածային փառքով, զօրութեամբ ու իշխանութեամբ, իբրեւ արդար դատաւոր ու հաւատացեալներու պաշտպան: Կը զգա՞ս անոր ներկայութիւնն ու առաջնորդութիւնը կեանքիդ մէջ:

Առաքեալը, այսօ՛ր ալ կը հրաւիրէ մեզ՝ մտածելու, որ եթէ Քրիստոսով յարութիւն առած ենք, ապա կը նշանակէ որ ան մեզ արժանի դարձուցած է հաղորդակից ըլլալու իր փառքին: Այս գիտակցութեամբ մենք պէտք է ապրինք, մտածենք ու գործենք, իբրեւ երկնաքաղաքացիներ՝ երկրի վրայ. իբրեւ այս աշխարհէն ընտրուածներ, բայց ո՛չ այս աշխարհին պատկանողներ: Նիւթը, դրամը, ինչքերն ու հարստութիւնը պէտք է գործածենք որպէս միջոց, կատարելու համար Աստուծոյ կամքը եւ ո՛չ թէ զանոնք կուտակենք՝ մեր սեփական հաճոյքներուն ծառայեցնելու, եւ կամ անոնցմով հպարտանալու, գոռոզանալու եւ վերէն նայելու ուրիշներուն:

Առաքեալը կը թելադրէ, որ «Երկնաւոր բաներու մասին խորհինք եւ ոչ թէ երկրաւոր»: Այլ խօսքով՝ յաւիտենական արքայութեան՝ Քրիստոսի, այնպիսի բաներու մասին՝ որոնք մեզ արժանի կը դարձնեն երանական ու անվախճան կեանքին: Անցողակի, ժամանակաւոր, նիւթական եւ աշխարհիկ բաներով շտարուինք եւ թոյլ շտանք, որ ոեւէ բան մեզ գետնաքարշ դարձնէ. ձերբազատինք այն երեւոյթներէն, որ մեզ աշխարհին կը կապէ: Ջանք ընենք, երկնաւոր կեանքի առաջնահերթութիւնները կիրարկելու մեր առօրեային մէջ: Երկնաւոր բաներու մասին խորհիլ կը թելադրէ, որովհետեւ մտածումները յաճախ կ'ազդեն գործերուն ու աշխատանքներուն վրայ: Հետեւաբար, երբ հաւատացեալը երկնաւոր բաներու մասին կը խորհի, իր գործերը Աստուծոյ հաճելի կ'ըլլան ինչպէս նաեւ՝ մարդօգուտ: Որո՞նք են երկնային բաները, որոնց մասին պէտք է խորհինք. «Բաներ, որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի, ինչպէս նաեւ հեզութիւն, խոնարհութիւն եւ համբերատարութիւն, եւ այլն»:

Արդ, ինչպէ՞ս կ'ապրինք մեր կեանքը: Մեր գործերը ի՞նչ կը վկայեն մեր մասին: Աստուծոյ հնազա՞նդ մարդոց գործեր են, թէ՛ Աստուծոյ անհնազանդ: Մեր կեանքը Աստուծոյ հաճելի պէտք է ըլլայ եւ օգնէ մեզի ամբողջացնելու Քրիստոսի գործը: Ինչո՞ւ, որովհետեւ մենք այս աշխարհին համար մեռանք, որպէսզի Քրիստոսի հետ ապրինք, այն կեանքով, որ Աստուած վերապահած է մեզի: Այո՛, մկրտութեամբ մենք Քրիստոսի հետ թաղուեցանք ու մեռանք աշխարհին ու մեղքին մէջ, ազատագրուելով անոնց իշխանութենէն, եւ մեզ

աշխարհին կապող ամեն կապ խզեցինք: Մեր կեանքը այժմ Քրիստոսի մէջ թաքնուած, կնքուած ու պահպանուած է եւ աշխարհէն ծածուկ կը մնայ, ինչպէս Քրիստոսի փառքը ծածկուած էր իր մարդկային բնութեան մէջ, որ լիովին պիտի յայտնուի իր երկրորդ գալուատին: Նոյնպէս ալ մենք, Քրիստոսի միանալով, անոր փառքը մեր մէջ կը կրենք այնքան ատեն, որ այս աշխարհին մէջ կ'ապրինք, բայց այդ փառքը իր իսկութեամբ պիտի յայտնուի, երբ մեր կեանքը Քրիստոս երկրորդ անգամ յայտնուի:

Ասիկա սակայն ո՛չ թէ ապագայի խոստում մը կամ յոյս մըն է սոսկ, այլ՝ կատարուած իրողութիւն: Քրիստոս ապահոված է մեր փրկութիւնը եւ յարուցած է մեզ հոգեւոր մահուան գերեզմանէն, եւ այս իմաստով, որպէս հաւատացեալներ, առաքեալի թելադրութենէն մեկնած, ամէն օր հարկ է որ Քրիստոսի համար եւ անոր խոստումներուն ակնկալութեամբ ապրինք եւ գործենք:

Միթէ այս ճշմարտութիւններով չստեղծուեցա՞նք Ս. Գրիգոր Լուսաւորիչի կեանքը: Ան էապէս հաղորդուեցաւ Քրիստոսի անձին հետ եւ երբ հաւատքով զայն իր սրտին մէջ կրեց՝ գիտակից անով իր յարութիւն առնելուն, կատարելապէս իր ուշադրութիւնը երկինք դարձուց եւ աւելին՝ ինքզինք երկինքի վերածեց ու իր սրտին մէջ բնակեցուց տիեզերքի Արարիչը: Իր հայեացքը շարժեց անկէ եւ բառին բուն իմաստով, մեռաւ այս աշխարհին համար, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրի այն կեանքով, որ Աստուած վերապահած էր իրեն: Ան Պօղոս առաքեալին նման համոզում կայացուցած էր, որ իրեն համար կեանքը Քրիստոս է, ուստի մեռնիլ՝ այդ կեանքը շահիլ կը նշանակէր: Այդ պատճառով ալ, ան յօժարակամ արհամարհեց աշխարհը եւ նիւթական ամէն ինչ, որ նախապէս շահ նկատած էր, հարստութիւն, հրապոյր, դիրք, պաշտօն, իշխանութիւն եւ հեղինակութիւն, ամէն ինչ վնաս համարեց համեմատաբար այն գերազանց շահին հետ, որ Քրիստոսը ճանչնալ էր: Եւ իրաւամբ ճանչցաւ զայն եւ անոր սիրոյն ալ կամաւորաբար յանձն առաւ գերագոյն զոհողութիւնը, տառապիլ, արհամարհուիլ, անարգուիլ, ծաղրուիլ եւ նոյնիսկ աներեւակայելի ու անտանելի շարշարանքներու ու տանջանքներու ենթարկուելէ ետք, իր Վիրապ նետուիլ՝ մեռնելու եւ մոռացութեան մատնուելու նպատակով: Մահուան գուրը, տանջանքի եւ յուսահատութեան վիրապը, թունալից սողուններով լի վայրը եւ մենակութեան դատապարտող զնտանը փոխակերպուեցաւ կեանքի, հոգեւոր վայելքի ու ցնծութեան, ուրախութեան եւ երջանկութեան, հոգեւոր ազատութեան եւ անդադրուն օրհնագութեան, փառաբանանքի ու Աստուածապաշտութեան մատուոյ: Այնտեղ էր որ մեծ սուրբը փորձարկեց աստուածամերձութիւնը, երբ անմերձեանալի լոյսին մէջ բնակող Աստուածը այցելութեան եկաւ իրեն: Հոն էր որ մահացու սողուններուն փոխարէն շարունակ վայելեց այցելութիւնը երկնային հրեղէն մարմիններուն եւ հաղորդ դարձաւ աստուածային խորհուրդներուն եւ անոնց-

մով առաւել երկնային իմաստութեամբ ու գիտութեամբ լեցունեցաւ, հարստացաւ, զօրացաւ, գեղեցկացաւ, շնորհազարդուեցաւ, յագեցաւ ու կշտացաւ եւ Աստուծոյ ձեռքին մէջ իբրեւ պատրաստ անօթ կազմուեցաւ, օգտագործուելու Տիրոջ համար Հայոց անդաստանին մէջ, որ լուրջ մշակման կը կարօտէր:

Լուսաւորիչ Հայրապետին կեանքի օրինակին ի տես, հարց տանք մեր անձերուն. Իրեն նման արհամարհա՞ծ ենք աշխարհն ու աշխարհին պատկանող փուճ երեւոյթները: «Աշխարհին համար մեռա՞ծ ենք»: Սա կը նշանակէ որ իբրեւ ճշմարիտ հաւատացեալներ, Քրիստոսով յարութիւն առնողներ, այլեւ աշխարհէն ծաւալուող ու մարմնաւոր անվայել հաճոյքներու նկատմամբ ցանկութիւններ պէտք չէ ունենալ, ինչպէս մեռածը որեւէ ցանկութիւն չունենար, եւ մանաւանդ՝ մեր ուշադրութիւնը դարձուցած ենք հոն՝ ուր Քրիստոս կ'ապրի: Այս հասկացողութիւնը մեր երկրաւոր կեանքի մասին տարբեր հեռանկար կը հայթայթէ մեզի:

Ուստի, երկնաւոր բաներու մասին խորհիլ կը նշանակէ կեանքին նայիլ Աստուծոյ հայեացքով եւ փնտռել այն՝ ինչ որ ինք կը փափաքի: Այս մօտեցումը մեզի կու տայ նաեւ նիւթապաշտութեան դէմ պաշտպանուելու դեղաթոյնը:

Այսօր մենք Քրիստոսի մէջ, Քրիստոսով եւ Քրիստոսի համար կ'ապրինք, եւ իր երկրորդ գալուստին, երբ ան իր փառքով յայտնուի, իրեն հետ մենք ալ պիտի փառաւորուինք: Քանի որ Քրիստոս է այդ նորոգութիւնը մեզի պարգեւողը. ինք է քրիստոնեային աճման աղբիւրը, զօրութիւնն ու նպատակը: Ահա թէ ինչո՞ւ պէտք է աւելիով երկնայինին հակինք քան երկրաւորին, որովհետեւ մեր ճշմարիտ փառքը երկինքէն պիտի գայ: Երկրաւոր փառքը անցաւոր, գնայուն ու խաբէական է, մինչ երկնայինը՝ մնայուն: Մենք, Քրիստոսի երկրորդ գալուստին է որ պիտի փոխակերպուինք ու փառակերպուինք:

Այս իմաստով, քրիստոնեայ հաւատացեալը ակնդէտ եւ անհամբեր պէտք է սպասէ Քրիստոսի երկրորդ գալուստին եւ այդ գալուստին յոյսով ապրի ու գործէ: Որովհետեւ «Մենք երկինքի քաղաքացիներ ենք, եւ հոնկէ կը սպասենք որ գայ մեր փրկութիւնը»: Եթէ Քրիստոս է քու կեանքդ, ուրախութիւնդ, ցնծութիւնդ, երջանկութիւնդ, լոյսդ ու խաղաղութիւնդ, յոյսդ ու ապաւէնդ, զօրութիւնդ, սրբութիւնդ, արդարութիւնդ, իրաւունքդ պաշտպանողն ու յաւիտենականութիւնդ, ապա կեանքդ լիովին տարբեր պէտք է ապրիս եւ ամբողջութեամբ այլ կեցուածք պէտք է դրսեւորես քեզի պատահածներուն հանդէպ, ճիշդ ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ ըրաւ:

Յիշենք, երբ Ս. Մկրտարանի Աւագանի ջուրէն դուրս ելանք՝ Քրիստոսի հետ յարութիւն առինք, եւ ամէն անգամ որ կը հաղորդուինք Տիրոջ կենդանարար մարմնով եւ արեամբ, մերժելով այն մեղքերը զորս գործած ենք եւ որոնք մեր նոր բնութեան հակառակ եւ օտար են, եւ փոխարէնը աղօթքով Աստուծոյ հետ կեանքն ապրիլ կը խնդրենք, Աստուած մեզ վեր՝ փառքէ-փառք

կը բարձրացնէ ու իր կենդանի ներկայութեան կանգնեցնելով՝ մեր միջոցով կը ներգործէ, կը հրաշագործէ ու կը կենսաւորէ այն միջավայրն ու շրջապատը, ուր կ'ապրինք ու կը գործենք: Վկայ՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքը:

Այս տօնին առիթով, սա է իմ աղօթքս ու մաղթանքս, Մեծ սուրբին՝ երկրորդ Լուսաւորիչ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին բարեխօսութեամբ, որ Աստուած տայ մեզի այդ լուսաւորումը, գիտակցութիւնը, անդրադարձն ու հոգեւոր պատրաստակամութիւնը, որ մեր Քրիստոսով յարութիւն առած ենք եւ մեր ուշադրութիւնը պէտք է կեդրոնացնենք երկինք, ուր է մեր Տէրը Քրիստոս, եւ մեր ողջ կեանքի ընթացքին, պէտք է երկնային բաներու մասին մտածենք եւ ոչ թէ երկրաւոր: Կ'աղօթեմ, որ Աստուած, երկնային գանձատան դռները լայն բանալով առատօրէն անձրեւէ մեր վրայ իր սէրն ու ողորմութիւնը, մարդոց սրտերուն մէջ եւ ամբողջ երկրի վրայ հաստատէ իր արդարութիւնը, խաղաղութիւնն ու իրաւունքը եւ իր կենդանի Խօսքին մուրճով փշրէ մարդոց քարացած ու անխղճացած սիրտերը եւ փոխարէնը, իր բարի կամքին համաձայն մտեղէն սիրտ տայ մեզի եւ ուղիղ հոգի հաստատէ մեր ներսիդին, որպէսզի մեր կեանքը Աստուծոյ հաճելի կերպով ապրինք:

*

* *

Այս պահուն, որդիաբար իմ եւ Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Իշխանութեան, ժողովականութեան եւ ժողովուրդին, ինչպէս նաեւ այստեղ հաւաքուած բոլորիդ անունով իմ երախտագիտութիւնս կը յայտնեմ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, ինչպէս նաեւ կը շնորհաւորեմ Նորին Սրբութիւնը Կաթողիկոսարանի Ուխտի օրուան առիթով, աղօթելով որ Աստուած արեւշատ եւ քաջառողջ օրեր պարգեւէ անոր, աստուածային իմաստութեամբ, շնորհքով, կարողութեամբ, զօրութեամբ եւ համբերատարութեամբ առաւել եւս գօտեպնդէ անոր սիրտը, հոգին, միտքն ու բազուկները, ինչպէս նաեւ իր Ս. Հոգիի օգնականութեամբ ուժ տայ Հայրապետին, որպէսզի անայլ լայլ շարունակէ իր ուսերուն դրուած թէեւ քաղցր, բայց այնքան ծանր ու դժուարին լուծը կրել՝ ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն մեր եկեղեցւոյ, ի հզօրացումն մեր Հայրենիքին եւ ի բարօրութիւն մեր ժողովուրդին: Ամէն:

ՄԱԿԱՐ ԱՐՔ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմին)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (4.4-9)

«Յիսուս պատասխանեց.- Օրէնքի գիրքին մէջ գրուած է "Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով, որ Աստուած խօսած է"» (Մտ 4.4):

1) Վերեւ ցոյց տուի, թէ բազմաթիւ էին Սատանային կողմէ Յիսուսի կրած փորձութիւնները (Մր 1.13), որոնցմէ երեքը կը յիշէ Մատթէոս: Երեք փորձութիւններուն ալ Յիսուս կը պատասխանէ «Օրէնքի գիրքին մէջ գրուած է» բառերով (Մտ 4.4,7,10): Տէրը իր այս վերաբերմունքով կը սորվեցնէ մեզի, թէ Աստուծոյ խօսքին միջոցաւ է որ պէտք է դէմ դնենք Սատանային ու անոր հնարքներուն: Սատանան մեր թշնամին ըլլալէ առաջ՝ Աստուծոյ թշնամին է, եւ մենք Աստուծոյ թշնամիին՝ Աստուծոյ խօսքին սուրբով միայն կրնանք յաղթել: Պօղոս առաքեալ կը պատուիրէ որ մեր ձեռքը առնենք «Սուրբ Հոգիին սուրբ, այսինքն՝ Աստուծոյ խօսքը» (Եփ 6.17): Աստուածաշունչը մեզի տրուած Աստուծոյ սո՛ւրն է (Եբր 4.12): Եթէ Աստուծոյ խօսքը մեր մէջ ու մեր հետ ըլլայ՝ կը յաղթենք Զարին (Ա.Յհ 2.14):

2) Տէրը իր պատասխանով սորվեցուց մեզի, թէ Աստուծոյ խօսքը հա՛ցն է մեր հոգիներուն, սնո՛ւնդն է մեր սիրտերուն, եւ թէ մեր հոգիներն ու սիրտերը կը մեռնին առանց այս հացին: Մարդը հողէն ստեղծուած ըլլալով՝ ունի նիւթական մարմին, եւ Աստուծոյ պատկերով ստեղծուած ըլլալով՝ ունի աննիւթական հոգի: Մարդուն նիւթական մարմինը՝ նիւթական հացի կարիքը ունի, իսկ անոր աննիւթական հոգին՝ աննիւթական հացի կարիքը, որ Աստուծոյ խօսքն է: Մարդուն հոգին պէտք ունի Աստուծոյ խօսքի հացին որպէսզի կարենայ վերստին ծնիլ (Ա.Պտ 1.23), որպէսզի կարենայ փրկուիլ (Յկ 1.21), եւ որպէսզի կարենայ սրբուիլ, որովհետեւ «ամէն ինչ Աստուծոյ խօսքով եւ աղօթքով կը սրբուի» (Ա.Տմ 4.5):

3) Յիսուս անօթեցաւ, բայց փորձութեան մէջ չի նկատու, իսկ Ադամ ու Եւա առանց անօթեանալու փորձութեան մէջ ինկան: Անոնք իրենց ազատ կամքով ինկան, եւ սա ցոյց կու տայ, որ պահքի ժամանակ եթէ փորձութեան մէջ իյնանք, կամ ընդհանրապէս եթէ փորձութեան մէջ իյնանք, մեր ազատ կամքով կ'իյնանք: Անօթեանալը փորձութիւն չէ, բայց անիկա կրնայ փորձութեան մէջ

իյնալու առիթ հանդիսանալ, ինչպէս պատահեցաւ Ադամին ու Եւային հետ, ճիշդ ինչպէս աղքատ ըլլալը փորձութիւն չէ, բայց ատիկա կրնայ գողութիւն ընելու փորձութեան մղել մարդը:

4) Առաջին Ադամին վստահուեցաւ դրախտին հոգատարութիւնը, բայց ան չկրցաւ հոգ տանիլ իրեն վստահուածին, որովհետեւ Չարին կողմէ գրգռելով կերաւ արգիլեալ ծառին պտուղէն. մինչդեռ երկրորդ Ադամին՝ Քրիստոսի վստահուեցաւ ամբողջ աշխարհին հոգատարութիւնը, եւ ան կրցաւ հոգ տանիլ աշխարհին, որովհետեւ Չարին կողմէ գրգռելով քարը հացի չվերածեց ու չկերաւ: Այս առումով, առաջին Ադամը յաղթուեցաւ Չարին կողմէ, որովհետեւ պահք չպահեց, իսկ երկրորդ Ադամը՝ Քրիստոս, պահք պահեց ու յաղթեց Չարին, որպէսզի սորվեցնէ մեզի թէ պահքով կը յաղթենք Չարին: Պահեցողութիւնը կրնայ սպաննել մեր մէջ նիւթին սէրն ու կապուածութիւնը, իսկ սիրտ մը որուն մէջ մեռած է նիւթին սէրն ու կապուածութիւնը՝ չի կրնար կապուիլ Չարին կողմէ:

«Ապա Սատանան տարաւ Յիսուսը Սուրբ Քաղաք՝ Երուսաղէմ, եւ զայն կանգնեցնելով տաճարի աշտարակներէն մէկուն վրայ, ըսաւ անոր.՝ Եթէ Աստուծոյ Որդի ես, դուն քեզ հոսկէ վար նետէ, քանի Սաղմոսներուն մէջ գրուած է. "Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, եւ քեզ իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցնեն, որպէսզի ոտքդ քարի չգարնուի"» (Մտ 4.5-6):

1) Սատանան չբաւարարուեցաւ մէկ անգամ ու մէկ ձեռով փորձելով Յիսուսը: Ան աւելցուց փորձութեան թիւը եւ փոխեց կերպը: Առաջին անգամ փորձեց Յիսուսի մէջ սէր արթնցնել նիւթական հացի հանդէպ, եւ ձախողեցաւ: Իսկ հիմա կը փորձէ համոզել Տէրը, որ ինքզինք տաճարի աշտարակէն վար նետէ, որպէսզի տեսնէ եթէ երբեք հրեշտակները զինք պիտի բռնեն իրենց ձեռքերուն վրայ: Ինչ կը վերաբերի մեզի, եթէ յաղթենք փորձութեան մը, զգաստ եւ արթուն մնանք, որովհետեւ Չարը պիտի փորձէ այլ փորձութեամբ մը մեզ զգետնել: Հաւատացեալին փորձութիւնները իրենց աւարտին կը հասնին՝ իր երկրաւոր կեանքի աւարտումով միայն:

2) Այս փորձութեամբ, Սատանան ուզեց որ Յիսուս փորձաքարի զարնէ Աստուծոյ պաշտպանարար զօրութիւնն ու հոգատարութիւնը: Ան ուզեց որ Յիսուս ինքզինք տաճարի աշտարակէն վար նետէ, որպէսզի տեսնէ եթէ երբեք Աստուած պիտի ղրկէ իր հրեշտակները՝ իր օգնութեան: Մենք պէտք չունինք փորձելու Աստուծոյ հոգատարութիւնն ու պաշտպանարար զօրութիւնը: Եթէ ուզենք փորձել, պէտք է փորձենք ո՛չ թէ Աստուծոյ հոգատարութիւնն ու պաշտպանարար զօրութիւնը, այլ՝ մեր վստահութիւնը անոր հոգատարութեան ու պաշտպանարար զօրութեան հանդէպ:

3) «Զայն կանգնեցնելով տաճարի աշտարակներէն մէկուն վրայ»: Սո՛ւրբ է մեր Տէրը եւ սո՛ւրբ է անոր տաճարը: Արդ, Սատանան ի՞նչպէս համարձակեցաւ մօտենալ մեր սուրբ Տիրոջ, եւ ի՞նչպէս յանդգնեցաւ սուրբ «տաճարի աշտարակներէն մէկուն վրայ» բարձրանալ: Այս իրողութիւնը մեզի կը յիշեցնէ ու պէտք է յիշեցնէ, թէ Սատանան կրնայ ամենէն սուրբ մարդոց անգամ մօտենալ ու անոնց վրայ յարձակիլ, եւ կրնայ ամենէն սուրբ տեղերը անգամ մուտք գործել: Եթէ Սատանան կրցաւ դրախտ մտնել եւ փորձել Եւան, եւ եթէ կրցաւ սուրբ տաճարի աշտարակներէն մէկուն վրայ բարձրանալ ու փորձել Յիսուսը, ան ուրեմն կրնայ ամէն տեղ մտնել եւ ամէն մարդու փորձել: Ուստի, բնաւ չմտածենք որ եթէ խորանանք Աստուծոյ հետ մեր յարաբերութեան մէջ՝ Սատանան այլեւս պիտի չհամարձակի յարձակում գործել մեր վրայ: Եթէ Զարը յանդգնեցաւ մօտենալ եկեղեցւոյ Գլուխին՝ Յիսուսին, անշուշտ որ պիտի յանդրգնի մօտենալ այդ Գլուխին ենթակայ մարմինին նաեւ, որ հաւատացեալներուն ամբողջութիւնն է: Սատանան ոչ միայն կրնայ տաճարի աշտարակներուն վրայ բարձրանալ, այլ կրնայ նոյնիսկ տաճար մտնել ու հոն նստիլ, ինչպէս կը վկայէ Պօղոս առաքեալ, երբ կը խօսի Նեոին յայտնութեան մասին. «Մինչեւ իսկ Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի եւ ինքզինքին համար պիտի յայտարարէ՝ թէ աստուած է» (Բ.Թս 2.4): Այս տաճարը կրնայ նիւթական տաճարը ըլլալ, բայց կրնայ նաեւ մարդը ինք ըլլալ, քանի մարդը ինք նաեւ կոչուած է Աստուծոյ տաճարը (Ա.Կր 3.16-17, 6.19: Բ.Կր 6.16): Եւ ո՞վ կրնայ ուրանալ որ Սատանան այսօր նստած է Աստուծոյ տաճարը ըլլալու կոչուած շատ մը մարդոց սիրտերու մէջ, իրենք զիրենք հաւատացեալ նկատող շատ մը կեանքերու մէջ:

4) «Դուն քեզ հոսկէ վար նետէ»: Այս բառերը կը պարզեն որ Սատանան կը փափաքի տեսնել անկումը բոլորին, կ'ըսէ Յերոնիմոս: Սատանան կ'ուզէր տեսնել Յիսուսի անկումը, եւ անոր անկումին ընդմէջէն՝ անկումը փրկութեան ամբողջ ծրագիրին: Յիսուս աշխարհ եկաւ վար ինկածը կանգնելու, եւ ահա Սատանան անոր կ'առաջարկէ վար նետուիլ: Եթէ Սատանան աշխատեցաւ Յիսուսը վար ինկած տեսնել, որքա՛ն աւելի պիտի աշխատի մեզ տապալած տեսնել: Սատանային ոտքերուն առջեւ շինալու համար՝ պէտք է Յիսուսի ոտքերուն առջեւ իյնալ:

5) Աստուած մարդիկը կը խոնարհեցնէ՝ որպէսզի յետոյ զանոնք բարձրացնէ, իսկ Սատանան մարդիկը կը բարձրացնէ՝ որպէսզի յետոյ զանոնք վար ձգէ. փաստօրէն, բարձրացուց Յիսուսը, եւ յետոյ ուզեց զայն վար նետուած տեսնել: Աստուած ի՞նչպէս կը խոնարհեցնէ մարդիկը որպէսզի յետոյ զանոնք բարձրացնէ. զանոնք կը խոնարհեցնէ կեանքի նեղութեանց ընդմէջէն, որպէսզի յետոյ զանոնք բարձրացնէ դէպի այն կեանքը ուր չկայ նեղութիւն: Մինչդեռ Սատանան աշխարհիկով կը բարձրացնէ, կը մեծարէ ու կը պատուէ մարդիկը, հուսկ ապա գեհենի կրակին մէջ կը ձգէ:

6) Յիսուս իր աստուածային փառքը ձգելով աշխարհ եկաւ. իսկ հիմա Չարը անոր կ'առաջարկէ որ ինքզինք վար նետէ, որպէսզի իր աստուածային փառքը ցուցադրէ: Բոլոր անոնք որոնք փառք կը փնտռեն՝ Սատանային կողմէ վար ինկած կը համարուին:

7) Հոգեւոր իմաստով, տաճարի աշտարակին վրայ բարձրանալու արարքը, կը ներկայացնէ հաւատքի ու սրբութեան աշտարակը բարձրացածները, որոնց Չարը կը մօտենայ եւ կը փորձէ վար ձգել: Որքան ալ բարձրանանք հաւատքի լեռը՝ կրնանք տապալիլ: Զգո՛յշ ըլլանք: Սատանան քիչ մը կ'ուրախանայ երբ յաջողի մոլորեցնել տակաւին հաւատքը նոր ընդգրկած մարդը, բայց խնճոյք կ'ընէ եթէ յաջողի տապալել սրբութեան ճամբուն մէջ եղողը:

8) Երուսաղէմի տաճարին շրջափակը միշտ խճողուած կ'ըլլար մարդոցմով: Չարը ուզեց որ Յիսուս ինքզինք տաճարի աշտարակէն վար նետէր, որպէսզի ամէն ոք տեսնէր անոր կարողութիւնը եւ փառաւորէր զինք: Ան փորձեց Յիսուսի մէջ երեւելու ցանկութիւնը գրգռել: Երեւիլ ուզող անձը՝ աներեւոյթ Սատանային ձեռքը կ'իյնայ: Երեւիլ ուզող մարդուն կեանքին մէջ Աստուած չի կրնար երեւիլ:

9) Չարը առաջարկեց Յիսուսին վար նետուիլ, քանի ինք չէր կրնար գայն վար նետել: Այս իրողութիւնը ցոյց կու տայ, թէ Սատանային իրաւասութիւնը մեզ փորձելու՝ սահմանափակ է: Ան կրնայ դրդել մեզ որ մեղք գործենք, բայց չի կրնար ստիպել որ մեղք գործենք: Դրդեց Եւան որ ուտէ ծառին պտուղէն, բայց չստիպեց անոր որ ուտէ. Եւա իր ազատ կամքով կերաւ: Դրդեց Դաւիթը որ մարդահամար կատարէ, բայց չստիպեց անոր որ կատարէ. Դաւիթ իր ազատ կամքով մարդահամար կատարեց: Ուստի, եթէ մեղք գործենք՝ յօժարակամ գործած կ'ըլլանք, եւ ոեւէ արդարացում չենք կրնար ունենալ: Հայրերէն մին կ'ըսէ, մենք չենք կրնար թռչուններուն արգիլել որ թռչին մեր գլխուն վերեւ, բայց կրնանք անոնց արգիլել որ բոյն դնեն մեր գլխուն վրայ: Հսել կ'ուզէ, թէ մենք չենք կրնար արգիլել որ շար ոգիները մեր շուրջ դառնան, բայց կրնանք արգիլել անոնց որ բնակութիւն հաստատեն մեր սիրտերուն մէջ:

10) Սատանան պատուիրելէ ետք Յիսուսին որ ինքզինք վար նետէ, յիշեցուց անոր՝ հրեշտակներուն միջոցաւ զինք անվնաս պահելու աստուածային խոստումը. Սատանան Աստուծոյ խօսքին միջոցաւ՝ յարձակում գործեց Աստուծոյ Որդիին դէմ: Այսօր ալ ան իր յարձակումները կը գործէ մեր դէմ Աստուածաշունչին միջոցաւ: Օրինակ, երբ բան մը խնդրենք Աստուծմէ ու չստանանք, ան կը փսփսայ մեր ականջին. «Չէ՞ որ Աստուած ըսաւ թէ ինչ որ խնդրէք իրմէ՝ պիտի տայ ձեզի» (Մտ 7.7): Երբ նեղութիւններէ անցնինք եւ անպաշտպան զգանք, դարձեալ, կը փսփսայ մեր ականջին. «Չէ՞ որ Աստուած խոստացաւ թէ ձեզ պիտի ազատէ ձեր նեղիչներէն»: Եւրն:

11) «Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, եւ քեզ իրենց ձեռներուն վրայ պիտի վերցնեն, որպէսզի ոտնդ քարի չզարնուի»: Այս բա-

ները նաեւ կը յիշեցնեն մեզի, թէ հրեշտակները մեր պահապաններն ու պաշտպաններն են: Իւրաքանչիւր անձ ունի իր պահապան հրեշտակը. Յիսուս այս մէկը յստակ դարձուց երբ ըսաւ. «Ձգո՛յ՛ջ, մի՛ արհամարհե՛ք այս փոքրիկներէն մէկը, գիտցե՛ք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս» (Մտ 18.10): Ուստի անոնք անտարբեր չեն մեր հանդէպ, ինչպէս ոմանք կը խորհին: Անոնք կ'օգնեն որ փրկուինք (Եբր 1.14), եւ կ'ուրախանան երբ դարձի գանք (Ղկ 15.7,10):

12) Յերոնիմոս դիտել կու տայ, թէ Սատանան կը յիշէ Սաղմոսին կէսը, թէ ինչպէս հրեշտակները իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցնեն Մեսիան, եւ սակայն չի յիշեր յաջորդ կէսը, որ ցոյց կու տայ թէ ինչպէս Մեսիան առիւծի ու իծի վրայ պիտի քալէ եւ առիւծի կորիւնը ու վիշապը պիտի կոխկուտէ (Սղ 91.11-13): Սատանան չի յիշեր իր խորտակումը ծանուցող տողերը:

13) Յովհան Ոսկեբերան կ'ըսէ. «Տէր չբարկացաւ երբ Չարը զինք կը փորձէր, այլ բաղդրութեամբ Սուրբ գիրքերուն միջոցաւ խօսեցաւ անոր հետ: ... Այսպէս ընելով, Յիսուս սորվեցուց մեզի, թէ կը յաղթեմք Սատանային ո՛չ թէ հրաշքներ գործելով, այլ՝ համբերութեամբ եւ երկայնամտութեամբ եւ ոչինչ կատարելով ինքնացուցադրութենէ կամ փառասիրութենէ մղուած»:

«Յիսուս ըսաւ անոր.– Դարձեալ, Օրէնքի գիրքին մէջ գրուած է. "Քու Տէր Աստուածդ չփորձես"» (Մտ 4.7):

1) Սուրբ գիրքէն կատարած Սատանային վկայակոչութեան դիմաց՝ Յիսուս իր կարգին վկայակոչութիւն կը կատարէ Սուրբ գիրքէն, սորվեցնելու համար մեզի, թէ երբ Չարը կը պայքարի մեր դէմ մեր իսկ զէնքով՝ Սուրբ գիրքով, ատիկա պէտք չէ մեզ գայթակղեցնէ, կասկածներ յարուցանելով մեր ներսիդին՝ մեր զէնքին՝ Սուրբ գիրքին նկատմամբ, ընդհակառակը, ատիկա պէտք է առիթ ու պատճառ դառնայ որ մենք աւելի ո՛վ կառչինք մեր հոգիի վահանին ու սրտի զէնքին՝ Սուրբ գիրքին, առանց որուն մենք չենք կրնար հանդէս բերել Չարին ստուծիւնը եւ պարտութեան մատնել զայն:

2) «Քու Տէր Աստուածդ չփորձես»: Ներսէս Շնորհալի Հայրապետէն երկու մտածումներ.–

ա) Չարին ուղղուած իր պատասխանով Տէրը կը խրատէ մարդիկը, որ թէկուզ եթէ մէկը առաքինի է, պէտք չէ ինքզինք կամովին մատնէ Չարին փորձութեան, եւ փորձէ զԱստուած ինքնիրեն մտածելով.– Նայիմ Աստուած պիտի օգնէ՞ ինձի, թէ ոչ:

բ) Յիսուս շուզեց աշտարակէն վար նետուիլ եւ հրաշքով մը ազատիլ, որպէսզի սորվեցնէ մեզի, թէ հրաշագործութեամբ չէ որ կրնանք յաղթել Սատանային, այլ՝ խոնարհութեամբ, համբերատարութեամբ, եւ յաղթանակը Աստուծոյ վերագրելով:

3) Երբ Յիսուս կը պատուիրէ զԱստուած շփորձել, իրականութեան մէջ, Աստուծոյ եւ անոր խօսքին վստահելու կոչ մըն է որ կ'ուղղէ մեզի: Պէ՞տք էր Յիսուս ինքզինք տաճարին աշտարակէն վար նետէր ու հրեշտակներուն կողմէ վերցուէր որպէսզի հաւատար Աստուծոյ խօսքին ու խոստումին: Յիսուս «Բու Տէր Աստուածդ շփորձես» իր յայտարարութեամբ, ուզեց սորվեցնել մեզի, թէ պէտք է վստահիլ Աստուծոյ խօսքին ու խոստումներուն՝ առանց փորձաքարի զարնելու զանոնք: Չփորձենք զԱստուած որ մեզ փորձութիւններէ ազատողն է:

4) Տուեալ իր խօսքով Յիսուս կ'արգիլէ փորձել Աստուծոյ հաւատարմութիւնը, անոր սէրն ու կարողութիւնը: Երբ մէկը կը հալածուի Աստուծոյ սիրոյն համար եւ հարցականի տակ կ'առնէ Աստուծոյ սէրը՝ փորձած չ'ըլլար Աստուծոյ սէրը: Երբ մէկը «Աստուած հաւատարիմ է» կ'ըսէ եւ գործի մը կը ձեռնարկէ, նեղութեան մէջ կ'իյնայ եւ Աստուծոյ կը դիմէ ու օգնութիւն չ'ըստանար եւ կը գայթակղի՝ փորձած չ'ըլլար Աստուծոյ հաւատարմութիւնը:

«Աստանան կրկին առաւ տարաւ Յիսուսը շատ բարձր լեռ մը եւ անոր ցոյց տալով աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ անոնց փառքը, ըսաւ. "Այս բոլորը քեզի՛ կու տամ, եթէ երկրպագելով՝ պաշտես զիս"» (Մտ 4.8-9):

1) «Առաւ տարաւ Յիսուսը»: Յիսուս իր կամքին հակառակ շտարուեցաւ բարձր լեռ. ինք թոյլ տուաւ Չարին որ զինք տանի, որպէսզի փորձուի ու յաղթէ անոր: Չարը չի կրնար նոյնիսկ մարդիկը փորձութեան առաջնորդել, եթէ մարդիկ իրենք թոյլ չտան: Սատանան աշխարհի թագաւորութիւններն ու անոնց փառքը նիւթական ձեւով շէր որ ցոյց տուաւ Յիսուսին, այլ՝ խօսքի կամ միտքի խորհուրդներու միջոցաւ: Ոչ թէ անոր մարմինի աչքերուն, այլ՝ միտքի աչքերուն առջեւ էր որ փորձեց ցանկալի դարձնել աշխարհի թագաւորութիւնները եւ անոնց փառքը: Սատանան սովորական երկրպագութիւն չպահանջեց, այլ՝ երեսնիվայր, ինչպէս կը վայելէ միայն Աստուծոյ: Երկրպագութիւն պահանջեց անկէ՝ որուն առջեւ ամէն ծունկ կը ծռի (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

2) «Ցոյց տալով աշխարհի բոլոր թագաւորութիւնները»: Չարը փորձեց երկնաւոր Թագաւորին մէջ՝ երկրաւոր թագաւորութեան սէրը գրգռել: Մե՛ր ալ հետ նոյն բանը կ'ընէ. կը փորձէ մեր մէջ արժարծել աշխարհիկի սէրը, որպէսզի մոռցնել տայ մեզի միւս աշխարհի սէրը՝ երկինքը, որուն համար ստեղծուած ենք:

3) «Եւ անոնց փառքը»: Չարը փորձեց փառքի Աստուծոյն մէջ փառասիրութիւն գրգռել. բայց Քրիստոս ի՞նչպէս կրնար երկրաւոր փառք փնտռել, երբ ինք կամաւորապէս հրաժարած էր իր երկնային փառքէն՝ մեզ առաջնորդելու համար իր երկնային փառքին: Ամէն փառասէր մարդ, թող լաւ գիտնայ, որ Չարը ինքն է որ փառքի սէրը դրած է իր ներսիդին:

4) Չարը կը խոստանայ աշխարհը նուիրել անոնց՝ որոնք կը նուիրուին իր երկրպագութեան ու պաշտամունքին: Արդարեւ, ան կ'ըսէ, թէ աշխարհի բոլոր թագաւորութիւնները իրեն տրուած են, եւ թէ ինք զանոնք կու տայ որու որ ուզէ, պայմանաւ որ երկրպագուի: Անշուշտ երբ աշխարհի թագաւորութիւններուն համար կ'ըսէ՝ «անոնք ինձի տրուած են» (Ղկ 4.5-7), ըսել չ'ուզեր թէ Աստուած ինք զանոնք իրեն տուած է: Ո՛չ: Աշխարհասէր մարդը ինքն է որ իր կեանքով աշխարհը տուած է ու կու տայ Սատանային: Երբ աշխարհիկ թագաւորներ Աստուծոյ կամքը կատարելու փոխարէն Սատանային կամքը կը կատարեն, իրենք զիրենք եւ իրենց թագաւորութիւնները Սատանային յանձնած չե՞ն ըլլար: Երբ մարդը կը սիրէ ու կը գործէ մեղքը, ինքզինք Սատանային յանձնած չ'ըլլար: Քրիստոս Սատանային տալիք շունէր, որովհետեւ ան աշխարհիկ կեանք չապրեցաւ, ուստի սո՛ւտ էր Սատանան երբ անոր ըսաւ. «Այս բոլորը քեզի՛ կու տամ»: Սատանան կրնայ որոշ բան մը կամ բաներ տալ մարդուն, բայց միայն ա՛յն մարդուն որ կ'ապրի ու կը գործէ իր իշխանութեան ներքեւ, բայց Յիսուսի վրայ Սատանան իշխանութիւն չունէր. «Ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն ունի» (Յհ 14.30):

5) «Այս բոլորը քեզի՛ կու տամ»: Սատանան կը խոստանայ տալ մարդուն ինչ որ ան կ'ուզէ, պայմանաւ սակայն որ մարդը պաշտամունք մատուցէ իրեն: Երբ մարդը Սատանային կամքը ընէ՝ Սատանան ալ անոր կամքը կ'ընէ, բայց յետոյ անշուշտ նոյն Սատանան է որ անոր հոգին կ'առնէ երբ անիկա իր մարմինէն բաժնուի, եւ զանիկա գեհե՛նի կրակին մէջ կը նետէ:

6) «Եթէ երկրպագելով՝ պաշտես զիս»: Յիսուս աշխարհ եկաւ մարդկութիւնը առաջնորդելու Աստուծոյ երկրպագութեան ու պաշտամունքին, եւ ահա Սատանան ինքն է որ երկրպագութիւն ու պաշտամունք կը պահանջէ Յիսուսէն:

7) «Պաշտել» բառը Գրաբար լեզուին մէջ կը նշանակէ՝ ծառայել: Սատանան ոչ միայն ձեւական երկրպագութիւն կ'ուզէ Յիսուսէն, այլեւ՝ ծառայութիւն: Աստուծոյ Ծառայէն ծառայութիւն կը պահանջէր, առանց անդրադառնալու որ Աստուծոյ ընտրեալ Ծառան աշխարհ եկած էր մարդկութիւնը ազատագրելու իր ծառայութենէն, մեղքի ծառայութենէն:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 10)

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՉՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ

Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Ծնած է 1918-ին, գաղթականության տարիներուն, Այնթապ: Աւագանի անունն է Արմէն: Ծնողները եղած են կրթական մշակներ եւ երկար տարիներ Այնթապի եւ Հալէպի մէջ մեծ նուիրումով լծուած են սերունդներու դաստիարակութեան նուիրական գործին: Յատկապէս մայրը՝ Մարիամ վարժուհի, 1896 թուականէն նուիրուած է իգական սեռի դաստիարակութեան շնորհընկալ գործին:

Արմէն իր նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի իր ծնողաց հանրածանօթ Արմէնեան Վարժարանին մէջ, ապա շարունակած է 1927-1932 կրթասիրաց Վարժարանին մէջ, ուրկէ վկայուած է որպէս շրջանաւարտ: Նոյն տարին ան դիմած է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը եւ դարձած սան Ժառանգաւորացի:

Երուսաղէմի վանական մթնոլորտին մէջ, իր ուսումը ստանալով, 1936-ին Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ Պատրիարք Թորգոմ Արք. Գուշակեանի:

1939-ին, աւարտելով Ընծայարանի ընթացքը, Պէյրութ մեկնած է հետեւելու համար Աստուածաբանական ուսման, Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Համալսարանին մէջ:

Ան անդամակցելով Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան Ուխտին՝ Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է 1 Յունիս 1941-ին, ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Եղիշէ Արք. Կարոյեանի, եւ վերակոչուած՝ Տ. ԲԱԲԳԵՆ ԱԲԵՂԱՅ: Այնուհետեւ մայրավանքէն ներս, մինչեւ 1946 գրական աշխատասիրութիւններ կատարելով, որպէս ուսուցիչ դասաւանդած է նաեւ դպրեվանքէն ներս եւ ստանձնած՝ Կիրակնօրեայ Դպրոցներու տեսչութիւնը:

1946-ին մեկնած է Միացեալ Նահանգներ՝ համալսարանական ուսման համար: 1950-ին վերադարձած է Անթիլիաս Պսակաւոր Աստուածաբանութեան տիտղոսով:

Միացեալ Նահանգներ գտնուած շրջանին համալսարանական ուսման առընթեր հովուական գործօն իր ծառայութիւնները բերած է գաղութային

հասարակական եւ եկեղեցական աշխատանքներուն: Գարեգին Ա. Կաթողիկոսի թելադրութեամբ, ուսանողութեան շրջանին փորձած է նաեւ մասնագիտանալ Կիրակնօրեայ Դպրոցներու կազմակերպչական աշխատանքներուն մէջ:

Երկու տարի Անթիլիասի Մայրավանքին մէջ մնալէ ետք, 1952-ին հոգեւոր առաքելութեամբ գործուղուած է Միացեալ Նահանգներ, ստանձնելու Ֆիլատելֆիայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը:

1956-1957, մինչեւ իր Գալիֆորնիոյ Առաջնորդ ընտրուելը, Մայրավանքէն ներս ստանձնած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներու Ընդհանուր Տեսչութիւնը:

1956-ի ազգային-եկեղեցական տագնապի օրերուն, հեռացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանական Ուխտէն եւ դարձած՝ միաբան Սրբոյ էջմիածնի:

24 Նոյեմբեր 1957-ին, Ս. էջմիածնի Մայր Տաճարին մէջ Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Երկար տարիներ Ուաշինկթընի (DC) մէջ ստանձնած է Միացեալ Նահանգներու էջմիածնական Արեւելեան Թեմի Միջ-եկեղեցական Յարաբերութեանց ներկայացուցչի պաշտօնը, ուր կնքած է իր մահկանացուն:

Տ. ԳՆԵԼ ԱՐՔ. ՃԵՐԵՃԵԱՆ

Ծնած է 25 Դեկտ. 1915-ին, Ատանա (Կիլիկիա): Աւագանի անունն է Թովմաս: Տարագրութեան ծնողքը գաղթած է Լաթաքիա (Սուրիա), ուր իր նախնական կրթութիւնը ստացած է Ազգ. Սրբոց Յակոբեանց Երկսեռ Վարժարանին մէջ: Փոքր տարիքէն մեծ հօրը եւ մեծ մօրը շունչին տակ սիրած է Հայ Եկեղեցին, ուր սկսած է որպէս դպիր սպասարկել: Դպրոցին մէջ իր ցուցաբերած ուշիմութեան եւ գեղեցիկ ձայնին համար 15 Դեկտ. 1928-ին զրկուած է Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանը:

1929-ին ստացած է Դպրութեան աստիճան, ձեռամբ լուսարարապետ Մեսրոպ Արք. Նշանեանի (ապա Պատրիարք Երուսաղէմի Ս. Աթոռոյ):

Աւարտելէ ետք ժառանգաւորացի քառամեայ շրջանը, 4 Օգոստոս 1934-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ Երուսաղէմի Ս. Աթոռոյ Պատրիարք Թորգոմ Արք. Գուշակեանի:

17 Յունիս 1937-ին Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է ձեռամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Արտաւազդ Արք. Սիրմէեանի, Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ եւ վերակոչուած՝ Տ. ԳՆԵԼ ԱՔԵՂԱՅ:

Այնուհետեւ սկսած է անոր հոգեւոր գործունէութեան շրջանը Բերիոյ Թեմի ենթակայ քաղաքներուն եւ եկեղեցիներուն մէջ, մինչեւ 1941:

Նախ նշանակուած է Աֆրինի, Մէլտան էքպէզի եւ Համայի հոգեւոր հովիւ, ապա 1939-ին՝ հոգեւոր հովիւ Հալէպի Տառտիէ թաղամասին, ուր մեծ հոգածութիւն ցուցաբերած է շրջանին մէջ նոր բացուած շուրջ 500 աշակերտ ունե-

ցող Ազգ. Վարդանեան Վարժարանին, որուն մանկապարտէզի փոքր սրահը պատշաճ կահաւորումով վերածած է մատուռի եւ նախաձեռնած՝ փոքր դըպրաց դասի մը կազմութեան: Այս շրջանին նաեւ ան Սէպիլի Ս. Յակոբ Եկեղեցւոյ թաղականութեան փափաքով, այցելած է տեղւոյն դպրոց-մատուռը, ուր տեղական ուժերով բարեսիրական նպատակներու համար կազմած է քառաձայն երգչախումբ մը:

Ըլլա՛յ Աֆրինի եւ ըլլա՛յ Տաուտիէի մէջ նախաձեռնած է գիշերային դասընթացքներու՝ հայերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ արաբերէն լեզուներու համար, ուր աղքատ ու բանուոր դասակարգի հայ պատանիներ ձրիաբար յագուրդ տուած են իրենց ուսման ծարաւին:

9 Հոկտ. 1940-ին, անդամակցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան Ուխտին եւ Մայրավանք հասած՝ 2 Յուլիս 1941-ին, ստանձնելով դպրապետ-ուսուցչի, տպարանի տեսուչի, ՀԱՍԿ-ի խմբագրութեան պաշտօնները:

14 Փետրուար 1942-ին ստացած է Վարդապետական Գաւազանի իշխանութիւն:

1942-1944 երկու տարիներ յաճախած է Պէյրութի Համալսարանը եւ հետեւած՝ Երաժշտութեան եւ Ընդհ. Եկեղեցւոյ պատմութեան դասընթացքներուն:

8 Դեկտ. 1943-ին Վարդապետական Խաչ կրելու իրաւունք ստացած է, Կաթողիկոսական Տեղապահ Խաչ Արք. Աշապահեանէ:

10 Օգոստոս 1944-ին Մանիշակագոյն Ծաղկեայ Փիլոն կրելու արտօնութիւն ստացած է:

17 Փետրուար 1945-ին նշանակուած է պատուակալ քարոզիչ Պէյրութի Նոր Հաճըն թաղի Ս. Գէորգ Եկեղեցւոյ, ուր երկար տարիներ հովուած, քարոզած եւ հոգեւոր մատակարարութիւն ջամբած է հաւատացեալ ժողովուրդին:

9 Փետրուար 1947-ին Ծայրագնութեան աստիճան ստացած է, ձեռամբ Գարեգին Ա. Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ:

Գնել Ծ. Վարդապետ 1956-ին Ազգային-եկեղեցական տագնապի օրերուն, կապերը խզած է Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին հետ եւ դարձած՝ միաբան Ս. Էջմիածնի:

19 Հոկտ. 1958-ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է Ս. Էջմիածնի մէջ, ձեռամբ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ան իր կեանքի վերջին տասնամեակին, Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ նշանակուած է Առաջնորդական Տեղապահ Դամասկոսի Թեմին:

Ծառայութեան երկար վաստակէ ետք, 2 Սեպտեմբեր 2001-ին, 86 տարեկանին իր մահկանացուն կնքած է, եւ իր յոգնաբեկ աճիւնները հանգչած են Դամասկոսի Ս. Սարգիս Եկեղեցւոյ բակին մէջ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 18)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**Gabriel Quicke, A Spiritual Discovery
of the Christians in the Middle East,
Gompel & Svacina, Belgium, c2020**

(Բացայայտում մը

Միջին Արեւելքի քրիստոնէաներու հոգեւորութեան)

10 դեկտեմբեր 2023-ին, Հոռմի մէջ, բարեկամական ջերմ եւ երկար զրոյցի մը աւարտին, “A Spiritual Discovery of the Christians in the Middle East” հատորը հեղինակը ինծի նուիրեց՝ ընթերցելու եւ տպաւորութիւններս իրեն փոխանցելու խնդրանքով: Իրեն գրելու կողքին, ՀԱՍԿ-ի էջերով մեր ընթերցողները եւս հաղորդ կը դարձնեմ 127 էջերէ բաղկացած այս հատորին ընդհանուր գիծերուն եւ իւրայատկութեան, որոնք կարելոր նպաստ կը բերեն Միջին Արեւելքի քրիստոնէական վկայութեան:

Հեղինակը՝ Հայր Գաբրիէլ Քուիքէ, որ նաեւ արժանացած է Պապին կողմէ շնորհուած “Monsignor” տիտղոսին, պելճիքացի Կաթողիկէ Վարդապետ մըն է եւ 2009-2018-ին եղած է Վատիկանի Միջ-եկեղեցական բաժանմունքի Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու հետ յարաբերութիւններու քարտուղարը: Այս մարզին մէջ, ի պաշտօնէ գործակցած եւ մտերմացած եմ իր հետ: 2008-2009-ին ան ուսուցած եւ ծառայած է Լիբանանի մէջ, այցելած է Միջին Արեւելքի երկիրները եւ մօտէն ճանչցած շրջանի եկեղեցիները: Հոս նաեւ ան մասնագիտացած է ասորերէնի, արաբերէնի եւ իսլամագիտութեան մէջ: Այժմ ան հովուական, ակադեմական ու վարչական պաշտօններ կը վարէ Հոռմի մէջ:

Բացայայտում մը Միջին Արեւելքի քրիստոնէաներու հոգեւորութեան հատորը ունի հետեւեալ բովանդակութիւնը.

- Նախաբան,
- Քրիստոնէութեան ժամանակագրական տախտակ,
- Վեց գլուխ (Ա. Աշխարհագրական դրուածքը, Բ. Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու զանազանութիւնն ու բաժանումը, Գ. Հոգեւոր աւանդութիւն, Դ. Մարտիրոսներու եկեղեցի, Ե. Քրիստոնէաներու դերը Միջին Արեւելքի մէջ, Զ. Արեւմուտքի պատասխանատուութիւնը քրիստոնէաներուն հանդէպ),

- Վերջաբան,
- Եկեղեցիներու ցանկը ըստ անոնց վարդապետութեան,
- Եկեղեցիներու ցանկը ըստ անոնց ծէսին,
- Օգտագործուած աղբիւրներ,
- Հեղինակի կենսագրական:

Նախաբանը կը բացատրէ, թէ հատորը ինչո՞ւ կը կրէ «բացայայտում հոգեւորութեան» եզրը, որ լատիներէն ‘spirare’ (‘to breathe’ – «շնչել») բայէն սերելով անգլերէնի մէջ ‘spirituality’ թարգմանուած է (տե՛ս էջ 9)¹: Ապա, կ’ուրուագծէ գիրքին բովանդակութիւնը: Հեղինակը շեշտադրած է հոգեւորութեան կենսականութիւնը, որովհետեւ «Այս գիրքով կը ջանամ Միջին Արեւելքի քրիստոնեաներուն հոգեւորութիւնը պեղել», կը գրէ ան (էջ 10): Նկատողութեան պէտք է առնել, թէ նեղ իմաստով եկեղեցաբանութիւն մը չի ներկայացներ հատորը, այլ քրիստոնեաներու կեանքին մէջէն եկեղեցիներուն, – թէ՛ նուիրապետական կառոյց եւ թէ՛ Քրիստոսի անունով հաւատացեալներու համատեղում, – հոգեւոր երեսը կը բանայ ընթերցողին:

Առաջին գլուխը, – «Աշխարհագրական դրուածքը», – կը ներկայացնէ Եգիպտոսի, Լիբանանի, Սուրիոյ, Իսրայէլի, Պաղեստինի, Յորդանանի, Թուրքիոյ, Իրաքի եւ Իրանի քրիստոնեաներուն պատմական արմատները, շրջանէն արտագաղթը եւ նորահաստատ երկիրներու մէջ անոնց դիմագրաւած մարտահրաւէրները:

Երկրորդ գլուխը, – «Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու զանազանութիւնն ու բաժանումը», – հաստատելէ ետք, թէ միջ-եկեղեցական շարժումը իր մղիչ ոյժը կը ստանայ Քրիստոսի խնդրանքէն՝ «Կ’աղօթեմ որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես եւ ես քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ, որ դուն ղրկեցիր զիս» (ՅՅ 17.21), կու տայ Արեւելքի ասորի եկեղեցիի, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու (ղպտի, Եթովպացի, էրիթրիացի, հայ [Ս. էջմիածնի Կաթողիկոսութիւն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Երուսաղէմի Պատրիարքութիւն, Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւն], ասորի, հնդիկ), Ուղղափառ եկեղեցիներու, Արեւելեան կաթողիկէ եկեղեցիներու (մարոնի, քաղղէացի, հայ, ղպտի, ասորի, Եթովպացի, ասորի-մալապար [հնդիկ], ասորի-մալանքարա [հնդիկ], յոյն, այլք) պատմականն ու ներկայ վիճակը՝ իւրաքանչիւրին Հոգեւոր Պետին անուան, հաւատացեալներու թիւին եւ հասցէին նշումով:

Երրորդ գլուխը, – «Հոգեւոր աւանդութիւն», – առանձին ենթաբաժինով նախ կ’ամփոփէ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին 2 մայիս 1995-ին հրապարակած

¹ Գիտենք, թէ 5-րդ դարուն երբ մեր Ս. Թարգմանիչ վարդապետները Ս. Գիրքը հայերէնի թարգմանեցին, զայն «Աստուածաշունչ» կոչեցին: Ս. Գիրքը Աստուծոյ շունչը կը բերէ մեզի որպէս անսպառ եւ անփոխարինելի հոգեւոր սնունդ:

‘Orientale Lumen’ («Արեւելեան լոյսը») կոնդակը² եւ ապա յաջորդական ենթաբաժիններով՝ «Արեւելեան աւանդութեան հոգեւոր ժառանգութիւնը» կը մանրամասնէ հետեւեալ հատուածներով. «Ս. Հոգիին դերակատարութիւնը», «Ս. Հոգիին ‘Եկեղեցւոյ հոգին է’», «Ս. Հոգիին հաւատացեալները ի հաղորդութիւն կը բերէ», «Ս. Հոգիին կենարար է», «Ս. Հոգիին ստեղծագործութիւնը կը վերանորոգէ», «Վանականութիւն»: Իսկ վերջին ենթաբաժինով՝ «Աստուածաբանական աւանդութիւններ» կը ներկայացնէ երեք՝ ղպտի-եթովպացի-էրիթրիացի, ասորի-հնդիկ եւ հայ աւանդութիւնները: Օրինակ, Հայ եկեղեցւոյ աստուածաբանական աւանդութեան յատկացուած էջերուն մէջ կը խօսի Ս. Մեսրոպ Մաշտոցի, Հայ Գիրերու Գիւտի, Աստուածաշունչի եւ Եկեղեցւոյ հայրերու հայերէն թարգմանութեան, Ս. Ներսէս Շնորհալիի եւ Ս. Գրիգոր Նարեկացիի մասին, նշելով, թէ 12 ապրիլ 2015-ին Ֆրանսիս Պապը Ս. Գրիգոր Նարեկացիին դասեց Եկեղեցւոյ 36 «Տիեզերական վարդապետներու» կարգին:

Զորրորդ գլուխը,՝ «Մարտիրոսներու եկեղեցի»,՝ կը սկսի պատմական ակնարկով՝ «Առաջին դարու հաւատքի վկաները», ուր երկու սուրբեր կը յիշատակէ՝ Ս. Ինգնատիոս Անտիոքացի, որ գրած է «Ես որպէս ցորենահատիկ պիտի աղացուիմ գազաններուն կողմէ, որպէսզի անարատ հաց ըլլամ Քրիստոսի համար» եւ Ս. Տերտուղիանոս, որ գրած է «Մարտիրոսներու արիւնը Եկեղեցւոյ սերմն է», ապա կը կեդրոնանայ հաւաքական մարտիրոսութեան վրայ եւ «20-րդ դարու ցեղասպանութիւնները» գլխակարգումով լուսարձակի տակ կը բերէ «Հայոց Յեղասպանութիւնը» եւ «Ասորիներու (եւ քաղղէացիներու) ցեղասպանութիւնը», եւ կը փակէ «Արեան միջ-եկեղեցական վկայութիւն»-ով՝ անդրադառնալով մեր օրերուն Միջին Արեւելքի իսլամական արմատականութեան գործած սպանդներուն: «Հայոց Յեղասպանութիւնը» ենթաբաժինէն կը մէջբերեմ կարեւոր տեղեկութիւն մը. «Հայկական հարց»-ին մէջ Վատիկանի ունեցած դերը լաւապէս հասկնալու համար, պէտք է սերտենք 19-րդ դարու աւարտի եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան պատմութիւնը: Ֆրաման Յիսուսեան մը՝ Ճորճ Ռուսսէն ռահվիրայի աշխատանք տարած է այս մարզին մէջ: Ան Վատիկանի արխիւները գիտականօրէն հետախուզելով, Հայոց Յեղասպանութեան առնչուած նիւթերը հրատարակած է: Այս աշխատանքին շնորհիւ, աւելի լաւ գաղափար մը կ’ունենանք Սուրբ Աթոռի դերակատարութեան մասին: Տե՛ս Georges Ruysse, *La questione armena. Vol. 1-7. Documenti dell’archivio segreto vaticano (ASV)*, Valore Italiano, Lilanme, Roma, 2013-2015 եւ Georges Ruysse, *De Hellige Stoel en de Armeense genocide, in Werk voor het Oosten 274 (2015)*» (էջ 63-64): «Արեան միջ-եկեղեցական վկա-

² Հատորը առատ մէջբերումներ ունի Պապերու կոնդակներէն ու քարոզներէն եւ այլ եկեղեցապետներու ու Պապերու փոխ-այցելութիւններու ընթացքին արտասանուած ողջոյնի խօսքերէն եւ ստորագրուած համատեղ յայտարարութիւններէն:

յուրիան» ենթաբաժինին մէջ կը կարդանք. «Այսօր 196 երկիրներու մէջ 300 միլիոն քրիստոնեաներ հալածանքի ենթակայ են» (էջ 71):

Հինգերորդ գլուխը,- «Քրիստոնեաներու դերը Միջին Արեւելքի մէջ», - կը բացուի «Միջ-եկեղեցական յարաբերութիւններ. Կապերու ամրապնդում քրիստոնեաներու միջեւ»-ով, որ ունի երկու ենթաբաժին՝ «10-24 Հոկտեմբեր 2010-ին գումարուած Միջին Արեւելքի մասնաւոր սինոտը» եւ «Ֆրանսիս Պապի միջ-եկեղեցական դերակատարութիւնը», ուր կը վերլուծէ «Միասին քալել, միասին աղօթել եւ միասին գործել» Պապական կոչը: Ապա, «Միջ-կրօնական երկխօսութիւն. Կապերու ամրապնդում իսլամ հաւատացեալներու հետ» ենթաբաժինը, ուր պատմական ենթահողին կը յաջորդեն «Ընդլայնակէս պատճառներ» ու «Հանդիպումի հոգեւորութիւնը» ենթաբաժինները եւ կը փակուի «Արաբ վերածնունդը»-ով:

Վեցերորդ գլուխը,- «Արեւմուտքի պատասխանատուութիւնը քրիստոնեաներուն հանդէպ», - ունի «Քրիստոնեաներու հիւրընկալ ոգին», «Արեւելեան աղօթական կեանքի ճոխութիւնը» եւ «Զօրակցական արտայայտութիւններ» ենթաբաժինները: Վերջինը նաեւ կը ներառէ ակնարկ մը կարգ մը Քրիստոնէական բարեսիրական կազմակերպութիւններու ներկայիս կատարած աշխատանքներուն: Հոս հեղինակը կը յիշէ ծագումով Հայ սուրբ մը՝ Ս. Սերվաս (Saint Servaas), որ Պելճիքայի Լիմպուրկ (Limburg) նահանգի Թոնկըրըն (Tongeren) քաղաքին մէջ մեծարուած է:

Վերջաբանը Եգիպտոսի, Իրաքի, Սուրիոյ եւ Լիբանանի ժամանակակից խմորումները կ'ամփոփէ, կը հարցադրէ «Նոր ապագայի յոյս կա՞յ» եւ կ'եզրափակէ «Նոր արշալոյս»-ով, ուր կը մէջբերէ Օգոստինոս Հայրապետի հետեւեալ յուսատու խօսքը. «Այսօր մեր Փրկիչը ծնաւ, եւ այս իսկ պատճառաւ ճշմարիտ արեգակը ծագեցաւ ամբողջ աշխարհին համար: Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը աստուածանայ»: Ահաւասի՛կ քրիստոնէական վկայութեան ոյժականութիւնը՝ մանաւանդ Ս. Ծնունդի եւ Աստուածայայտնութեան տօնը կանխող այս օրերուն:

Այժմէական է «Բացայայտում մը Միջին Արեւելքի քրիստոնեաներու հոգեւորութեան» հատորը, որ հակառակ շրջանին մէջ մեր հետզհետէ նօսրացող թուաքանակին, գոյատեւելու յոյս կը ներշնչէ մեզի, որովհետեւ կը հաւատանք, թէ «Աստուծոյ Հոգին է որ կեանք կու տայ. մարդս բան մը չի կրնար ընել» (Յհ 6.63):

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՃՄԷՋԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԻՆ
ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

Առաջին բանը որ բնականաբար կ'ուզենք գիտնալ՝ այն է թէ ուրկէ՞ կու գայ մեր եկեղեցական երաժշտութիւնը: Այլ խօսքով՝ ճշդեւ՝ անոր աղբիւրը: Ամէնէն դիւրին պատասխանը եւ բացատրութիւնը, որ այս հարցը դիմագրաւող պատմաբանները կամ երաժշտագէտները տուեր են, այն եղած է՝ որ մեր եկեղեցական երգերը փոխառութիւն եղած են կամ առնուազն ուղղակի ազդեցութիւն կը կրեն ասորական եւ յատկապէս յունական եկեղեցական երաժշտութեան: Դժբախտաբար, այս աժան տեսութիւնը իր պաշտպանները ունեցաւ: Սակայն հակառակ ասոր, շատ մը երաժշտագէտներու վերլուծումներէն ետք բոլորն ալ հաստատեցին թէ մեր եկեղեցական երաժշտութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Հայ ժողովրդական երգին ծնունդն ու զարգացումը, կամ աւելի ճիշդ՝ անոր երկուորեակը կրօնական բովանդակութեամբ եւ տարագով:

Ամէն երգ կը ծնի ժողովուրդին հետ իսկ, անոր նախնական բացազանջութեանց եւ խօսակցական ելեւէջներուն հետ միասին: Բնականաբար Հայ ժողովուրդը կազմող նախնիները ունէին իրենց երգը, որոնցմէ մի քանին հաւանաբար գոյատեւեցին եւ պահուեցան Հայ երգին մէջ: Սակայն Հայ ժողովրդային երգին մասին կարելի է խօսիլ միայն Հայոց կազմաւորման թուականներէն, այսինքն Ն.Ք. Զ. դարէն սկսեալ:

Եթէ անցեալ երթանք, պիտի տեսնենք թէ Գրիգոր Լուսաւորիչ դարձի եկող քուրմերը ընդունեց եւ որպէս քահանաներ ու եպիսկոպոսներ կարգեց անոնց: Հոս կարելի է հետեւցնել, թէ անոնք ալ իրենց կարգին իրենց հետ պիտի բերէին ժառանգ դարձած երգերու տեսակները, որոնք ենթահող պիտի դառնային Քրիստոնէական եկեղեցւոյ երգաստեղծութեան: Հոս պէտք է ըսել, թէ եկեղեցին հեթանոսական երգերը չիւրացուց, այլ անոնց եղանակաւորման հիման վրայ նոր երգեր ստեղծեց:

ՈՐՈՆՔ ԵՂԱԾ ԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՄԷՆԱՀԻՆ ՏԱՐՐԵՐԸ

Բոլոր եկեղեցիներու պատմութիւններէն կը տեսնենք, որ սկզբնապէս արարողութեանց հիմնական մասը կը գրաւեն սաղմոսները, որոնք սկիզբը պարզապէս կը կարդացուէին, բայց շուտով ընթերցումը փոխարինուեցաւ թուերգով եւ ասերգով. Սաղմոսներու այս կէս-եղանակաւոր կամ եղանակաւոր ընթերցումը յատուկ բառով կը կոչուի Սաղմոսերգութիւն: Մեր մէջ հայկական Սաղմոսերգութիւնը սկսաւ Դ. դարուն:

Ե. դարուն սկիզբէն մեզի հասած պատկերին համաձայն, Սաղմոսները ութը կանոններու բաժնուած էին, իրաքանչիւր կանոնը եօթը մասերէ բաղկացած: Իսկ եօթներորդ մասը որ սաղմոսականոնի վերջինը ըլլալուն համար կոչուած է Կանոնագլուխ, կը կատարուէր երգային սկզբունքով մշակուած եղանակով: Սաղմոսերգութեանէն ետք մեր պաշտօներգութեան մաս կազմող առաջին երգերը եղան «Փառք ի բարձունս...»ն ու «Լոյս Զուարթ...»ը:

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԵՐԳԵՐԸ

Իրաքանչիւր Կանոնագլուխի երգեցողութեան կը յաջորդէին մարգարէներէ քաղուած Օրհնութիւններ, եւ որովհետեւ ութը սաղմոսականներ կան, այս օրհնութիւններն ալ թիւով ութը հատ են:

Օրհնութիւնները կ'երգուէին, բայց ոչ անպայման կանոնագլուխներու եղանակով սկսուած ձայնեղանակով: Դժբախտաբար ներկայիս այս օրհնութիւններուն եղանակները չենք գիտեր: Սաղմոսներուն եւ Օրհնութիւններուն կից սկսան երգուիլ սեղմ ծաւալով երգեր, որոնք մարգարէական օրհնութիւններուն կցուած ըլլալուն համար ալ կոչուեցան Կցուրդ: Այս կցուրդները իրենց բովանդակութեամբ յարասութիւն էին: Ասոնց ամէնէն տիպական մնացորդներն են Աւագ Օրհնութիւնները իրենց ամբողջութեամբ: Կցուրդներուն մէջ երաժիշտները իրենք զիրենք աւելի ազատ կը զգային եղանակային գիծը մշակելու, եւ ասիկա միաժամանակ առիթ կ'ըլլար, որ սաղմոսերգութեան միապաղաղութիւնը համեմուի: Շատ հաւանաբար կցուրդները սկսան երգուիլ նոյնիսկ Դ. դարու ընթացքին, թարգմանութեանց ընթացքին եւ նոյնինքն Սաղմոսերգութեան զուգահեռ:

Կցուրդներու ստեղծումով սկիզբ դրուած կ'ըլլայ բնիկ հայկական եկեղեցական երգը: Արդարեւ, Ե. դարու սկիզբը մեր թարգմանիչները, որոնք Աստուածաշունչին հետ մեր եկեղեցական արարողութիւններն ալ հայացուցին հետեւողականօրէն, եղան նաեւ կցուրդներու հեղինակներ եւ մեծ թափով յօրինեցին ամէն տօներու եւ առիթներու պատշաճող նման երգեր, որոնք նաեւ արագ տարածում գտան ժողովուրդին կողմէ: Ե. եւ Զ. դարերուն եկեղեցական մեր երգը կը զարգանայ ազատ կերպով, ամէն ուղղութեամբ եւ բոլոր ձեւերով:

•	Ստորակետ)	Վերադիր, հետ ձգե
•	Միջակետ	~	Խաղ
⋮	Վերջակետ	~	Վերնախաղ, խաղբեր
o	Սուղ, գլոր	~	Ներքնախաղ, աքիվեր, դող
~	երկար, քաշ	~	Քարքաշ
/\	Յեշտ	~	Բենկործ, բենկործա, կործա
\	Բութ, դիր	~	Էկործ, էկործա, խածբեկ, հար, խոզող
~	Պարույկ, բեր	~	Ձակործ, ծակործա, խածլե, հարկործա
o	Ոլորակ, ծոցբեր	~	Վանկ, տակն, մենկործ
✓	Փուշ, հարուկ	~	Փաթութ, հանգույց
/·/·/	Սուր, լարն, առ	~	Յէ, կիսափաթութ
) :)	Թուր	~	Լերկ
~	Խունճ, շերեփ	~	Առանձնատրոպ, հուհայ
o	Ծունկ	~	Քմատրոպ, փաթութ, հուհայ
o o	Ծնկներ, ծնկիկք, ողորմանյակ	~	Ծանրատրոպ
~	Թաշտիկ	~	Թագատրոպ, տագավորատրոպ
~	Թաշտ	~	Բարձրահարեր
~	Ջարկ, կուռ զրեհիկ, առուդիր	~	Վերքաշ
~	Խում, դում	~	Միմնավոր
~	Խոսրովային, քմագարդ	~	Կըտվե
~	Ստորադիր	~	Բազմեղանակ

Կցուղները կանոնի շենթարկուեցան: Երաժշտական քիչ թէ շատ կարողութիւն ունեցող սեւէ մէկը կը գրէր կցուրդ մը կամ երգ մը եւ նայած թէ ի՞նչ տօնի կամ առիթի կը վերաբերի՝ կը բերէր եկեղեցի եւ անձամբ կը կատարէր տուեալ առիթին: Սիրուած եղանակները տարածում կը գտնէին, միւսները՝ ոչ: Ծանօթութեան համար նաեւ ըսենք, թէ առհասարակ տաղաչափութիւնը չէր գործածուէր եկեղեցական երգերու պարագային, որովհետեւ 360 թուականին Լաւողիկիոյ մէջ գումարուած ժողովին ընթացքին արգիլուեցաւ անոնց գործածութիւնը: Եկեղեցական երգը միշտ ալ անհատ հեղինակի մը ստեղծագործութիւնը ըլլալով՝ սկիզբէն իսկ մասնագիտական հանգամանք կը կրէ:

Եօթներորդ դարուն, օրուան Կաթողիկոս՝ Ներսէս Հայրապետ, հրահանգեց Շիրակի Դպրեվանքի Առաջնորդ՝ Բարսեղ Ճոն երաժշտագէտ Վարդապետին, որ հաւաքէ բոլոր շարականները, անոնց մէջէն ընտրէ լաւերը եւ Շարակնոց մը խմբագրէ եւ միայն այդ շարականները սորվին: Բարսեղ Ճոն յանձնարարութիւնը կատարեց եւ այդպիսով մէջտեղ եկաւ իր անունով ճանչցուած «Ճոնընտիր» հաւաքածոն, որ հաւանաբար պաշտօնապէս ալ վաւերացուեցաւ 645 թուականին Դուինի ժողովին մէջ: Ասիկա անշուշտ կարելոր հանգրուան մըն էր եկեղեցական ժամակարգութեան զարգացման մէջ, որովհետեւ այլեւս

այդ երգերը պատահականորեն չէր որ պիտի երգուէին եկեղեցւոյ մէջ, այլ պարտադրաբար՝ որպէս ժամերգութեան մաս: Բայց կայի՞ն արդեօք բոլոր տօներուն եւ օրերուն յատուկ երգեր եւ եղածներն ալ ունէի՞ն որոշ կարգ մը, կամ «կանոն» մը, որուն հետեւէին:

Ո՛չ, չունէինք: Այդ հարցը լուծել փորձեց Հ. դարու առաջին կէսին՝ Ստեփանոս Սիւնեցի, շատ հաւանաբար որոշումովը եւ թելադրութեամբը 720-ին Դուինի մէջ գումարուած ժողովին, որ բարեկարգութեան առաջադրանքը ունէր: Յաջորդ տարիներուն Ստեփանոս ընդունուած շարականները դասաւորեց ըստ ձայներուն եւ տօներուն: Ան իւրաքանչիւր ձայնի եւ տօնի շարականները բաժնեց եւ օրուան ժամերգութեան ընդգրկած սաղմոսներուն համաձայն այդ տեսակներէն կազմեց Կանոնները, որոնցմէ իւրաքանչիւրը կը բաղկանար ութը տեսակներէ. Օրհնութիւն, Հարց-Գործատուն, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Մանկունք, Ճաշու եւ Համբարձի: Ըստ աւանդութեան, Ստեփանոս առաջին անգամ զբաղեցաւ օրհնութիւններու կցուրդներով, եւ անոնցմով կազմեց «Օրհնութիւն» տեսակի առաջին շարքը, որոնք ճիշդ այդ պատճառով ալ ստացան Աւագ Օրհնութիւն կոչումը: Յետագային էր՝ ԺԲ. Դարուն, որ մեծ տօները իրենց բոլոր օրերուն համար յատուկ կանոններ ունեցան եւ նոր կանոններ գրուեցան կարգ մը սուրբերու տօներուն համար: 737 թուականի Աւագ Երկուշաբթի օրը նահատակուեցաւ Գողթնի Խոսրով նախարարին որդին՝ Վահանը: Ըստ աւանդութեան, նահատակին քոյրը՝ Խոսրովադուխտ այս առիթով որպէս եղբերեզ երգեց «Ջարմանալի է ինձ...» բառերով հինգ տուն շարական մը, որ յետագային եկեղեցի անցաւ եւ սուրբին յիշատակի օրը կ'երգուի որպէս Մանկունք եւ Համբարձի: Չափազանց հետաքրքրական է նաեւ երգին երաժշտական՝ եղանակային կառոյցը. ԲՁ ծանր եղանակ մըն է, որուն մէջ ԳՁ եւ ԳԿ խառն են:

Ժ.-ԺԱ. դարերուն ո՛չ միայն առատօրէն շարականներ կը ստեղծուին, բայց մանաւանդ նոր տեսակներ եւ ձևեր երեւան կու գան: ԺԲ.-ԺԳ. դարերուն հրապարակ կու գան երաժիշտներ, որոնք անցեալի յօրինումները կ'առնեն եւ անոնց եղանակները կը «ծանրացնեն», այսինքն կը զարդարեն՝ ըստ նոր ժամանակներու ըմբռնումներուն եւ ճաշակին:

Եկեղեցական երաժշտութեան արուեստը ծաղկած է յատկապէս վանական մեծ կեդրոններուն մէջ, մանաւանդ Կիլիկիա, ուր կարգ մը վանքեր յատուկ դեր մը ստանձնած էին եկեղեցական երաժշտութեան կալուածին մէջ: ԺԳ. դարու առաջին տասնամեակներուն տեղի կ'ունենայ շարականներու խմբագրութիւնը, այս անգամ արդէն խազագրուած ձևով: Ասիկա տեղի կ'ունենայ Սիսի մէջ, Գրիգոր Խուլ կոչուած մեծ երաժշտագէտի ձեռքով եւ կը վաւերացուի պաշտօնապէս: ԺԲ. եւ ԺԳ. դարերուն շարականները՝ եկեղեցական երգեցողութիւնը իրենց զարգացման բարձրակէտին հասնելէ ետք մէկ անգամէն կարգ կ'առնէ շարականներու մշակումը: Արդէն եկեղեցին ալ իր

դռները կը փակէր, ժե. դարուն, ժամակարգութեան մէջ ոեւէ նորութեան դիմաց շարականագրութիւնը կը դադրի շուտով:

Ժողովուրդը երգի որոշ տեսակներ կ'երգէր ուրոյն ձայնեղանակներով.- Այսպէս՝ աշխատանքի երգերը, մասնաւորաբար Հոռովելները իրենց ուրոյն ձայնը ունէին (ԳՁ) սուգի կամ ողբի երգերը՝ իրենց յատուկը (ԲՁ-ԳԿ խառն), եւայլն...: Հեթանոսական Հայաստանի երաժշտութեան տեսութիւնը ՉՈՐՍ ԳԼԽԱԻՈՐ ՁԱՅՆԵՂԱՆԱԿՆԵՐ կը ճանչնար: Այս շորս ձայներուն ծագումը կը բացատրուէր տարրապաշտական հասկացողութեամբ, որպէս թէ՛ առաջին ձայնը հողէն ծագած ըլլար, երկրորդ ձայնը՝ ջուրէն, երրորդ ձայնը՝ օդէն եւ չորրորդ ձայնը՝ կրակէն:

Այս շորս ձայնի դրութիւնը բոլոր արեւելեան ժողովուրդներուն յատուկ եղած է: Չմոռնալ նաեւ, որ նոյնիսկ յետոյ եւ մինչեւ հիմա՝ մեր ութը ձայներուն մէջ այս շորսը կը համարեն ԲՈՒՆ, իսկ միւսները՝ ԿՈՂՄ:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ ձեռնարկեցին եկեղեցական ժամակարգութեան լրիւ հայացման: Կազմակերպեցին ՈՒԹԸ ՁԱՅՆԻ դրութիւնը, որ ուրիշ եկեղեցիներու մէջ ալ ընդունուած է: Եղանակները տասը ձայներու բաժնեց, յաւելեալ երկու ձայները կը կարծուին ստեղի կոչուած ձայները պիտի ըլլան, որոնք ԲԿ եւ ԴԿ ձայներու անուններով հասած են մեզի: Ստեղի կը նշանակէ բազմաստեղ, բազմաճիւղ: Ասոնք եղանակներու ծանրագոյն տեսակներն են: ԱՁ եղանակը տիրապետող ձեւով հանդէս կու գայ նաեւ այլ ձայներու մէջ (ԲԿ, ԴՁ, ԴԿ), ԲՁ-ն խառն է ԳՁ եւ ԴԿ-ին, իսկ այս վերջինները համեմատաբար ամէնէն աւելի համապատասխան եւ այսօրուան նոյնանուն ձեւերուն: Է. դարէն վկայութիւն ունինք, թէ Ս. Սահակ գրած է Օրհնութիւն շարականներուն յաջորդող 4 քարոզները, ԳՁ եղանակով: Արդարեւ այսօր ալ այդ քարոզները ամէնուրեք ԳՁ-ով կ'երգուին, բայց ո՛չ պարզ, այլ ԴԱՐՁՈՒԱԾՔ եղանակով:

Նախնադարեան երգն ու երաժշտութիւնը, ինչպէս գրականութիւնը, եղած է բանաւոր, այսինքն՝ բերանացի կատարուած, բերանացի փոխանցուած եւ բերանացի ալ պահուած: Երգը ձայնագրելու կերպը հինին մէջ կը կոչուէր ԽԱՁԱԳՐՈՒԹԻՒՆ: Հայերէն «խագ» բառը կը նշանակէ գիծ: Ուստի ԽԱՁԱԳՐՈՒԹԻՒՆ կը նշանակէ երաժշտական գիրերով ձայնագրութիւն: Խագագրութիւնը այսօրուան երաժշտական ձայնագրութեան պէս կատարեալ դրութիւն մը չէր, մանաւանդ սկզբնական շրջաններուն: Հետեւաբար, սկզբնապէս շատ պարզ խագեր միայն հնարուեցան: Խագերու ծագումը կը կապուի հնդիկներուն: Յոյներ հնդիկներէն առին խագագրութեան գաղափարը եւ սկզբունքը, զայն մշակեցին ու զարգացուցին եւ իրենց միջոցով ալ տարածեցին այն օրերու քաղաքակիրթ աշխարհին մէջ: Կը կարծուի, որ Ը. դարուն էր որ հայկական խագագրութիւնը սկիզբ առաւ, եւ անոր իրականացումը կը կապուի Ստեփանոս Սիւնեցիի: Շարականներու խագագրութեան ամենահին նմոյշները կու գան Ժ. դարէն, աւելի ճոխացած խագերով: ԺԱ. եւ ԺԲ. դարե-

րուն խազագրութիւնը աւելի կատարելագործուեցաւ, յատկապէս մեր սքանչելի եւ մեծ երաժիշտին՝ Ներսէս Շնորհալի Կաթողիկոսի ձեռքով: Կատարելագործուած այդ դրութիւնը թերեւս աւելի բարդ եւ դժուար ըլլալուն համար կոչուեցաւ «Մանրուսումն»: Կոմիտաս Վարդապետ մանրուսման նման ձեռնարկու ուսումնասիրութեամբ գտած է, որ բացի շարականներուն գլխաւոր եղանակներէն, որոնց ընդհանուր թիւը 40-ի կը հասնի, մանրուսման եղանակները 152 տեսակ են:

Խազագրութիւնը շատ ընդհանրացած գործածութիւն ունեցաւ, բայց ժԶ. դարէն սկսեալ գրչագրութեան արուեստին հետ նահանջ ապրեցաւ խազագրութիւնն ալ: Այդ դարէն սկսեալ խազերը կարդացողներուն թիւը զգալիօրէն նուազեցաւ հետզհետէ դարձաւ մի քանի հոգիներու վերապահուած գիտութիւն եւ ժԸ. դարու փակումին՝ խազերու ընթերցանութեան բանալին կորսուած էր արդէն: Խազագրութեան անցեալի փառքին վկայութիւնն են մեզի հասած 2000-է աւելի խազագրուած ձեռագիրներ: Քանի մը բառով ըսենք նաեւ, որ այժմ գոյութիւն ունի ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ մը: Յօրինուած է եւրոպական ձայնագրութեան հիմամբ, երաժշտագէտ Համբարձում Լիմոնճեանի կողմէ: Եօթը նշանագիրները հին հայկական խազերէն առնուած են, բայց անոնց հետ իմաստային ոեւէ կապ չունին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՎՐԴ. ՔԻՒՐԻԻՄԵԱՆ

(Շար. 1)



ՔԱՌԵԱԿ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Երբ թուղթիկ ակնարկով մը դիտենք Հայ Առաքելական Ս. եկեղեցու պատմութիւնը, պիտի տեսնենք թէ Հայ եկեղեցին եւ յատկապէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, միշտ եղած է եւ է՝ իր ժողովուրդի կողքին: Քրիստոսի Ս. եկեղեցին ի սկզբանէ մերժած է ինքզինք սահմանափակել պաշտամունքի եւ ծիսակատարութեան նեղ սահմաններուն մէջ: Այս առումով, Կիլիկեան դարաւոր Աթոռը կարկինը բանալով, ինքզինք բացած է Հայ ժողովուրդին ընդառաջ: Ինչպէս միշտ, այսօր ալ Հայ եկեղեցին գործօն ներկայութիւն է Հայ իրականութեան մէջ, բոլոր մակարդակներուն վրայ՝ թէ՛ ազգային, թէ՛ կրօնական, թէ՛ բարոյական, թէ՛ ընկերային ու տակաւին ինչ-ինչ մակարդակներով, որոնց մասին եթէ ուզենք գրել, հաստատօր հատորներն անգամ պիտի չկարենան մեր փափաքն ու պատկերացումը իրականացնել:

Քրիստոսի օրինակին հետեւելով, Կիլիկեան Ս. Աթոռը դարերով հաւատացած է ու կը հաւատայ, թէ եկեղեցին ինք պէտք է ժողովուրդին երթայ, անոր հետ, անոր մէջ եւ անոր համար ըլլայ, որովհետեւ եկեղեցին ժողովուրդն է եւ ժողովուրդը՝ եկեղեցին: Եկեղեցին ժողովուրդին տանելու կերպերէն մէկն է ընկերային ծառայութիւնը:

Ուղղափառ եկեղեցույ հասկացողութեամբ, ընկերային ծառայութիւնը հիմնընթաց է Ընկերային աստուածաբանութեան (Social Theology) եւ քրիստոնէական կրօնի ծառայութեան ըմբռնումին վրայ, որ կ'արտայայտուի կարիքաւորներուն հանդէպ տաժուած մարդասիրութեամբ եւ բարեգործութեամբ: Այս ծիրին մէջ կը ներառուին հիւանդանոցները, ծերանոցները, յատուկ խնամքի կարօտեալներուն յատկացուած կեդրոնները, եւ այլ մարդասիրական կառույցներ ու կեդրոններ:

Հայ Առաքելական Ս. եկեղեցույ ընկերային ծառայութեան պատմութիւնը կը սկսի Ս. Ներսէս Ա. Մեծ (Պարթեւ) Հայրապետով (352-372): Ան էր, որ առաջին անգամ ըլլալով Հայ ազգի կարիքաւոր զաւակներուն համար հիմնեց անկեղանոցներ, աղքատանոցներ, որբանոցներ, հիւանդանոցներ, ուրկանոցներ, բորոտանոցներ, գողանոցներ եւ այլ մարդասիրական կեդրոններ: Ներսէս Կաթողիկոսին յաջորդները նոյն ոգիով ու նուիրուածութեամբ շարունակեցին այս ծառայական աստուածահաճոյ առաքելութիւնը, զայն հասցնելով մինչեւ մեր օրերը: Այս առումով, հարկ է արձանագրել Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ Նոր Տարուան եւ Քրիստոսի Ս. Մննդեան տօներու նախօրեակին շնորհուած յաջորդական այցելութիւնները՝ Ազունիէի Ազգ. Բուժարան, Ազգ. Մերանոց, «Թռչնոց Բոյն» եւ «Զուարթնոց» Յատուկ Դաստիարակութեան Կեդրոն:

Արամ Ա. Կաթողիկոս իր գահակալութեան առաջին տարիներէն իսկ յատուկ կարեւորութիւն տուած է Ազգ. Բուժարանին: Վեհափառ Հայրապետը

գրեթե ամէն տարի կ'այցելէ Ազգին ա՛յս կեդրոնը: Հայոց Հայրապետին համար այնքա՛ն կարեւոր են այսպիսի ծառայական հաստատութիւնները, որ Հայրապետական Սրբատառ հոշակագրով 2016 տարին հոշակեց «Մառայութեան Տարի»: Առ այդ, Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր 2023-ին, Նորին Սրբութիւնը իր օրհնաբեր այցելութիւնը տուաւ Ազգ. Բուժարան, տօնական բարեմաղթութիւններով ուրախացուց այդ տան բնակիչները, տնօրէնութիւնն ու աշխատակազմը, եւ մօտէն հետեւեցաւ այդտեղ տարուող աշխատանքներուն: Ազգ. Բուժարանին մասին ան կ'ըսէ. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր ծաւալած բազում գործունէութեանց կողմին, յատուկ ուշադրութիւն կը դարձնէ կարիքատու ծերունիին եւ բոլոր անոնց, որոնք կարօտ են ընկերային խնամքի: Բոլոր Հայ տարեցները արժանի են գնահատանքի եւ գուրգուրանքի: Ազգ. Բուժարանը եզակի դերակատարութիւն ունի Սփիւռքի կեանքին մէջ: Շնորհիւ մասնագիտական ու բժախնդիր ճիգի, Ազունիէի Ազգ. Բուժարանը կը շարունակէ իր դրները լայն բանալ կազդուրման կարիք ունեցողներուն դիմաց՝ ինչ ալ ըլլան շրջապատող պայմաններն ու իրողութիւնները»:

Արամ Ա. Կաթողիկոսին ընկերային ծառայութեան աշխատանքներուն մէջ միշտ իւրայատուկ տեղ կը գրաւէ Ազգ. Ծերանոցը: Հայոց Հայրապետին համար այնքա՛ն անհրաժեշտութիւն կը ներկայացնէ Հայ Ազգի երէց սերունդը, որ 2014 տարին հոշակեց «Տարեցներու Տարի»: Առ այդ, Երեքշաբթի, 19 Դեկտեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը հայրական այցելութիւն տուաւ Ազգ. Ծերանոց, ուր ապաստան գտած մամիկներուն ու պապիկներուն Քրիստոսի Ս. Ծնունդը աւետեց, անոնց հետ մտերիմ զրոյց ունեցաւ, եւ մօտէն հետաքրքրուեցաւ հաստատութեան աշխատանքներով: Նորին Ս. օծութիւնը Ազգ. Ծերանոցին մասին կ'ըսէ. «Ազգ. Ծերանոցը ո՛չ միայն հոն բնակող ծերերուն, այլեւ Հայ գաղութի բոլոր զաւակներուն տունն է: Ծերանոց բնակիչ չի՛ նշանակեր լուծած ըլլալ, որովհետեւ այստեղ մեր տարեցները ո՛չ միայն առողջական ու բժշկական խնամք կը ստանան, այլեւ՝ սէր, հոգատարութիւն եւ որդիական գուրգուրանք»:

Վեհափառ Հայրապետին սրտամօտիկ հաստատութիւններէն մէկն է «Թռչնոց Բոյն»ը: Նորին Սրբութիւնը, ամէն տարի՝ անխափան կ'այցելէ այդ տունը: Հայոց Հայրապետը 2015 տարին հոշակեց «100-Ամեակ Հայոց Ցեղասպանութեան», որուն հոշակագիրին մէջ լայնօրէն կ'անդրադառնայ «Թռչնոց Բոյն»ի յոյժ կարեւոր դերին, տեղին եւ նշանակութեան: Առ այդ, Երեքշաբթի, 21 Դեկտեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց «Թռչնոց Բոյն»ի պատասպարուող փոքրիկներուն, ունկնդրեց անոնց հրամցուցած Ամանորեայ եւ Ս. Ծննդեան ցնծագին երգերն ու արտասանութիւնները, եւ իր կողմէ՛ Նոր Տարուան նուէրներ բաշխեց: Նորին Ս. Օծութիւնը «Թռչնոց Բոյն»ի մասին կ'ըսէ. «Մեր ժողովուրդին համար սովորական որբանոց ըլլալէ անդին, «Թռչնոց Բոյն»ը յատուկ նշանակութիւն ունեցող հաստատութիւն մըն է: Մեր ժողովուրդի զաւակներուն հաւաքական յիշողութեան մէջ, յատկապէս Հայոց Ցեղասպանութեան տաճ, ինչ արմատներ նետած է «Թռչնոց Բոյն»ը, որովհետեւ հոն պատասպարուած են Ցեղասպանութեան զոհ դարձած ընտանիքներու հազարաւոր որբերը»:

Ընկերային ծառայութեան իր բեղուն գործունէութեան ծիրէն ներս, Վեհափառ Հայրապետը միշտ եզակի տեղ տուած է «Զուարթնոց» Յատուկ Դաստիարակութեան Կեդրոնին: Հայոց Հայրապետը նմանօրինակ կեդրոններու կարեւորութիւնը շեշտելով, 2020 տարին հռչակեց «Յատուկ Խնամքի Կարօտ Հայորդիներու Տարի», ուր շեշտեց Հայ կեանքին մէջ «Զուարթնոց» Կեդրոնին ունեցած իւրատեսակ ծառայութեան անհրաժեշտութեան: Առ այդ, Երեքշաբթի, 26 Դեկտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց «Զուարթնոց» Կեդրոնի մասնաւոր երեխաները: Աշակերտները Կաթողիկոսարանի պարտէզին մէջ մտերմիկ հանդիպում ունեցան Հայոց Հայրապետին հետ, ուր ներկայացուցին իրենց սորված երգերն ու արտասանութիւնները: Ապա, Վեհափառ Հօր հետ բարձրացան սեղանատուն եւ միասնաբար հատեցին Նոր Տարւան կարկանդակը: Նորին Սրբութիւնը «Զուարթնոց» Կեդրոնի մասին կ'ըսէ. «Զուարթնոց» կեդրոնը եզակի կեդրոն մըն է, որովհետեւ Սփիւռքի այլ գաղութներուն մէջ նման կեդրոններ չունին: «Զուարթնոց» կեդրոնի աշակերտները ունին իւրայատուկ կարողութիւններ, օժտուած են լայն երեսակայութեամբ եւ անսահման համբերութեամբ: Ուստի, հարկ է որ մեր վերաբերումով վստահութիւններ չնշենք անոնց, թէ իրենք մեր կեանքի լուսանցքին չեն պատկանիր, այլ՝ մայր էջին, եւ ամբողջական կերպով մասնակից են մեր համայնական կեանքին»:

Ահաւասիկ քառեակ մը, որ ցոյց կու տայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընկերային ծառայութեան աշխոյժ գործունէութիւնը: Զուր տեղը չէ, որ Հայոց Հայրապետը իր ծրագրուած այցելութիւնները կատարեց Ս. Ստեփանոս նախասարկաւագին եւ նախավկային տօնին մերձաւոր երկու շաբաթներուն ընթացքին: Վեհափառ Հայրապետը գիտէր, թէ այդ շրջանին Ս. Ստեփանոսին մասին բաւականաչափ խօսքեր, պատգամներ եւ գրութիւններ պիտի ներկայացուէին, սակայն ինք նախընտրեց Ս. Ստեփանոսի տօնը գործով, կեանքով եւ ծառայութեամբ քարոզել: Ան առաջին մարտիրոսին նման ընկերային ծառայութեամբ աւելի կը մօտենայ մեր ժողովուրդի զաւակներուն եւ անոնց ցաւերն ու մտահոգութիւնները կը կիսէ: Ան մեծ Սուրբին նման կը հասնի իր հօտի կարիքներուն: Նախասարկաւագին պէս Քրիստոսի գալուստին աւետիսը կը փոխանցէ: Նախավկային նման կ'ուրախացնէ սրտաբեկները, կը զօրացնէ տկարները, կ'արժեւորէ անտեսուածները, կը յիշէ մոռցուածները եւ կ'օգնէ կարիքաւորներուն: Նորին Սրբութիւնը գործով կեանքի կը վերակոչէ Ս. Ստեփանոսի պայծառ յիշատակը:

Քրիստոնէական կրօնքին ու հաւատքին առողջ հասկացողութեամբ, եկեղեցին Քրիստոսի փրկագործական առաքելութիւնը շարունակողն է՝ այս աշխարհին վրայ: Այս իմաստով, Հայ եկեղեցին եւ մանաւանդ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը այս սրբազան առաքելութիւնն է որ կը շարունակէ Հայ Ազգի կեանքին մէջ: Փաստօրէն յիշեալ քառեակը աստուածուսոյց այդ առաքելութիւնն է որ կը պարզէ մեր ժողովուրդին ու պատմութեան դիմաց:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ*

THEOSOPHIA

ԺԻՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ
NEGATIVE THEOLOGY

ՄԻՋՆԱԴԱՐ

Կեղծ-Դիոնիսիոսի կողմէ ներկայացուած, չիշեալ ժխտական Աստուածաբանութեան մտապատկերն ու հայեցակարգը կ'ընդունուի Միջնադարու թէ՛ յունախօս արեւելեան եւ թէ՛ լատինախօս արեւմտեան աստուածաբաններու կողմէ եւ կը հաստատուի, որպէս եկեղեցական ուսմունքի բաղկացուցիչ մէկ կարեւոր մաս:

1. Յովհաննէս Սկոտ էրիուգենա

Յրանսայի մէջ, 9-րդ դարուն կը յայտնուի Կեղծ-Դիոնիսիոսի ձեռագիր մէկ ժողովածուն եւ իռլանդացի փիլիսոփայ-աստուածաբան Յովհաննէս Սկոտ էրիուգենա²⁰ (Johannes Scottus Eriugena) լատիներէնի կը թարգմանէ եւ այդ մասին մեկնաբանութիւն մը կը գրէ: Էրիուգենա եղած է նաեւ ջատագովր ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգին եւ հեղինակը լատիներէնի թարգմանուած "theologia negativa" բառակապակցութեան, որ մեր յօդուածի քննարկութեան գլխաւոր նիւթն է:

Էրիուգենայի համաձայն, Դրական եւ ժխտական Աստուածաբանութիւններու հայեցակարգերը զիրար կ'ամբողջացնեն եւ միայն երեւութապէս հակահիշեր են: Իր կարծիքով, Աստուծոյ դրական բոլոր յատկանիշերը պէտք է փոխաբերաբար հասկնալ, այլ խօսքով, Դրական Աստուածաբանութեան մէջ, «Աստուած այսպէս է» (օրինակ՝ բարի կամ ճշմարիտ է), արտայայտութիւնը

* «Աստուածիմաստութիւն – Theosophia».- Ընդհանուր վերնագիրն է յօդուածաշարքի մը, որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ ՀԱՍԿին մէջ: Նախորդ թիւով սկսած «Ժխտական Աստուածաբանութիւն»ը (Negative Theology), այս թիւով կ'ամբողջանայ:

²⁰ Յովհաննէս Սկոտ էրիուգենա (Johannes Scottus Eriugena, 810-877 թ.)- Իռլանդացի նշանաւոր փիլիսոփայ, աստուածաբան, բանաստեղծ ու թարգմանիչ: Ուշ-դպրականութեան (Scholastics) ներկայացուցիչ, ան մեծապէս ազդուած է Նոր-Պլատոնականութենէն:

պէտք է ընկալուի՝ «Աստուած կարելի է այսպէս անուանել» փոխաբերական ձեւով ու իմաստով, որովհետեւ Աստուած, վերջին հաշուով, «բան մը» (անգլ.՝ Something, գերմ.՝ Etwas) չէ: Այս ժխտումը, սակայն երբեք չարդարացներ դրական հարցումը, թէ ան «ի՞նչ է» ... հարցում մը, որ մարդկային իրականութեան մէջ ընդհանրապէս պատասխան չէ ունեցած եւ չունի, կամ ծայրայեղ պարագային, կարելի է գայն «ոչինչը» անուանել:

Աստուածաբանական այս հայեցակարգի ծիրէն ներս, էրիուզեմա նաեւ կը մեկնաբանէ «ոչինչ»-ն (լատ.՝ nihil, անգլ.՝ Nothing, գերմ.՝ Nichts) աշխարհը ստեղծելու քրիստոնէական վարդապետութիւնը: Էրիուզեմայի համաձայն, այս («ոչինչ»)ն աշխարհը ստեղծելու գաղափարը երբեք կարելի չէ ընկալել ժամանակական եւ տարածական առումներով:-

- Ժամանակական առումով, կարելի չէ ընկալել, որ ստեղծագործութենէն առաջ, Արարիչէն զատ, գոյութիւն ունէին ժամանակը եւ յիշեալ «ոչինչը», այնուհետեւ ժամանակի բովին մէջ եւ արարիչ Աստուծոյ միջոցով, նոյնինքն այս «ոչինչէն» յառաջացաւ աշխարհը:

- Տարածական առումով, կարելի չէ ընկալել, որ ստեղծագործութենէն առաջ, Արարիչէն զատ, գոյութիւն ունէին տարածութիւնը եւ «ոչինչը», զոր պէտք է հասկնալ որպէս ենթախաւ (լատ.՝ substratum), այնուհետեւ Արարիչի միջոցով յիշեալ տարածութեան մէջ եւ յիշեալ «ոչինչէն» (կամ ենթախաւէն) յառաջացաւ աշխարհը:

Նմանօրինակ, ժամանակական եւ տարածական առումներով Աստուծոյ եւ աստուածայինի հանդէպ բոլոր պատկերացումները, էրիուզեմայի համար անհեթեթ ու անիմաստ են: Էրիուզեմայի համաձայն, ամբողջովին կը նոյնացուին՝ ա՛յն «ոչինչը», որմէ Աստուած ստեղծեց աշխարհը եւ այն «ոչինչը» որ նոյնինքն Աստուածն է, իր էութեամբ:

Աւելի ուշ, հռոմէական Լատերանի²¹ (Lateran) 4-րդ եկեղեցական ընդհանուր ժողովին (1215 թ.) միաձայնութեամբ կը հաստատուի, որ ստեղծիչ-արարիչ Աստուծոյ եւ ստեղծուած-արարուած մարդուն միջեւ, ընդհանրապէս կարելի չէ որեւէ նմանութիւն պարզել, ընդհակառակն, անոնց աննմանութիւններն ու տարբերութիւնները շատ աւելի են:

²¹ Լատերան (Lateran).- Հռոմի կեղրոնական քաղաքամասին մէջ գտնուող շրջան, որ Մեծն Կոստանդիանոս Ա. (լատ.՝ Constantinus, 272-337 թ.) կայսրի օրով շրջանը կը դառնար եկեղեցական կալուած, ուր կը գտնուին պապական Սբ. Յովիաննէս տաճարը իր մկրտարանով, որ այժմ Հռոմի թեմի առաջնորդանիստ եկեղեցին է: Ան, մինչեւ 1309 թուական, եղած է նաեւ կաթոլիկ պապերու նստավայրը: Վատիկանէն միայն 5 կմ. հեռու է:

Լատերանի մէջ տեղի ունեցած են 5 եկեղեցական ընդհանուր ժողովներ (լատ.՝ concilium), որոնցմէ մասնակիցներու տեսակէտէն ամենամեծը եղած է Լատերանի 4-րդ ժողովը, 1215 թուականին:

2. Մայստեր Էֆհարտ

Գերման նշանավոր աստուածաբան ու փիլիսոփայ **Մայստեր Էֆհարտ**²² (Meister Eckhart) ժխտական Աստուածաբանութիւնը կը ներկայացնէ իր Ելից (Exodus) Գիրքի մեկնաբանութեան ծիրէն ներս: Ան ցոյց կու տայ, թէ ինչպէ՞ս ժխտման ճանապարհով, բանականութիւնը երթալով կը զարգանայ եւ աւարտին կը հասնի Աստուծոյ հետ միասնութեան ընկալումին:

Մայստեր Էֆհարտի համաձայն.-

- Դրական Աստուածաբանութեան մէջ, բոլոր հաստատումները ու դրական յատկանիշերը, նոյնիսկ եթէ անոնք մարդկային տեսակէտէն կատարելութիւններ ըլլան (ինչպէս օրինակ՝ «ամենագէտը, ամենաբարին ու ամենակարողը»), չեն կրնար Աստուծոյ վերագրուիլ, որովհետեւ անոնք երբեք վաւերական ու ճշգրիտ չեն: Ասոր կողքին պէտք է նշել, որ Աստուծոյ վերագրուած բոլոր դրական յայտարարութիւնները, առնչուած ըլլալով ինչ որ ստեղծուած բանի մը հետ, մաքրութեան (լատ.՝ puritas) տեսակէտէն կը մնան անմաքուր:

- Ժխտական Աստուածաբանութեան մէջ, սակայն, բոլոր ժխտական յայտարարութիւնները կրնան պատշաճ ու տեղին ըլլալ, եթէ անոնք կ'առաջնորդեն Աստուծոյ վրայ կեդրոնացած մտքի մաքրումին: Մայստեր Էֆհարտ կը քննադատէ նաեւ ժխտական յայտարարութիւնները, իրենց լիութեան տեսակէտէն:

Այսպիսով Մայստեր Էֆհարտ կ'եզրակացնէ, որ թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական ուղիները անբաւարար են, որովհետեւ երկու ուղիներն ալ սահմանափակումներ կը դնեն, որոնք իրենց կարգին անհամատեղելի են Աստուծոյ համապարփակ բնոյթին հետ: Այս իմաստով, Աստուծոյ մասին կարելի չէ դրական կամ ժխտական որեւէ յստակ ու զատորոշ յայտարարութիւն ընել: Այլ խօսքով, Աստուած չի կրնար սահմանափակումներ ունենալ եւ ոչ ալ որակական յատկանիշեր:

Էֆհարտի գրութիւններուն մէջ, տիրապետող նիւթ է մարդկային հոգին եւ անոր գործնական կապը, մէկ կողմէ Աստուծոյ հետ, որպէս արարող-ստեղծիչ Աստուած եւ միւս կողմէ Աստուածութեան մը հետ, որ շատ աւելի մօտ է նոր-

²² **Մայստեր Էֆհարտ** (Meister Eckhart, 1260-1328 թ.)- Բուն անունով Էփհարտ ֆոն Հոխհայմ (Eckhard von Hochheim), գերման փիլիսոփայ-աստուածաբան: Ներկայացուցիչ միջին դարական (Scholastics) ժամանակաշրջանի եւ Քրիստոնէական Խորհրդապաշտութեան (Mysticism): Դոմինիկեան միաբան, իր ուսումը ստացած է Քէօլնի մէջ ապա, շրջան մը, ան կարգուած է դասախօս՝ Փարիզի համալսարանին մէջ: Հեղինակ է գերմաներէն եւ լատիներէն բազմաթիւ երկերու: *Մայստեր Էֆհարտ* հաւատաքննութեան (Inquisition) դատարանի մը առջեւ, որպէս *հերետիկոս* (Heretic) կը մեղադրուի, սակայն դատաքննութիւնը դեռ չաւարտած՝ Էփհարտ կը վախճանի:

պլատոնական Առաջնամիակին (յուն.՝ to hen): Էֆհարտի մօտ, այս գործնական կապը ունի խորհրդապաշտական (միստիկ) բնույթ:

Միջնադարու կարեւոր աստուածաբաններէն Մայստեր Էֆհարտ հաւատաքննութեան²³ (Inquisition) դատարանի մը առջեւ կը մեղադրուի, որպէս հերետիկոս²⁴ (Heretic), սակայն դատաքննութիւնը դեռ չաւարտած՝ էքհարտ կը վախճանի:

Մայստեր Էֆհարտի դատապարտութիւնը պիտի տկարացնէր Ժիստական Աստուածաբանութեան ընդհանուր ընթացքը:

3. Նիկոլայոս Կուզանացի

Գերման նշանաւոր աստուածաբան փիլիսոփայ **Նիկոլայոս Կուզանացի**²⁵ (լատ.՝ Nicolas Cusanus), Ժիստական Աստուածաբանութիւնը կը կիրարկէ անսահման, անսկիզբ ու անվերջ Աստուծոյ նկատմամբ, որ «առաւելագոյնն» է եւ երբեք հակադիր չունի, այսինքն իրեն դէմ «նուազագոյն» մը չկայ եւ չի կրնար ըլլալ:

Կուզանացիի համաձայն, Ժիստական Աստուածաբանութիւնը, եթէ մէկ կողմէն ցոյց կու տայ դրականին կասկածելիութիւնը, բայց միւս կողմէն, հետեւողականօրէն, մեզ կ'առաջնորդէ դէպի անորոշը, վերացնելով բոլոր դրական որոշումները:

²³ **Հաւատաքննութիւն** (Inquisition).- Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ 13-րդ դարուն, Եւրոպայի մէջ հիմնուած ատեան, որ կը պայքարէր հերետիկոսութեան դէմ եւ բոլոր այն բաներուն դէմ, որոնք «Եկեղեցին կ'արատաւորէին»: Մինչեւ 18-րդ դար շարունակուած այս դաժան երեսոյթը Կաթոլիկ եկեղեցւոյ պատմութեան ամենամութ ու դատապարտելի էջերէն է:

²⁴ **Հերետիկոս** (յուն.՝ aireticós, լատ.՝ hereticus, անգլ.՝ Heretic, գերմ.՝ Häretiker).- Կրօնա-եկեղեցական եզրոյթ, կը բնութագրէ այն անձը, որ շեղած է կրօնի ճշմարիտ եւ պաշտօնապէս ընդունուած դաւանանքէն ու վարդապետութենէն: Հերետիկոսութիւնը յառաջացած է Քրիստոնէութեան կազմաւորման առաջին դարերուն: Հերետիկոսութեան դէմ պայքարը, տարբեր ժամանակներու մէջ ստացած է տարբեր ձեւեր, հալածանքներէն սկսեալ, մինչեւ պատիժի զանազան տեսակները (բանտարկութիւն, մահապատիժ):

²⁵ **Նիկոլայոս Կուզանացի** (գերմ.՝ Nikolaus von Kues, 1401-1464 թ.)- Լատ.՝ Nicolaus Cusanus, գերման աստուածաբան-փիլիսոփայ, Գերմանիոյ մէջ կը ստանձնէ բազմաթիւ եկեղեցական պաշտօններ եւ կը դառնայ Կաթոլիկ եկեղեցւոյ կարտինալ: Որպէս փիլիսոփայ հետեւած է նոր-պլատոնական ուղղութեան եւ իր գլխաւոր միտքը եղած է հակադրութիւններու լուծումը միասնութեան հայեցակարգի մը մէջ, որ ցոյց կու տայ իր հանդուրժողութեան վսեմ ոգին: Վերածնունդի (Renaissance) *Մարդկայնութիւն* (Humanism) ուղիի գերման առաջին ռահվիրաներէն: Հեղինակ է բազմաթիւ լատիներէն աստուածաբանական ու փիլիսոփայական երկերու, կարեւորներն են.-

- «Երկխօսութիւն թաքուն Աստուծոյ մասին» (1444 թ., Dialogus de deo abscondito),
- «Աստուծոյ որոնումի մասին» (1445 թ., De quaerendo deum),
- «Աստուածտեսութեան մասին» (1453 թ., De visione dei),
- «Տեսութեան գագաթի մասին» (1464 թ., De apice theoriae):

Կուզանացիի համաձայն, Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը ցոյց կու տայ, որ Աստուծոյ էութիւնը մարդոց համար անհասանելի է եւ անհասանելի պէտք է մնայ եւ միայն անոր գոյութեան անհրաժեշտութիւնը կարելի է ապացուցանել: Այլ խօսքով, կատարելագոյն ճշմարտութիւնը անհասանելի ու անճանաչելի կը մնայ մարդկային զգայական ընկալման համար: Եթէ գիտելիքը հիմնուած է որոշ համեմատութիւններու վրայ, սակայն իրերու մշտական փոփոխութիւնը թոյլ չի տար անոնց միջեւ որեւէ ճշգրիտ համեմատութիւն: Իսկ անսկիզբ ու անվերջ Աստուածը, ընդհանրապէս, կարելի չէ համեմատել սկիզբ ու վերջ ունեցող բաներուն հետ, ուրեմն ասկէ կը հետեցնենք, որ Աստուած կը մնայ մարդկային գիտելիքներէն դուրս: Ով որ այս իրողութիւնը հասկնայ եւ իմանայ իր անգիտութիւնը, ան աւելի կը մօտենայ ճշմարտութեան ... Թէեւ անոր չի կրնար հասնիլ, բայց գոնէ կը մօտենայ:

Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի մասին, Նիկոլաս Կուզանացիին եւ Կեղծ-Դիոնիսիոսը ունին հիմնական տարբեր մօտեցումներ: Մինչ վերջինը (Կեղծ-Դիոնիսիոսը) շատ յստակօրէն կը գերադասէ Ժխտական Աստուածաբանութիւնը, առաջինը (Կուզանացին) թէ՛ Ժխտական եւ թէ՛ Դրական Աստուածաբանութիւններ կը նկատէ համահաւասար, բայց հակադիր բեւեռներ: Եթէ այս երկու հակադիր բեւեռները միասնութեան մէջ համընկնին եւ յաղթահարուի իրենց միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնը, այն ատեն կարելի պիտի ըլլայ անասելին շօշափել:

Բիւզանդական կայսրութեան մէջ, Արեւելեան Ուղղափառ Եկեղեցւոյ ծիրէն ներս, Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը, ընդանրապէս, շատ աւելի արձագանգ գտաւ, քան Արեւմուտքի մէջ:

4. Մաքսիմոս Խոստովանող

Յոյն վանական ու աստուածաբան Մաքսիմոս Խոստովանող²⁶ (յուն.՝ Maximos Homologetes) արդէն ընդունած էր Կեղծ-Դիոնիսիոսի կողմէ հնադարուն մշակուած հայեցակարգը, որ պիտի դառնար Ուղղափառ Աստուածաբանութեան հիմնական մէկ մասը:

²⁶ Մաքսիմոս Խոստովանող (յուն.՝ Maximos Homologetes, 580-662 թ.)- Լատ.՝ Maximus Confessor, յոյն վանական ու աստուածաբան, սրբադասուած է Յոյն-Ուղղափառ եւ Գաթաղիկ եկեղեցիներու կողմէ: Շրջան մը ապրած է Քաղկեդոնի (Chalcedon, այսօր՝ Ստանբուլի քաղաքամաս՝ Սկիւտար) վանքին մէջ, որպէս վանահայր: Ազդուած է նոր-պլատոնական փիլիսոփայական ուղղութենէն: Հեղինակ է բազմաթիւ երկերու (90 գրութիւններ):

5. Գրեգորիոս Պալամաս

Աւելի ուշ, 14-րդ դարուն, Ուղղափառ Եկեղեցույ ծիրէն ներս, Ժխտական Աստուածաբանութիւնը կը ստանար իր վերջնական ձեւը, շնորհիւ աստուածաբան Գրեգորիոս Պալամասի²⁷ (յուն․՝ Gregorios Palamas) եւ իր կողմէ հաստատուած աստուածաբանական ուղղութեան, որ իր անունով կը կոչուի Պալամասականութիւն (Palamism):

Պալամաս կը զանազանէր մարդոց համար, սկզբունքօրէն Աստուծոյ անհասանելի ու անճանաչելի էութեան (յուն․՝ ousía) եւ անոր ներգործութեան ուժին (յուն․՝ enérgeiai) միջեւ: (Պալամասի հակառակորդները կը պնդէին, որ Աստուծոյ ստեղծած բնութեանէն դուրս, կան միայն ստեղծուած ազդեցութիւններ):

Պալամասի համաձայն, Աստուած ինքզինք կը բացայայտէ (ինքնաբացայայտում = անգլ․՝ Self-revelation, գերմ․՝ Selbstoffenbarung) կամ ինքզինք ճանաչելի կը դարձնէ այս ներգործութեան ուժի միջոցով, որու օրինակներէն մէկն է աստուածաշնչեան Թաբօրի լոյսը²⁸:

Պալամասի համաձայն, Աստուծոյ էութիւնը եւ անոր ներգործութեան ուժը կարելի չէ անջատօրէն պատկերացնել, որովհետեւ Աստուած լիովին ներկայ է իր իւրաքանչիւր ներգործութեան մէջ:

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՁԱՆ

Ինչպէս Միջնադարուն, նոյնպէս եւ Նոր Դարաշրջանի սկիզբները, Վերածնունդի (Renaissance) անցման շրջանին, փիլիսոփայական մարդկայնութեան (Humanism) ռահմիւրաները եւ եկեղեցական ոլորտի աստուածաբանները, դեռ որոշ չափով վաւերական եւ ընդունելի կը գտնէին, Կեղծ-Դիոնիսիոսի կողմէ մշակուած, Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը:

Նոր Դարաշրջանի ընթացքին այս նիւթին առնչութեամբ յիշարժան փիլիսոփաներն են.-

²⁷ Գրեգորիոս Պալամաս (յուն․՝ Gregorios Palamas, 1296-1359 թ.)- Վախճանումէն 9 տարի ետք սրբադասուած յոյն նշանաւոր աստուածաբան եւ գրող: Արքեպիսկոպոս Թեսալոնիկէի, երկար շրջան մը ապրած է որպէս վանական եւ հետեւած՝ Խաղաղականութեան (Hesychasm), որ հոգեհմայութեան (Spiritualism) տեսակ մըն է: Իր կողմէ հաստատուած աստուածաբանական ուղղութիւնը կը կոչուի Պալամասականութիւն (Palamism):

²⁸ Թաբօրի լոյս (Tabor Light).- Փալիլիայի Թաբօր լեռան վրայ, Յիսուսի երեք առաքելներուն (Պետրոսի, Յակոբոսի եւ Յովհաննէսի) կողմէ տեսնուած լոյսը, կը նկատուի Աստուծոյ ներգործութեան ուժի մէկ օրինակը, որ նոյնիսկ Յիսուսի այլակերպութիւնն է (յուն․՝ metamórfhosis, անգլ․՝ Transformation, գերմ․՝ Verklärung) է: Թաբօրի լոյսը նշուած է Նոր Կտակարանի մէջ.- Մատթէոս 17/1-6, Մարկոս 9/2-8, Դուկաս 9/28-36:

1. Ճ. Միրանդոլա

Իտալացի փիլիսոփայ **Ճ. Միրանդոլա**²⁹ (Giovanni Pico Della Mirandola), յարաբերականորեն կը մտնենար վերոյիշեալ վաւերականութեան պահանջին: Վերածնունդի Մարդկայնութիւն (Humanism) փիլիսոփայական շարժումի ռահվիրան, առաջին անգամ ըլլալով, հաստատեց մարդու ազատ ինքնորոշման եւ մարդու արժանապատուութեան առնչութիւնը:

2. Մ. Լութեր

Բողոքական եկեղեցույ հիմնադիր, գերման աստուածաբան **Մ. Լութեր**³⁰ (Martin Luther), թէեւ իր գործունէութեան սկզբնական շրջանին կ'ընդունէր ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը, սակայն աւելի ուշ զայն «վտանգաւոր» համարելով՝ կտրականապէս մերժեց ընդունիլ:

3. Ի. Կանտ

Գերման աշխարհահռչակ փիլիսոփայ **Ի. Կանտ**³¹ (Immanuel Kant), իր կրօնի քննադատութեան³² երկին մէջ, ամբողջութեամբ չի մերժեր Աստուծոյ մասին եղած գաղափարներն ու պատկերացումները:

Կանտի համաձայն, սակայն, Աստուծոյ («աշխարհի իմաստուն կառավա-

²⁹ **Ճ. Միրանդոլա** (Giovanni Pico Della Mirandola, 1463-1496 թ.)- Իտալացի փիլիսոփայ: Վերածնունդի Մարդկայնութիւն (Humanism) փիլիսոփայական շարժումի ռահվիրայ: Բարոյագիտութեան առնչուած իր գլխաւոր երկն է՝ «Մարդու արժանապատուութեան մասին» (1496 թ., լատ. բնագիր՝ De hominis dignitate):

³⁰ **Մ. Լութեր** (Martin Luther, 1483-1546 թ.)- Գերման աստուածաբան, Սբ. Օգոստինոսի միաբանութեան վանական, եկեղեցա-կրօնական բարեփոխումներու (Reformation) նշանաւոր ռահվիրայ. հիմնադիր՝ Բողոքականութեան (Protestantism): Ան, առաջին անգամ ըլլալով Աստուածաշունչ մատենաւ թարգմանած է գերմաներէնի: Յայտնի են սկզբնական շրջանի իր բարեկարգչական 95 դրոյթները (Thesis):

³¹ **Իմանուէլ Կանտ** (Immanuel Kant, 1724-1804 թ.)- Գերման աշխարհահռչակ գիտնական փիլիսոփայ. նախահայր՝ Գերմանական Գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան. հիմնադիր՝ Պարտագիտական Բարոյագիտութիւն (Deontological Ethics) տեսութեան: Փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Կանտ հեղինակ է բազմաթիւ երկերու:

³² **Immanuel Kant:** «Կրօնը, լոկ բանականութեան սահմաններուն մէջ».- Գերմ. բնագիր՝ «Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft», 1793, անգլ.՝ «Religion within the Bounds of Bare Reason», Կանտի նշանաւոր այս երկը, կը նկատուի իր առաջին 3 քննադատական երկերէն ետք՝ չորրորդը: Եթէ «Քննադատութիւն՝ զուտ բանականութեան» երկը կը հանդիսանայ Կանտի գլուխ-գործոցը, իր երկերուն մէջ ամենախնդրայարոյցը կը հանդիսանայ «Կրօնը՝ լոկ բանականութեան սահմաններուն մէջ» երկը:

րիչի»³³) մասին բոլոր գաղափարներն ու պատկերացումները ստեղծուած են, որպէսզի բարոյական օրէնքներուն անհրաժեշտ «ազդեցութիւն եւ ուժգնութիւն տրուի»:

Կանտ, որ «Պարտագիտական բարոյագիտութեան»³⁴ (գերմ.՝ “Pflichtethik”, անգլ.՝ “Deontological Ethics”) հիմնադիրը ու ներկայացուցիչը կը նկատուի, կը պնդէ, որ Աստուած, հոգիի անմահութիւն եւ ազատութիւն, այս երեք յոյժ կարեւոր գաղափարները, թէեւ անապացուցելի, բայց անհրաժեշտ նախադրութիւններ (Postulate) են:

Կանտի համաձայն, բարոյականութիւնը (Moral) ինքնին բնօրինակն է, իսկ կրօնը բարոյական պարտաւորութիւնները կը բացատրէ որպէս աստուածային պատուիրաններ (գերմ.՝ Gebot, անգլ.՝ Commandment): Այլ խօսքով, կրօնը կը հետեւի արդէն գոյութիւն ունեցող բնական բարոյական օրէնքին (գերմ.՝ Sittengesetz, անգլ.՝ Moral Law):

Կանտի համաձայն, բանականութեամբ առաջնորդուելով մենք կը հետեւինք պատուիրաններուն, ո՛չ անոր համար, որ անոնք լոկ աստուածային պատուիրաններ են, այլ անոր համար, որ մենք ներքուստ (Immanent) ու բանականօրէն պարտաւորուած ենք: Այս իմաստով, պէտք չէ «ազաւաղել ու խափանել բանականութեան վերջնական նպատակները» ... այլ խօսքով, կարելի չէ հրաժարիլ մարդու բնական բարոյական օրէնսդիր բանականութենէն, միանալու համար Գերագոյն էութեան մը գաղափարին:

Կանտ, թէեւ աշխարհի բոլոր երեւոյթներու ետին, որպէս նախադրեալ կը համարէ Բացարձակը կամ Գերագոյն էութիւնը, սակայն նաեւ կը նշէ, որ այդ՝ կարելի չէ որոշել:

Կանտի վերոյիշեալ գաղափարները նշուած են իր «Կրօնը, լոկ բանականութեան սահմաններուն մէջ» (1793 թ., գերմ. բնագիր՝ “Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft”, անգլ.՝ “Religion Within the Bounds of Bare Reason”) երկին մէջ, որ կը նկատուի քննադատական իր 4-րդ հատորը:

4. Ժ. Դերիդա

Արդի ժամանակներուն, Ժիտական Աստուածաբանութեան հայեցակարգը բոլորովին մերժուած է պահպանողական աստուածաբաններուն կողմէ:

³³ Կանտի յիշեալ մէջբերումները նշուած են իր գլուխ-գործոցը նկատուող երկի, 1787 թուականի Բ. հրատարակութեան մէջ, էջ B-846 / B-847.- «Քննադատութիւն զուտ բանականութեան» (գերմ. բնագիր՝ “Kritik der reinen Vernunft”, կրճատ.՝ KrV, անգլ.՝ “Critique of Pure Reason”):

³⁴ Պարտագիտական բարոյագիտութիւն (գերմ.՝ “Pflichtethik”, անգլ.՝ “Deontological Ethics”).- Բարոյագիտական այս տեսութիւնը մանրամասնօրէն քննարկուած է հեղինակին «ԲԱՐՈՅԱԳԵՏՈՒԹԻՒՆ – փիլիսոփայական ակնարկ» (2021 թ., Անթիլիաս, Բ. հրատարակութիւն) երկին մէջ, հոն՝ էջ 160:

Անոնք կը վկայակոչեն Աստուածաշունչի մէջ նշուած Աստուծոյ մասին եղած բազմաթիւ դրական արտայայտութիւնները եւ կը պնդեն անոնց ճշմարտացիութիւնը ... ճշմարտութիւններ, զորս կարելի չէ վիճարկել, սահմանափակել կամ հերքել: Ասոր կողքին, այդ աստուածաբաններուն համաձայն, ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգով Աստուծոյ հանդէպ հաւատքը (Faith), աստուծային շնորհը (Grace) եւ Աստուծոյ կողմէ եղած փրկութիւնը (Salvation) չի գտներ իր պատշաճ արժեւորումը, որու հետեւանքով ինքնին կրօնն է, որ կը ժխտուի եւ կը յանգի անաստուածութեան (Atheism):

Արդի ժամանակներուն, ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի մասին արտայայտուած են կարգ մը փիլիսոփաներ: Անոնցմէ յիշարժան է ֆրանսացի փիլիսոփայ Ժ. Դերիդա:

Ֆրանսացի ժամանակակից փիլիսոփայ Ժ. Դերիդա (Jacques Derrida), որ հիմնադիրն է Ապակառուցապաշտութիւն³⁵ (Deconstructivism) փիլիսոփայական ուղղութեան, որոշակի նմանութիւն կը տեսնէ ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի եւ իր Ապակառուցապաշտութեան հայեցակարգի միջեւ: Դերիդա կը փորձէ այժմէականացնել ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի մեկնակէտը, լուծելով անոր (= Ժ.Ա.) կրօնին հետ ունեցած աւանդական – սերտ կապը, միաժամանակ ընդհանրականացնելով զայն եւ մասամբ՝ հեռանալով անկէ:

Դերիդա կը մեղադրէ ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը, որ նաեւ հոն (ինչպէս Իրական Աստուածաբանութեան պարագային), բնագանցական (մետաֆիզիկայի = Metaphysics) հաստատումի տարր մը կը գտնէ, ինչ որ երբեք ընդունելի չէ, դիտուած ապակառուցապաշտութեան հայեցակարգի տեսանկիւնէն:

Դերիդայի «տարբերութեան» (“différance”) հայեցակարգը հիմնուած է թէ՛ ոչ-որոշելիութեան (non-determinability) վրայ եւ թէ՛ ոչ-ներկայութեան (non-presence): Դերիդայի համաձայն, բնագանցական «ներկայութիւնը», որ առկայ է ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգին մէջ, պէտք է անպայման ապակառուցուի:

³⁵ Ապակառուցապաշտութիւն (Deconstructivism).- Փիլիսոփայական ուղղութիւն, որու հիմնադիրն է ֆրանսացի փիլիսոփայ Ժ. Դերիդա (Jacques Derrida, 1930-2004 թ.): Այս ուղղութեան մէջ, գրութեան մը ընթերցումն ու վերլուծումը կը տարբերին մեկնագիտական տեսութիւններէն (Hermeneutics) եւ անոնց մեկնաբանական գործընթացէն: Այս իմաստով Դերիդայի գլխաւոր երկն է «Գրութիւնը եւ տարբերութիւնը» (1967 թ., ֆրնս. բնագիր՝ “L'écriture et la différence”, անգլ.՝ “Writing and Difference”) եւ «Տարբերութիւնը» (1972 թ., ֆրնս. բնագիր՝ “La différence”, որ Դերիդայի կողմէ նորարարութիւն մը կը նկատուի, եւ դիտմամբ սխալ ուղղագրութեամբ գրուած է, փոխան “La différence”-ի):

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը, կը բախի որոշ դժուարութիւններու, որովհետեւ առաջին հերթին, զուտ ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի սահմանները կը կայանան անոր մարդաբանական հիմնական որոշման մէջ: Այլ խօսքով, եթէ մարդու նպատակը զԱստուած ճանչնալն ու աստուածայինը իմանալն է, այն ատեն ան կը գտնուի անհաշտ հակադրութեան մը առջեւ: Մէկ կողմէն, ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգով կը փորձուի զԱստուած եւ աստուածայինը զերծ պահել որեւէ ժամանակակից ու տարածքային, ինչպէս նաեւ բանաւոր ու բանական սահմանափակումներէն, միւս կողմէն, սակայն, առկայ է մարդոց համար անդրանցական (Transcendental) Աստուծոյ ու աստուածայինի հաւաքականօրէն, ինչպէս նաեւ բանաւոր ձեւով ու ծիսականօրէն մեծարելու անհրաժեշտութիւնն ու պահանջը:

Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի քննարկման ընթացքին տեսանք, որ զԱստուած ճանչնալու կամ աստուածայինը իմանալու ձգտումի ատեն, եթէ աստուածաբաններն ու փիլիսոփաները կը պնդէին Աստուծոյ մասին ժխտական բնոյթ կրող յայտարարութիւններուն առաւելութիւնը, ասոր կողքին սակայն, անոնք կ'օգտագործէին նաեւ Աստուծոյ մասին դրական բնոյթ կրող յայտարարութիւններ:


Շատերու կողմէ կը քննադատուին նաեւ Աստուծոյ կամ աստուածայինի մասին եղող փոխաբերական, նմանաբանական, այլաբանական կամ խորհրդանշական իմաստ ունեցող բոլոր դրական ու ժխտական արտայայտութիւնները: Այլ խօսքով, փոխաբերութիւններ (Metaphor), նմանաբանութիւններ (յուն.՝ analogía), այլաբանութիւններ (յուն.՝ allegoría) կամ խորհրդանշանիշեր (Symbol), եթէ ինչ որ Աստուծոյ մասին որոշ իրականութիւն մը կը ներկայացնեն, սակայն անոր հետ երբեք չեն համընկնիր: Վերոյիշեալներու օգտագործումը ցոյց կու տայ նաեւ՝ Աստուծոյ անհասկնալիութիւնն ու անհասանելիութիւնը:

Վերջաւորութեան, որպէս եզրակացութիւն, կարելի է հաստատել ու շեշտել, որ ժխտական Աստուածաբանութիւնը ո՛չ Անաստուածութիւն (Atheism) է, որ բոլորովին կը ժխտէ Աստուծոյ գոյութիւնը, ոչ ալ՝ Անճանաչականութիւն (Agnosticism), որ Աստուծոյ գոյութիւնը թէեւ անպատասխան կը ձգէ, սակայն կը փորձէ պատասխան մը գտնել ... այլ, աստուածաբանական անդրադարձութիւն մըն է ան, արդէն առկայ Աստուծոյ մասին դրական խօսքերուն:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՉԵԱՆԱՆ
Գերմանիա


(Շար. 5)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԱԳԻՐՔԻՆ Ե. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հրամանաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ ի յիշատակ Տիրամայր Լուսին Սարգիսեանի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Տպարանէն լոյս տեսաւ մեր եկեղեցւոյ առաջին Ս. Հայրերուն ձեռքով կարգաւորուած եւ Ս. Ներսիս Շնորհալիի կողմէն ճոխացած Արեւագալի եւ Հսկումի Ժամագիրքը: Սոյն գործին աշխարհաբարի վերածումը կը պատկանի լուսահոգի Զարեհ Արք. Ազնաւորեանի:



«ԴԺՈՒՔԷՆ ԴՐԱՆՏ»

Հայոց Յեղասպանութեան եւ կամաւորական բանակի վերաբերեալ Արմենակ Անդրանիկեանի յուշագրութիւնը՝ «Դժոխքէն դրախտ» վերնագրեալ, լոյս տեսաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Տպարանէն: Հատորին խմբագիրն է Վազգէն Ղուկասեան:

Խմբագրական նշումներուն մէջ Ղուկասեան կը գրէ, որ գիրքը պատումն է Անդրանիկեանի կեանքի առաջին երեք տասնամեակներուն (1893-1920) եւ կարեւոր վկայութիւն է նախքան Յեղասպանութիւնը Կարնոյ Քղի գաւառի աւելի քան 30 գիւղերու կենցաղին, քիւրտերու կողքին ապրող հայերու, Յեղասպանութեան մէջ քիւրտերուն դերակատարութեան եւ Կարին-էրզրում ինքնապաշտպանութեան մասին: 15 գլուխներէ բաղկացած հատորը ունի նաեւ երկու քարտէս եւ Անդրանիկեանի ձգած անձնական արխիւէն որոշ լուսանկարներու եւ վաւերագիրներու պատճէններ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ
ԱՖՐԱՄ Բ. ԱՍՈՐԻ ՊԱՏՐԻԱՐԷՆ ՄԻՋԵՒ**

Շաբաթ, 23 Մարտ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին եւ Ն.Ս. Աֆրամ Բ. Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքին միջեւ հանդիպում կայացաւ ասորիներու Աթշանէի վանքին մէջ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան միջ-եկեղեցական բնոյթ ունեցող շարք մը հարցեր:



Այս հանդիպումին, Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեմեզեան եւ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

Յայտնենք, որ նոյն օրը երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Վատիկանի մօտ Լիբանանի Դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէն:

ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՐԸ

Ուրբաթ, 5 Ապրիլ 2024-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս Անթիլիասի Մայրավանքին մէջ ընդունեց այցելութիւնը Ռաֆայել ԻԱ. Հոգեւոր Տիրոջ: Հանդիպումին ներկայ էին նաեւ Հոգեւոր Հայրեր:



Հանդիպումը առիթ հանդիսացաւ Զրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով բարեմաղթութիւններու փոխանակման, ինչպէս նաեւ անդրադարձ կատարելու Լիբանանը, Հայաստանը եւ ընդհանրապէս Հայ ժողովուրդը յուզող խնդիրներուն:



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԴՈԿՏ. ԼՈՒԻՍ ՄՈՐԵՆՕ ՕՔԱՄՓՈՆ**

Ուրբաթ, 19 Ապրիլ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Միջազգային Զրեական Դատարանի Հիմնադիր եւ Առաջին Դատախազ (2003-2012)՝ Դոկտ. Լուիս Մորենո Օքամփոն:

Հանդիպումը առիթ հանդիսացավ լայնօրեն անդրադառնալու Ազրայեյ-ճան-Արցախ-Հայաստան վերջին տարիներու յարաբերութեանց, Արցախի դեմ Ազրայեյճանի 44-օրեայ պատերազմին, Արցախի շրջափակումին եւ անոր հետեւած Արցախի ժողովուրդի բռնազաղթին եւ Արցախի հայութեան դատը միջազգային օրենքի լոյսին տակ Միջազգային Զրեական Դատարան ներկայացնելու կարելութիւններուն: Հանդիպումին ներկայ էր նաեւ դատախազին ընկերացող Միջազգային Ընկերվար Միջազգայնականի Փոխ Նախագահ՝ Մարիօ Նալպանտեան: Ապա անոնք ճաշի հիւրը եղան Վեհափառ Հայրապետին:

Յայտնենք, որ Դոկտ. Օքամփո Անթիլիաս կը գտնուի Նորին Սրբութեան հրաւերով: Ուրբաթ գիշեր ան հրապարակային դասախօսութիւն տուաւ Անթիլիասի Մայրավանքէն ներս եւ Շաբաթ առաւօտ ներկայ գտնուեցաւ Արցախի նուիրուած համագումարի առաջին նիստին:

**ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՎԵՐԱՇԵՇՏԵՑԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԶԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՈՒՐ ՊԱՅԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ**

Երեքշաբթի, 30 Ապրիլ 2024-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին միջեւ տեղի ունեցաւ հեռաձայնային հաղորդակցութիւն մը, որուն ընթացքին անոնք խորհրդակցեցան Հայաստանը յուզող ներկայ խնդիրներուն ու տագնապներուն շուրջ:

Վեհափառ Հայրապետները վերաշեշտեցին Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը ու անվտանգութիւնը ամուր պահելու հրամայականը եւ այս ուղղութեամբ Հայ եկեղեցւոյ անխախտ յանձնառութիւնը: Միաժամանակ, անոնք ընդգծեցին մեր ժողովուրդին ներքին միասնականութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը, յատկապէս ներկայ տագնապալից օրերուն:

Արամ Ա. Կաթողիկոս իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ ընդհանրապէս Ս. Էջմիածնի Մայր Աթոռին՝ հայրենանուէր կեցուածքներուն եւ կատարած աշխատանքներուն համար:

ՏՕՆԱԿԱՆ**ՄԻՋԻՆՔԻ ԱԲԱՆԴԱԿԱՆ ՆՇՈՒՄ՝
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ**

Աւանդութիւն է, որ Արամ Ա. Կաթողիկոս հանդիսապետէ Լիբանանի Հայոց Թեմի Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ կատարուող Միջինքի օրուան Արեւագալի արարողութեան: Արդարեւ, ուրախութիւն էր մեզի համար այս տարի տեսնել վերականգնումը անցած տարիներուն բոլորիս ծանօթ պայմաններու բերումով դադար առած այս աւանդութեան: Առ այդ, Չորեքշաբթի, 6 Մարտ 2024-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ խումբ մը Միաբան հայրերու, Դպրեվանքի տեսչութեան եւ սաներուն, ինչպէս նաեւ ներկայութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Իշխանութեան եւ Հայկական վարժարաններու աշակերտութեան ու հաւատացեալներու, նախագահեց Արեւագալի հոգեպարար արարողութեան եւ տուաւ իր Հայրապետական պատգամը:



Դպրեվանքի սաներուն գեղեցիկ կատարողութեամբ երգուած շարականներու եւ արտասանուած աղօթքներու աւարտին, եկեղեցւոյ դաս ներկայացաւ եւ յանուն Թեմին՝ բարի գալստեան խօսք արտասանեց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան: Սրբազան Հայրը դիտել տուաւ, որ թէկուզ մարտահրաւէրներով լեցուն առօրեայ մը կ'ապրի գաղութը, սակայն հայորդիներ նուիրական կերպով կը շարունակեն իրենց ուսերուն դրուած աւանդը: Այս առիթով Առաջնորդ Սրբազան Հայրը ջերմօրէն ողջունեց բոլոր անոնց, որոնք եկեղեցական ու ազգային կեանքին մէջ ներդրում կ'ունենան եւ գիտակից են այս բոլորը նորահաս սերունդին փոխանցելու հրամայականին. ան յատուկէն գնահատեց Ս. Նշան Մայր եկեղեցւոյ ընտանիքին ջանքերը: Վերջապէս, Շահէ Արքեպիսկոպոս յայտնեց, որ Արամ Ա. Կաթողիկոսին ներկայութիւնը յիշեցում մըն է մեր ժողովուրդին, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, իր շնորհազարդ Հայրապետով, Միաբանութեամբ ու Դպրեվանքով, ամէն տեսակի պայմաններու մէջ, մեր ժողովուրդին կողքին է՝ մեր կեանքը երաշխաւորելու սրբազան առաքելութեամբ. «Ուստի, մեր սրտագին աղօթքն է, որ Ամենաբարին Աստուած ընդ երկար գահակալութիւն պարգեւէ Ձերդ Սրբութեան, Ձեզմով շէն ու պայծառ պահէ Անթիլիասը եւ անփորձանք կեանք պարգեւէ աշխարհասփիւռ մեր ժողովուրդին» եզրափակեց իր խօսքը ու հրաւիրեց Նորին Սրբութիւնը՝ ուղղելու իր պատգամը:

Նորին Ս. Օծութիւնը առաջին հերթին գոհութիւն ու փառք տուաւ Աստուծոյ Միջինքի առթիւ դարձեալ եկեղեցւոյ սրբազան կամարներուն ներքեւ հաւաքուած ըլլալուն համար, որովհետեւ ժողովուրդին հետ ըլլալը հիմքն է եկեղեցւոյ առաքելութեան, իսկ եկեղեցին ինքզինք պէտք է ըլլայ, արտայայտէ ու իրագործէ որպէս առաքելութիւն ու ծառայութիւն ժողովուրդի կեանքին մէջ եւ ժողովուրդի հոգեւոր վերածննդեան ու հաւատքի վերանորոգութեան համար: Այս առումով, ան ընդգծեց, որ նման առիթներ հրաւէր են եկեղեցւոյ, որ իր առաքելութիւնը բարձրագոյն աստիճանի գիտակցութեամբ ու յանձնառութեամբ կատարէ: Ապա, Նորին Սրբութիւնը հայրական ու Հայրապետական օրհնութեամբ ողջունեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրն ու անոր գլխաւորած Ազգ. Իշխանութիւնը:

Վեհափառ Հայրապետի պատգամին առանցքը հանդիսացաւ հաւատքը, առանց որուն անկարելի է մարդ անհատին գոյութիւնը այս աշխարհին վրայ: Ան դիտել տուաւ, որ հին դարերէն սկսեալ որեւէ կրօնքի ու մշակոյթի պատկանող անձ պէտք ունեցած է հաւատքի՝ մանաւանդ մարդ արարածին տկար ու սահմանափակ ըլլալու հանգամանքը նկատի առնելով. այս իմաստով, ան անդրադարձաւ քրիստոնէական հաւատքին եւ ընդգծեց, որ Մեծ Պահոց շրջանը հաւատքի վերանորոգման ու հզօրացման առիթ ու հրաւէր է բոլորիս: Մեր հաւատքի աղբիւրը Աստուած ինքն է, եւ որպէսզի աւելի հասկնալի ու

տոկուն դարձնել մեզի մեր հաւատքը, Ան իր Միածին Որդին աշխարհ դրկեց եւ իր կեանքով ու առաքելութեամբ ճշմարիտ հաւատքի ճամբան ցոյց տուաւ: Քրիստոսի հրաշքները ո՛չ միայն ապացոյց են հաւատքի կենսական դերին, այլ նաեւ երաշխիք են Աստուծոյ բժշկարար ներկայութեան, ըսաւ Վեհափառ Հայրը: Ան նաեւ ընդգծեց, որ Քրիստոսի բառերով՝ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենալը բաւարար է լեռներ շարժելու, այնուամենայնիւ հարկաւոր է ճիշդ կերպով եւ ճիշդ աղբիւրին հաւատալ: Եկեղեցւոյ մէջ արտասանուած Հաւատոյ հանգանակը՝ մեր դաւանանքը, ա՛յս կը փոխանցէ հաւատացեալին: Ան աւելցուց, որ զՔրիստոս ընդունելով՝ կ'ընդունինք նաեւ մեր կեանքին մէջ հաւատքը ամուր պահող Անոր ներկայութիւնը, որուն հանդէպ յատուկ նախանձախնդրութիւն եւ գիտակից յանձնառութիւն ցուցաբերել պէտք է:

Վերջապէս, Նորին Ս. Օծութիւնը հաւատացեալները հրաւիրեց աղօթքի միջոցաւ իրենց հաւատքը հզօրացնելու, որ Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ կը դնէ մեզ ու կ'արտօնէ Անոր ներկայութիւնը ապրիլ: «Ահաւասիկ Մեծ Պահիւն իմաստը. հրաւէր՝ դառնալու Աստուծոյ, վերանորոգելու եւ հզօրացնելու մեր հաւատքը: Կը սպասեմ, որ այս նախանձախնդրութեամբ ու գիտակցութեամբ ապրինք Մեծ Պահիւն, անկէ եկող խորհուրդը եւ պատգամը»:

Արեւագալի ժամերգութեան աւարտին, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին, հոգեւորականաց դաս, Ազգ. Իշխանութիւն, Թաղականութիւն ու դպրեւանեցիներ՝ միասնաբար ունեցան իրենց նախաճաշը՝ աւանդական Ֆուկերոյթը, որ պատրաստուած էր Ս. Նշան Մայր եկեղեցւոյ Տիկնաց յանձնախումբին կողմէ:



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ «ՈՒԽՏԻ ՕՐ»Ը ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՅԱԲ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Մեր եկեղեցւոյ առաջին Հայրապետին եւ երկրորդ լուսաւորիչին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի խոր Վիրապ մուտքի տօնին յաջորդ օր կը նշենք «Անթիլիասի ուխտի օր»-ը: Այս գոյգ առիթով Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Կիլիկիա» թանգարանէն դուրս կը բերէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմամշակութային եկեղեցական հարստութիւններէն տարբեր սուրբերու մասունքներ եւ աշեր:

Շաբաթ, 16 Մարտ 2024-ի առաւօտուն, Դպրեվանեցիներուն Պիքֆայայի Աստուածածին վանքէն Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար ուխտերթէն ետք, Մայրավանքի Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, իսկ երեկոյեան, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ Անթիլիասաբնակ Միաբան հայրերուն ու Դպրեվանքի սաներուն, կատարուեցաւ «Անթիլիասի Ուխտի Օր»ուան առթիւ հսկումի հոգեպարար արարողութիւն:

Եկեղեցական արարողութեան աւարտին, Նորին Սրբութիւնը տուաւ իր Հայրապետական պատգամը, որուն առանցքը հանդիսացաւ արարողութենէն վերցուած «Ս. Լուսաւորիչ մեր ազգը առաջնորդեց դէպի հոգեւոր վերածընունդ» նախադասութիւնը, որուն մէջ խտացած է Լուսաւորիչի հոգեւոր յեղափոխութիւնը՝ մեր ժողովուրդի պատմութեան ամէնէն ճակատագրական մէկ հանգրուանին: Արամ Ա. Կաթողիկոս յատկապէս ընդգծեց, որ Ս. Գրիգոր եղաւ այն մեծ Հայրապետը ու Հոգեւոր Առաջնորդը, որ Քրիստոսի լոյսը բերաւ մեր Հայ ազգի կեանքի մայր էջին, մեր ժողովուրդի կեանքը հաւատքով շաղախեց եւ մեզ առաջնորդեց դէպի հոգեւոր վերածնունդ: Եսայի մարգարէին բառերը որքա՛ն բնորոշիչ են մեզի համար՝ «Խաւարի մէջ քալող ժողովուրդը մեծ լոյս մը տեսաւ» (Ես 9.2), ըսաւ ան:

Բացատրելով հոգեւոր վերածննդեան հասկացողութիւնը՝ ան ըսաւ, որ շատ պարզ, սակայն խորիմաստ այս գաղափարը կը նշանակէ դարձ առ Աստուած: Հոգեւոր վերածնունդը մարդակեդրոն կեանքէն դարձ է դէպի Աստուածակեդրոն կեանք. հոգեւոր վերածնունդը մեղքի տիրապետութենէն բացուիլ է դէպի շնորհքի տիրապետութիւն. այլ խօսքով, հոգեւոր վերածնունդը երկնային շնորհքներով, Աստուածատուր հաւատքով մեր կեանքը լեցնել ու թրծել է եւ Աստուծոյ ներկայութիւնը ապրիլ է, յայտնեց Նորին Սրբութիւնը: Ան

նաեւ կարեւորութեամբ նշեց, որ մեր ժողովուրդը, Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, հրամայական կարիքը ունի հոգեւոր վերածննդեան: Մենք, իբրեւ ազգ, սկսած ենք հեռանալ Աստուծոյ ներկայութենէն: Մեր ազգի կեանքին մէջ սկսած են թափանցել մեր քրիստոնէական հաւատքը ապականող եւ հոգեւոր ու բարոյական արժէքները մեր ընտանիքներէն ու անձերէն հեռացնող տեսակ-տեսակ բարքեր: Ահա, այս ճշմարտութենէն մեկնած՝ մեր ժողովուրդը հրամայական կարիքը ունի հոգեւոր վերածննդեան: Ուստի, մեր եկեղեցին եւ մեր Հոգեւոր հայրերը, իբրեւ հաւատարիմ ժառանգորդները Լուսաւորիչ Հայրապետի մեծ կտակին, կոչուած են շարունակելու Լուսաւորիչով սկսած մեր ազգի հոգեւոր վերածննդեան սրբազան առաքելութեան, ընդգծեց Նորին Սրբութիւնը:

Եզրափակելով իր պատգամը, Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին տօնը մեր ազգի բոլոր զաւակներուն համար ո՛չ միայն յիշեցում է, այլեւ պատգամ է ու մարտահրաւէր մնալու հաւատարիմ Հայրապետին եւ մասնակից դառնալու մեր ազգի հոգեւոր վերածննդեան առաքելութեան:

Եկեղեցական արարողութեան աւարտին, հաղորդուելէ ետք մեր եկեղեցւոյ ծիսակատարութենէն բուրող աղօթքներով ու Հայրապետական պատգամով, հաւատացեալ ուխտաւորներ աղօթքներով եւ սաղմոսասացութիւններով իրենց գիշերը անցուցին եկեղեցւոյ մէջ՝ յաջորդ օրը մասնակցելու Ս. եւ Անմահ Պատարագին եւ Լուսաւորիչ Հայրապետին Աշով տեղի ունենալիք թափօրին եւ ստանալու սուրբին օրհնութիւնը:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՋՈՎ ՄԵԾԱՀԱՆԴԷՍ ԹԱՓՕՐ

Անկրկնելի եւ անփոխարինելու անհուն լիցքաւորում մը կ'ապրինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Աջին «Կիլիկիա» թանգարանէն դուրս բերուելուն եւ մեր ժողովուրդի զաւակներուն անոր օրհնութիւնը ստանալուն եզակի առիթով: Մեծ սուրբին Խոր Վիրապ մուտքը, կրած շարչարանքներուն դէմ իր յաղթանակը եւ Հայաստան աշխարհին մէջ քրիստոնէութեան պետականացումը մեր հաւատքին մէջ ամրանալու հրաւիրող միակ ազգակները չեն միայն, այլ նաեւ՝ սուրբին մասունքները պատմութեան փոթորիկներուն ընդմէջէն հրաշքով գտնուիլը, մեզի հասնիլը եւ սուրբին օրհնութիւնը վայելելը: Փառք կու տանք Աստուծոյ, որ հակառակ մեր բազմաթիւ կորուստներուն, զուրկ չենք մնացած Ս. Հայրապետին օրհնաբաշխ Աջէն:

Ամէն տարի, Լուսաւորիչ Հայրապետին մուտն ի վիրապի եւ Անթիլիասի «Ուխտի Օր»ուան տօներուն առթիւ, հաւատացեալներ, իրենց ծխային եկեղեցիներուն Ս. Պատարագի աւարտին, կ'ուղղուին Կաթողիկոսարան, Անթիլիա-

սի Մայրավանք, ստանալու համար Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ թափօրով բաշխուած սուրբին օրհնութիւնը եւ Ս. Աշով կատարուած օրհնուած ջուրէն բաժին մը:

Առ այդ, Կիրակի, 17 Մարտ 2024-ին, Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ՝ ձեռամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Արք. Աշգարեանի: Եկեղեցական արարողութեան երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը:



Յաւուր պատշաճի խօսուած իր քարոզին մէջ Մակար Սրբազան Հայրը, առաջին հերթին, գոհութիւն տուաւ Աստուծոյ, որ, իբրեւ ուխտաւոր, առիթ շնորհեց մեզի նշելու յիշեալ գոյգ տօները: Թէկուզ սուրբին կրած շարժարանքներուն տօնն է մեր նշածը, սակայն այդ շարժարանքներէն բխած արդիւնքն է մեզ տօնական միջնորդութեամբ պարուրողը, ըսաւ ան եւ մէջբերեց օրուան ճաշու ընթերցումէն Քրիստոսի յարութեամբ մեր յարութիւն ստանալու հատուածը: Ան դիտել տուաւ, որ մեր ապրելակերպը պէտք է ներդաշնակ ու յարիր ըլլայ մեր երկնաքաղաքացիութեան: Այս ըսելով՝ Սրբազան Հայրը յիշեցուց, որ ի գին ամէն ինչի, հարկ է մեր ուշադրութիւնը դարձնել դէպի երկինք՝ մեզ յաւիտենական ժառանգութեան արժանի դարձնող ճշմարտութիւններուն:

Իր քարոզին մէջ, քարոզիչ Սրբազան Հայրը ընդգծեց, որ այսօր Պօղոս առաքեալը մեզի անգամ մը եւս կը հրաւիրէ չմոռնալու, որ եթէ Քրիստոսով յարութիւն առած ենք, ապա Ան մեզ արժանի դարձուցած է հաղորդակից ըլլալու իր փառքին: Ուստի, Սրբազան Հայրը խրատեց շտարուիլ անցողակի ու ժամանակաւոր բարքերով, այլ մեր ուշադրութիւնը սեւեռել երկնաւոր կեանքի առաջնահերթութիւններուն՝ ճշմարիտ, պարկեշտ ու արդար գործերու: Վերջապէս, Սրբազան Հայրը ըսաւ, որ Ս. Մկրտութեան խորհուրդով Քրիստոսի հետ յարութիւն առինք եւ Ս. Հաղորդութեան խորհուրդով կը հաղորդուինք Տիրոջ կենդանարար մարմնով եւ արեամբ: Ս. Հաղորդութեան միջոցով Աստուծոյ հետ ապրիլ կը խնդրենք եւ Աստուած մեզ վեր՝ փառքէ-փառք կը բարձրացնէ ու իր կենդանի ներկայութեան կանգնեցնելով՝ մեր միջոցով կը ներգործէ, կը հրաշագործէ ու կը կենսաւորէ այն միջավայրն ու շրջա-

պատը, ուր կ'ապրինք ու կը գործենք: Վկայ Ս. Գրիգոր Լուսավորիչ մեծ Հայրապետին կեանքը:

Ս. Պատարագի աւարտին, գլխաւորութեամբ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, աւանդական թափօրը կազմուեցաւ՝ բաղկացած Միաբան հայրերէ, Լիբանանի Թեմի Քահանայից դասէ եւ Դպրեվանքի սաներէ ու հաւատացեալներէ: Նորին Սրբութիւնը իր ձեռքին ունէր Լուսավորչի Ս. Աջը, իսկ հոգեւորականաց դասը՝ եկեղեցոյ պատկանող դարաւոր սրբազան մասունքներ, որոնցմով օրհնուեցաւ մեր հաւատացեալ ժողովուրդը:



Թափօրի աւարտին, նորին Ս. Օծութիւնը Միաբան հայրերու ընկերակցութեամբ, բարձրացաւ Ս. Խորան, ուր Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին սրբազան Աջով կատարեց ջրօրհնէքի արարողութիւն, որմէ ետք Մայր Տաճարի Ս. Խորանին վրայ դրուեցան Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետին, Ս. Սեղբեստրոս եւ Ս. Նիկողայոս հայրապետներուն եւ Պարսամ ճգնաւորին աջերը, որոնք Միաբան հայրերու հսկողութեան ներքոյ այդտեղ մնացին մինչեւ ուշ երեկոյ:



ԱԲԱԳ ՇԱԲԱԹԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ

Աւագ Շաբաթը լեցուն է Յիսուս Քրիստոսի երկրաւոր առաքելութեան վերջին հանգրուանը յիշատակող հոգեպարար արարողութիւններով, որոնք հաւատացեալին անգամ մը եւս ապրիլ կու տան Քրիստոսի երկրորդ գալստեան խոստումը, մարդկութեան փրկութեան համար կրած Քրիստոսի շարժարանքները, խաչելութիւնը, թաղումը՝ հասնելու համար հրաշափառ Ս. Յարութեան: Առ այդ, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Նորին Սրբութիւնը հանդիսապետեց բոլոր եկեղեցական արարողութիւններուն:

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Կիրակի, 24 Մարտ 2024-ի առաւօտեան, Ծաղկազարդի տօնը հանդիսաւորապէս նշուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ, ներկայութեամբ մեծ թիւով մանուկներու, երիտասարդ ընտանիքներու եւ հաւատացեալներու: Այս իրողութիւնը ա՛լ աւելի ներշնչիչ կը



դարձնել Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ եւ հոգեպարար արարողութիւնը ա՛լ աւելի կը լիացնէ հաւատացեալը:

Նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի եւ հնատիպերու ու ձեռագիրներու բաժանմունքներու Տեսուչ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Միաբան հայրերէ, Դպրեվանքի ուսանողներէ, ծնողներէ եւ մանուկներէ կազմուած աւանդական թափօրէն ետք, հաւատացեալները Մայրավանքի շրջափակին մէջ հաւաքուած ունկնդրեցին Վեհափառ Հայրապետին պատգամը:

Նորին Սրբութիւնը Հայրապետական ջերմ սիրով ողջունելէ ետք հաւատացեալ ժողովուրդը, յատկապէս մանուկները, ուրախութիւն յայտնեց, որ հակառակ մեր առօրեան խախտող տարբեր դժուարութիւններուն, դարձեալ հաւաքուած ենք՝ դիմաւորելու Քրիստոսի մուտքը Երուսաղէմ. «Եկած ենք Քրիստոսի ներկայութեամբ մեր հաւատքը աւելի զօրացնելու եւ մեր սէրը աւելի ամրապնդելու, որպէսզի վերանորոգ հաւատքով շարունակենք ապրիլ մեր քրոստոնէական ու ազգային կեանքը», ըսաւ ան: Վերջիշեցնելով «ձգեցէ՛ք մանուկները թող ինձի գան, որովհետեւ երկինքի արքայութիւնը մանուկներուն կը պատկանի» տէրունի պատուէրը՝ ան ընդգծեց, որ մեր ազգին ապագան կը պատկանի մեր մանուկներուն, ուստի, մեր մանուկներուն քրիստոնէական ու ազգային կազմաւորումը մեր ծնողներուն սրբազան առաքելութիւնն է, ըսաւ ան ու յանձնարարեց ծնողներուն, որ քրիստոնէական-ազգային ապրումներով ու արժէքներով թրծեն իրենց զաւակները:

Ապա, Նորին Ս. Օծութիւնը Վեհարանին մէջ ընդունեց մանուկներն ու անոնց ծնողները, որոնք աջահամբոյրով ստացան Հայրապետական օրհնութիւն: Ան մանուկներուն նուէրներ բաշխեց՝ տօնական օրերու սեմին ուրախութեամբ համակելով անոնց սրտերը:

ԴՌՆԲԱՅԷՔ

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ մեր եկեղեցւոյ հոգեզմայլ արարողութիւններէն Դռնբացէքը: Արարողութեան հանդիսապետեց «Կիլիկիա» մատենադարանի եւ հնատիպերու ու ձեռագիրներու բաժանմունքներու Տեսուչ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Օրուան խորհուրդին պատգամը փոխանցելու համար Շահան Արքեպիսկոպոստը Հայրը վեր առած էր Քրիստոսի լերան քարոզէն երանիներուն հինգերորդը՝ «երանի ողորմածներուն, որովհետեւ անոնք Աստուծմէ ողորմութիւն պիտի զրանեն» (Մտ 5.7): Ան ըսաւ, որ երբ մեր Տէրը եւ Արարիչը կը ստեղծէ տիեզերքն ու մարդը, մարդու արարումին նաեւ իր օրհնութիւնը կը բաշխէ անոր: Աստուած ո՛չ միայն Իր նմանութեամբ եւ պատկերին համաձայն կը ստեղծէ մարդը,



ինչպես կ'ըսէ Աստուածաշունչը, այլ նաեւ իր նկարագրին մաս կազմող շնորհքներ կը բաշխէ անոր: Մարդուն կու տայ իր ողորմածութիւնը: Հիմնաւորելով իր խօսքը Աստուածաշնչական ճշմարտացիութիւններով՝ Սրբազան Հայրը ըսաւ, թէ Աստուածաշունչի ամբողջ երկայնքին, ամէն քայլափոխին, ո՛չ միայն սաղմոսերգուններուն, ո՛չ միայն առաջին ուխտին, այլ նաեւ Նոր Կտակարանին մէջ, Աստուծոյ մեզի գալը եւ այցելելը իր ողորմութեան ու սիրոյ արտայայտութիւններն են: Ուստի, եթէ Աստուծմէ ողորմութիւն պիտի գտնենք, Աստուածանմանութեամբ պէտք է ապրինք այս կեանքը:

Քարոզիչ Սրբազան Հայրը լուսարձակի տակ առաւ ողորմութեան կամ ողորմածութեան երեք ճշմարտութիւններ.- ա) Աստուծոյ ողորմութիւնը նոյնինքն Աստուծոյ սէրն է եւ իր սէրը կը յայտնէ իր գթառատութեամբ: Աստուածաշունչ մատեանը կ'ըսէ, թէ Հոգին Սուրբ ստեղծագործութեան առաջին պահուն կը շրջէր ջուրերուն վրայէն, այլ խօսքով կը գթար, կը խնամէր, կը գուրգուրար, կը սիրէր: Տէրը կը հրաւիրէ մեզ երանիներուն մէջ գթառատ, սիրով լեցուն ըլլալ: բ) Երկրորդ յատկանիշը կամ ողորմածութեան ներքին իմաստը ներողամիտ ըլլալն է, այսինքն ընդունիլ մէկը՝ հակառակ իր ըրածներուն ու մարդկային թերութիւններուն: Ընդունելի, որովհետեւ նաեւ մենք, մեր կարգին, մեղաւորներ ենք, թերութիւններ ունինք, մեր կեանքին մէջ սխալներ գործած ենք եւ եթէ չներենք անոնց՝ մենք եւս ներում պիտի չի ստանանք: գ) Երրորդ, Աստուած ողորմած է. առաջին ուխտին մէջ Աստուծոյ ողորմութիւնը կը նմանի մօր արգանդին, որ կը պաշտպանէ իր երեխան: Աստուած կը պաշտանէ, Աստուած օգնութեան կը հասնի, Աստուած կը փրկէ մեզ:

Եզրափակելով իր քարոզը՝ Սրբազան Հայրը աղօթք բարձրացուց առ Աստուած, ըսելով. «Թակեցինք դուռդ, ո՛վ Տէր, բա՛ց մեզի. բաց մեր կեանքի ճանապարհը: Նեղութեանց մէջ, տագնապներու մէջ, դժուարութեանց մէջ՝ անհատական, ընտանեկան, եկեղեցական, ազգային ու Հայրենիքի կեանքին մէջ բա՛ց մեզի Քու ողորմութեանդ դուռը եւ կը խոստանանք ողորմած ըլլալ՝ Քու նմանութեանդ եւ պատկերիդ համաձայն: Բա՛ց մեզի, ո՛վ Տէր. բա՛ց մեր կեանքի ճանապարհը: Դուն ես կեանքը, Դուն ես ճանապարհը, մեզ առաջնորդէ Քու արքայութեանդ եւ ողորմութեամբդ ընդունիր մեզ Քու արքայութենէդ ներս, որպէսզի բոլորս միասին փառաւորենք Քեզ, յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ՏԱՍՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Աւագ Երեքշաբթի, 26 Մարտ 2024-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Տասը Կուսանացի յիշատակի ժամերգութիւնը՝ մասնակցութեամբ Մայրավանքի Կիրակնօրեայ դպրոցի խումբ մը աշակերտուհիներու:

Տասը կոյսերը խորհրդանշող տասը աշակերտուհիները, իւրաքանչիւրը իր ձեռքին բռնած լապտեր մը, ներկայացան եկեղեցւոյ դաս եւ ներկայացուցին Քրիստոսի երկրորդ գալստեան հինգ պատրաստ (իմաստուն) եւ հինգ անպատրաստ (յիմար) կոյսերը: Աւետարանական ընթերցումի պահուն, Փեսային երկրորդ գալուստը դիմաւորող կոյսերը վառ պահեցին իրենց լապտերները, իսկ միւսները՝ մարեցին զանոնք:



Այս գեղեցիկ աւանդութեան աւարտին, Փոխ Լուսարարապետ՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Չուալերթանեանի առաջնորդութեամբ եւ Մայրավանքի Կիրակնօրեայ դպրոցի տնօրէն՝ Ժանին Դանիէլեանի գլխաւորութեամբ, աշակերտուհիները Վեհափառ Հայրապետին մօտ բարձրացան՝ ստանալու համար անոր Հայրապետական օրհնութիւնը:

ՈՏՆԼՈՒԱՅ

Աւագ Հինգշաբթին իւրայատուկ է, որովհետեւ հոն կը տեսնենք Քրիստոսի ծունկի գալով առաքեալներուն ոտքերը լուալը՝ անոնց թելադրելով ընելու նոյնը ապագային: Առ այդ, 28 Մարտ 2024-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Կարգ Ունելուայի ընթացքին, Վեհափառ Հայրապետը կատարեց ջուրի եւ իւղի օրհնութիւն եւ հետեւելով Քրիստոսի օրինակին՝ ղենջակ կապած ծունկի գալով լուաց Յիսուսի տասներկու աշակերտները խորհրդանշող 12 Միաբան հայրերու եւ Դպրեվանքի սաներու ոտքերը:

Հուսկ, Նորին Սրբութիւնը հաւատացեալներուն յղեց իր Հայրապետական պատգամը, որ առանցք ունէր սաղմոսներուն եւ աղօթքներուն մէջ հնչած Աստուածային սէրը: Ան դիտել տուաւ, որ աշակերտներուն ոտքերը լուալու արարքը, այլ խօսքով՝ Քրիստոսի, որպէս Աստուած, մարդու առջեւ խոնարհիլը, պերճախօս վկայութիւն է մարդուն նկատմամբ Աստուծոյ անհուն սիրոյն: Քրիստոսի երկրաւոր առաքելութիւնը արտացոլացումն է Աստուծոյ սիրոյն եւ





այդ սէրը մեր եկեղեցւոյ ծէսերուն մէջ առանցքային ներկայութիւն է, որովհետեւ սէրը քրիստոնէութեան էութիւնը կը կազմէ, նշեց ան: Խօսելով սիրոյ տարբեր կերպերուն մասին՝ Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց Աստուածային սիրոյն խորին ըմբռնումը, որ իր մէջ կը պարփակէ նոյնիսկ տառապանք եւ զոհաբերութիւն. Աստուծոյ սէրը զինք մղեց իր Միածին Որդին աշխարհ զրկելու՝ ի սէր մարդոց փրկութեան: Ուստի, ան յորդորեց հաւատացեալներուն վերադառնալու սիրոյ քրիստոնէական հասկացողութեան, սիրելու զիրար, սիրելու մեր նմանը, մեր ազգին զաւակները, ու այդ սէրը գործի վերածելով՝ ծառայելու ազգին ու բարիին. «Այսօր Քրիստոս, իր եկեղեցւոյ նամբով, կու գայ յիշեցնելու մեր ազգի զաւակներուն, մեր պետական մարդոց, մեր քաղաքական, կուսակցական մարդոց, մեր մտաւորականներուն, բոլորի՛ն, ըսելով՝ սիրեցէ՛ք զիրար, հեռո՛ւ մնացէ՛ք ամէն տեսակ ատելութենէ, վատառողջ ֆննադատութիւններէ, ներքին բեւեռացումներէ: Քրիստոսի սիրոյ ներկայութիւնը ձեր կեանքին մէջ ապրեցէ՛ք ու ձեր կեանքով թարգմանեցէ՛ք Քրիստոսի սիրոյ պատգամը»:

Արարողութեան աւարտին, «Պահպանիչ» աղօթքով օրհնեց հաւատացեալները, մեր եկեղեցին եւ մեր ազգը:

ԽԱԻԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

Նոյն գիշեր տեղի ունեցաւ Կարգ Չարչարանացը (Խաւարման Գիշեր): Մեր ժողովուրդի զաւակներուն խուռներամ ներկայութեամբ՝ աւետարանական ընթերցումներուն, հոգեզմայլ շարականներուն եւ «Ո՞ր ես, մայր իմ» հոգեթով ու յուզումնախառն երգին ընդմէջէն յիշատակուեցաւ Քրիստոսի վերջին ընթրիքի, Յուգայի մատնութեան եւ Քրիստոսի շարչարանքներուն դրուագները:



Եկեղեցական արարողութեան աւարտին, «Խաչի Քո Քրիստոս» շարականին երգեցողութենէն ետք, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղօթքով օրհնեց հաւատացեալ ժողովուրդը:

ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳ

Աւագ Ուրբաթ օրուան եկեղեցական արարողութիւնը՝ Մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Թաղման Կարգը, գեղեցիկ շարականներու եւ սաղմոսացուցութիւններու ճամբով կատարուեցաւ 29 Մարտ 2024-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ: Արամ Ա. Կաթողիկոս արարողութեան աւարտին հաւատացեալներուն ուղղեց օրուան խորհուրդին առնչուած իր Հայրապետական պատգամը:

Յատկանշական է, որ Աւագ Ուրբաթին, «Կիլիկիա» թանգարանէն դուրս կը բերուի Քրիստոսի Խաչափայտէն սրբազան մասունքը, որմով Վեհափառ Հայրապետը կ'օրհնէ ներկաները:



Յիսուս Քրիստոսի թաղման պատգամը փոխանցելով՝ Նորին Արքեպիսկոպոս Սուրբ Գրիգորի Գեղեզման իշնելով մեր մեղքերը գերեզմանելու խորհուրդին մասին՝ մեկնելով Պետրոս առաքելալի ընդհանրական երկրորդ թուղթին՝ «Արդարը, անմեղը մեղաւորներու համար խաչուեցաւ ու թաղուեցաւ, որպէսզի մեզ Աստուծոյ մօտեցնէ»: Նշելով աղամական մեղքի պատճառով մարդուն Աստուծմէ հեռանալը՝ ան դիտել տուաւ, որ Աստուած չհեռացաւ մարդէն, աւելին՝ Իր Միածին Որդին զրկեց աշխարհ, որպէսզի իրմէ հեռացած մարդը մօտեցնէ իրեն: Ապա աւելցուց, որ Քրիստոսի մարդեղութիւնը եւ երկրաւոր առաքելութիւնը մէկ նպատակ կը հետապնդէին՝ մարդու փրկութիւնը: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ փրկութիւնը կեանքի ընթացք մըն է եւ հրաւիրեց հաւատացեալները այս առումով գիտակից կեանք մը ապրելու: «Եկէ՛ք, մեր հոգիներուն մէջ ծունկի գանք եւ խնդրենք մեզի համար, մեր մեղքերուն համար գերեզման իջած, թաղուած Քրիստոսէն՝ ըսելով.- Ո՛վ Տէր, քեզի հետ գերեզման իջեցուր մեր մեղքերը, մեր տագնապները, մեր ցաւերը, մեր հիւանդութիւնները, մեր դժուարութիւնները, մեր մոլութիւնները, որպէսզի քեզի հետ միասին վերանորոգ հաւատքով դիմաւորենք քու հրաշափառ Յարութիւնը», եզրափակեց ան:

Հոգեպարար արարողութիւնը իր աւարտին հասաւ «Խաչի Քո Քրիստոս երկիրպագանեմք» հոգեթով շարականի երգեցողութեամբ եւ «Պահպանիչ» աղօթքով. ապա, հաւատացեալները երկիւղածութեամբ մօտեցան Քրիստոսի գերեզմանը խորհրդանշող ծաղկածածկ սեղանին՝ ստանալու համար անկէ բխած օրհնութիւնը:

ՃՐԱԳԱՆՈՅՑԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՏՆՕՐՀՆԷՔ

Մեր եկեղեցիներէն ներս Ս. Յարութեան նախատօնակին կը մատուցուի Ճրագալոյցի Ս. Եւ Անմահ Պատարագ, իսկ Անթիլիասի Մայրավանքին մէջ, Ս. Պատարագի աւարտին, կը կատարուի տնօրհնէքի արարողութիւն: Ճրագալոյցի Պատարագի ընթացքին է, որ եկեղեցւոյ կանթեղները, ճրագները եւ մոմերը կը վառուին ու Քրիստոսի Լոյսը կը բաշխուի հաւատացեալներուն:



Այս առիթով, Աւագ Շաբաթ, 30 Մարտ 2024-ի երեկոյեան, նախագահութեամբ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. Եւ Անմահ Պատարագ, ձեռամբ՝ Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի:

Յաւարտ Ս. Պատարագին, պատարագիչը Ս. Խորանէն իջեցուց Քրիստոսի լոյսը ու փոխանցեց Նորին Ս. Օծութեան, որ իր կարգին, վառեց դասին մէջտեղ կանգնած աշտանակը, որմէ հաւատացեալները ստացան իրենց լոյսերը՝ Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութիւնը աւետող «Այսօր յարեաւ ի մեռելոց Փեսայն անմահ...» հոգեթով շարականի երգեցողութեան հետ: Ապա, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարանի դահլիճ, ուր կատարուեցաւ Զատկական տնօրհնէքի արարողութիւնը:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը ժողովուրդին փոխանցեց Քրիստոսի Յարութեան աւետիսը, ըսելով՝

**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ.
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱՓԱՌ ՏՕՆԸ
ՄԵՃ ՇՈՒՔՈՎ ԼՇՈՒԵՑԱԻ
ԱԼԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Կիրակի, 31 Մարտ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնին առիթով, մատուցուեցաւ Հայրապետական Ս. Եւ Անմահ Պատարագ, որուն ընթացքին իր պատգամը փոխանցեց Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսը: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի:

Հաւատացեալներու կողքին Ս. Պատարագին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան դեսպանն ու դեսպանատան անձնակազմը եւ պետական, կուսակցական, միութենական ու համայնքային ներկայացուցիչներ:

Նորին Սրբութիւնը իր պատգամին որպէս բնաբան ընտրած էր Քրիստոսի այն խօսքը, որ կ'ըսէ. «Եւ յաղթեցի աշխարհին» (Յ՛ 16.33): «Այո՛, Քրիստոս յաղթեց աշխարհին ո՛չ թէ սուրով, այլ՝ սիրով, ո՛չ թէ երկրաւոր իշխանութեամբ, այլ՝ երկնային ծառայութեամբ, ո՛չ թէ ուրիշներուն իրաւունքը գրաւելով, այլ՝ ուրիշներուն իրաւունքը պաշտպանելով: Քրիստոս յաղթեց աշխարհին խաչ բարձրանալով եւ խաչով յարութիւն կերտելով: Այս է պատգամը Քրիստոսի: Այս է պատգամը



Քրիստոսի յաղթական յարութեան՝ դարերէն եկող ու դարերուն գացող»։ Ապա Վեհափառ Հայրապետը խօսելով ներկայ ժամանակներուն մասին ըսաւ. «Քրիստոս իր խորհրդական մարմնին՝ եկեղեցոյ նամբով կը յիշեցնէ մեզի, թէ ինք իր յարութեամբ յաղթած էր չարին, մեղքին ու մահուան եւ՝ յարութիւն կերտած։ Արդ, Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ Քրիստոսի յարութեամբ զօրացած պայքարիլ աշխարհի չարերուն ու մեղքերուն։ Այս է յարութեան նամբան՝ մահուան դիմաց կեանքի յաղթանակի նամբան»։

Խօսելով մեր ժողովուրդի դիմագրաւած ներկայ տագնապներուն մասին՝ Նորին Սրբութիւնը ըսաւ. «Նայեցէք մեր պատմութեան. մեր ողջ պատմութեան ընթացքին շրջապատուած եղած ենք ահաւոր տագնապներով, պատերազմներով, հալածանքներով, ցեղասպանութեամբ, արտագաղթով. սակայն կրցած ենք յարութեան հաւատով զօրացած՝ դիմակալել այս ահաւոր տագնապները եւ վերականգնիլ, վերաշինել մեր հայրենիքը ու վերահաստատել մեր ազգին միասնականութիւնը։ Հետեւաբար, ներկայ ժամանակներուն, մեզի պարտադրուած տագնապներուն դիմաց պէտք է ընկնուիլ, յուսահատիլ, այլ՝ յարութեամբ զինուած պէտք է շարունակել մեր հաւատքի պայքարը՝ ի խնդիր մեր հաւաքական արժէքներու ու իտէլիաներու պաշտպանութեան»։

Ապա, Նորին Ս. Օծութիւնը յիշեցուց, որ «նման նակատագրական պահերուն Հայ եկեղեցին իր ժողովուրդին հետ եղած է՝ ինքզինքն նոյնացնելով մեր ժողովուրդի տագնապներուն ու պայքարին հետ, իր հաւատքի առաւելութեան անբաժան մասը նկատելով հայրենիքի ու մեր ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութիւնը։ Նոյն ոգիով ու յանձնառութեամբ մեր եկեղեցին միշտ պիտի մնայ մեր ժողովուրդին ու հայրենիքին կողքին»։

Արամ Ա. Կաթողիկոս անդրադառնալով Միջին Արեւելքի կացութեան՝ ըսաւ, որ Հայ ժողովուրդը միշտ եղած է պաղեստինցի ժողովուրդի արդար դատի կողքին՝ շեշտելով Կազայի պատերազմին շուտափոյթ դադարեցումը եւ պաղեստինցի ժողովուրդին իրաւունքներուն վերահաստատումը։ Իսկ խօսելով Լիբանանի ներքին կացութեան՝ ան դարձեալ յիշեցուց, որ նախագահի ընտրութիւնը անյետաձգելի պահանջք է, ինչպէս նաեւ՝ ժողովուրդի ընկերատնտեսական տագնապի լուծումը։

Յաւարտ Ս. Պատարագին, Հայրապետական Թափօրը մեծաշուք հանդիսութեամբ ուղղուեցաւ Վեհարան, ուր բոլոր ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» օրհներգը եւ Հայրապետական մաղթերգը։ Ապա, Վեհափառ Հայրապետը օրհնեց ներկայ հաւատացեալները՝ անգամ մը եւս աւետելով.՝ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵՍԻ Ի ՄԵՌԵԼՈՅ. ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ։

Հուսկ, ան Վեհարանի դահլիճին մէջ Զատիկական շնորհաւորութիւններ ընդունեց Հոգեւոր Պետերոս, քաղաքական ու Ազգ. ներկայացուցիչներու եւ բարձրաստիճան պատասխանատուներու կողմէ, ինչպէս նաեւ մեր հաւատացեալ ժողովրդեան։

ԱՊՐԻԼ 24-Ի ՈԳԵԿՈՉՈՒՄ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ, Երեքշաբթի, 23 Ապրիլ 2024-ի երեկոյեան, Հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեանի, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Ռամկավար Ազատականի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք՝ Հայոց Յեղասպանութեան 109-ամեակի ոգեկոչման առիթով: Հաւաքին իրենց մասնակցութիւնը բերած էին մեծ թիւով հայորդիներ եւ պաշտօնական անձնաւորութիւններ:

Սոյն հաւաքին պաշտօնական խօսքերով հանդէս եկան յիշեալ երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները: Ապա, Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական ոգեշունչ պատգամը ուղղեց մեր պահանջատէր ժողովուրդի համայն զաւակներուն:

Նորին Սրբութիւնը իր պատգամը սկսաւ՝ ընդգծելով, որ «Ապրիլ 24-ը սոսկ նահատակներու ոգեկոչումի օր չէ, այլ մեր պահանջատիրական կամֆը առաւել ամրացնելու կոչ է»: Ան ըսաւ, որ այնքան ատեն, որ Թուրքիա եւ իր «կրտսեր եղբայր» Ազրպէյճան կը շարունակեն ուրանալ իրենց գործած համամարդկային ոճիրները, խեղաթիւրել Հայոց Պատմութիւնը, ոչնչացնել Հայոց դարա-



ւոր հետքերը, եւ այնքան ատեն, որ արցախահայու թիւնը պոկուած կը մնայ իր հողերէն, Հայ ժողովուրդը անխախտօրէն պիտի շարունակէ իր պայքարը: «Այսօր, երբ Թուրքիոյ անվերապահ գորակցութիւնը վայելող Ազրպէյճանը Հայաստանի ամբողջականութիւնը հարցականի տակ դնող եւ անվտանգութիւնը խախտող պահանջներ կը ներկայացնէ ու կը սպառնայ նոր տարածաշրջաններ գրաւել Հայաստանէն, կ'արհամարհէ միջազգային օրէնքի սկզբունքները եւ կ'անտեսէ իր ստորագրած համաձայնագրերը, ու երբ Թուրքիան, իր կարգին, կը պահանջէ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մէջ մեր ազգի ու հայրենիքի հիմնարար արժէքներուն ու իտէլիներուն առնչուած յօդուածներ ջնջել ու վերջ տալ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հետապնդման, Հայ երգին բառերով բարձրաձայն կ'ըսենք. «Հիմի՞» էլ լռենք, երբ մեր թշնամին իր սուրն է դրել մեր կրծքին...», ըսաւ Նորին Սրբութիւնը: Ուստի, ան յորդորեց Հայ ժողովուրդը արթուն մնալու տեղի ունեցած համաթուրանական նոր դաշնութիւններուն դիմաց, որոնց նպատակը Հայաստանի գոյութիւնը վտանգել է: Ան յայտարարեց մեր կտրուկ մերժումը՝ Հայաստանի հողային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը վտանգող տարածաշրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատման բանակցութիւններուն, միակողմանի զիջումներուն եւ պարտադրուած կացութիւնները ընդունելու վտանգալից մօտեցումներուն:

Արամ Ա. Կաթողիկոս ընդգծեց, որ աշխարհէն գուժ ու արցունք չէ սպասուածը, այլ պահանջուածը արդարութեան վերականգնում է եւ միջազգային օրէնքի գերակայութիւն. «Մենք պատմութիւն կերտեցինք, Հայրենիք պահեցինք, մշակոյթ ստեղծեցինք, նոյնիսկ արեան գնով, «ո՛չ» ըսելով բոլոր տեսակի համակերպումներուն: Կը պահանջենք Արցախի ժողովուրդին վերադարձը Արցախ եւ անոր իրաւունքներուն վերականգնումը՝ միջազգային երաշխաւո-



րութեամբ: Կը պահանջե՛նք Ազրպէյճանի կողմէ՛ ձերբակալուած բոլոր գերիներուն՝ առանց պայմանի շուտափոյթ ազատ արձակումը: Կը պահանջե՛նք Օսմանեան կայսրութեան կողմէ՛ Հայ ժողովուրդին դէմ գործադրուած Յեղասպանութեան դատապարտումը՝ նոյնինքն Թուրքիոյ կողմէ, եւ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու հատուցումը», պահանջեց Վեհափառ Հայրապետը:

Ապա, ան մէջբերեց Թուրքիոյ Նախագահին քանի մը ժամ առաջ տուած պատասխանը թղթակիցներուն՝ Հայոց Յեղասպանութեան առնչուած հարցումին. «Մոռցէ՛ք անհիմն յիշողութիւնները եւ երեւակայական պատմութիւնները»: Առ այդ, մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու սրբազան աճիւններուն դիմաց կանգնած, Վեհափառ Հայրապետը իր խօսքը ուղղեց Թուրքիոյ Նախագահին՝ հարց տալով. «Պարո՛ն Նախագահ, ուրկէ՞ եկան այս աճիւններ մեր նահատակներուն: Օսմանեան կայսրութեան սահմաններէն մերս քու պապերու կողմէ շարդուեցան մեր պապերը: Պատմութիւնը կը վկայէ, նոյնիսկ թուրք պատմագետներու կողմէ, թէ ինչ որ կատարուեցաւ 1915-ին, ի՛մ պապերուս դէմ քո՛ւ պապերու կողմէ Յեղասպանութիւն էր՝ ծրագրուած ու գործադրուած պետական մաշտապով»: Իսկ պատասխանելով Թուրքիոյ Նախագահին Հայաստանը Սփիւռքին եւ Սփիւռքը Հայաստանին հակադրելու անիմաստ փորձերուն, որ վերոյիշեալ հարցազրոյցին մէջ թղթակիցներուն ըսած էր՝ Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Պարո՛ն Նախագահ, մի՛ փորձեր Սփիւռքը հակադրել Հայաստանին: Հայաստան եւ Սփիւռք՝ մէկ ամբողջութիւն են, մենք մէկ ազգ ենք՝ մէկ պահանջատիրութեամբ: Հետեւաբար, Արթո՛ւն եղիր, ժողովուրդ Հայոց, Կովկասէն մերս համաթուրանական նոր դաշնակցութեան մը կազմաւորումով Թուրքիա եւ Ազրպէյճան կը փորձեն իրենց օղակին մէջ խեղդել Հայաստանը: Հայաստանին ցեղասպան դրացիները խաղաղութեան հաստատման համար պայմաններ դնելով՝ փաստօրէն կը սպառնան Հայաստանի ամբողջականութեան ու անվտանգութեան, նոյնիսկ՝ գոյութեան»:

Վերջապէս, Նորին Ս. Օծութիւնը թելադրեց համախմբուելու ազգին ու հայրենիքին սրբազան արժէքներուն, համահայկական օրակարգի մը՝ թէկուզ տարբեր մօտեցումներով, եւ անվիճելի իրաւունքներու շուրջ՝ Հայաստանի փրկութիւնը ամէն բանէ վեր դասելով:

«Յարգա՛նք մեր բիւրատու նահատակներուն եւ պատի՛ւ՝ մեր արի ժողովուրդին» ըսելով՝ Արամ Ա. Կաթողիկոս եզրափակեց իր պատգամը:

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՏՈՒՅՈՒՄ ԵՒ ԲԱՐԵԽՕՍԱԿԱՆ ԿԱՐԳ

Այս տարի Հայոց Յեղասպանութեան ոգեկոչումը կը նշենք ա՛լ աւելի ծանր մարտահրաւէրներու ներքոյ, սակայն առանց կորսնցելու փրկութեան մեր հաւատքը ու արդարութեան տիրանալու մեր պայքարի ոգին: Մեծի Տանն



Կիրիկիոյ Կաթողիկոսութիւնը, ի սկզբանէ ըլլալով ճակատագրակից իր ժողովուրդին, նաե՛ւ պայքարակից է անոր դատին: Առ այդ, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Զորեքշաբթի, 24 Ապրիլ 2024-ի առաւօտուն, Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան մատուցեց 1915-ի սրբադասեալ նահատակներուն նուիրուած Ս. եւ Անմահ Պատարագ, որուն աւարտին, Վեհափառ Հայրապետին հանդիսապետութեամբ, Սրբոց Նահատակաց յուշարձան-մատուռին դիմաց տեղի ունեցաւ Բարեխօսական Կարգ եւ ծաղկեպսակներու զետեղում:

Յայտնենք, որ Ս. Պատարագին եւ ծաղկեպսակներու զետեղման արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանն ու դեսպանատան անձնակազմը, Մեծի Տանն Կիրիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան անդամները, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան (Ս.Դ.Հ.Կ.), Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) վերին մարմիններու ներկայացուցիչներ, նախկին թէ ներկայ երեսփոխաններ ու նախարարներ, լիբանանահայ համայնքի բոլոր կազմակերպութիւններու, կառույցներու, մարմիններու ու բարեսիրական միութիւններու ներկայացուցիչներ:

Աւարտին, Նորին Սրբութիւնը իր Հայրապետական եւ հայրական ողջոյնը փոխանցեց շրջափակը հաւաքուած հայորդիներուն, որոնց շարքին էին լիբանանահայ սկաուտական կազմերն եւ շեփորախումբերը:

ՀԱՅ ԴԱՏ

**ԱՇԽԱՐՀԱՅՈՉԱԿ ԴԱՏԱԽԱՁ՝
ԴՈԿՏ. ԼՈՒԻՍ ՄՈՐԵՆՕ ՕՔԱՄՓՕ
ԴԱՍԱԽՕՍԵՑ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ**

Նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Ուրբաթ, 19 Ապրիլ 2024-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ, Միջազգային Քրէական Դատարանի Հիմնադիր ու Առաջին Դատախազ՝ Դոկտ. Լուիս Մորենո Օքամփօ դասախօսեց լիբանանահայ կազմակերպութիւններու, կրթական ու ընկերային միութիւններու, կուսակցական եւ յարակից մարմիններու ներկայացուցիչներու ներկայութեան: Դասախօսութեան նիւթն էր «Յեղապանութեան հռչակագրի հռչակումէն 75 տարի ետք, ինչո՞ւ աշխարհը կը ձախողի հռչակագրի հրամայականներուն պատասխանել»:

Բարի գալստեան խօսք արտասանեց Հայ եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան անդամ՝ Ռիթա Մելեքեան, որ ջերմօրէն ողջունելէ ետք հիւրն ու ներկաները՝ ներկայացուց յայտագիրը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի անդամ եւ Պէշրութի ամերիկեան ու Լիբանանի պետական համալսարաններուն մէջ քաղաքական գիտու-





Թեան եւ Միջազգային Օրէնքի դասախօս՝ Դոկտ. Նորա Պայրազտարեան: Ան համապարփակ ակնարկ մը նետեց միջազգային օրէնքին մէջ ցեղասպանութեան հոշակագրի որդեգրումին եւ անոր յաջորդող առնուած քայլերուն՝ կանխարգիլելու համար ցեղասպանութիւնները եւ հաշուի կանչելու համար ցեղասպանները: Ան ըսաւ, որ ցեղասպանութեան հոշակագիրը իր մէջ ներառած էր Միջազգային քրէական դատարանին կազմութեան տեսիլքը ու հիմնադիր բնագիրը եւ ազդեցութիւն ունեցած է զանազան միջազգային օրէնքներու կազմաւորման վրայ: Դոկտ. Պայրազտարեան դիտել տուաւ, որ հակառակ ցեղասպանութեան հոշակագրին, որուն կազմութեան դրդապատճառներէն հիմնականն էր Հայոց Յեղասպանութիւնը, պետութիւններուն վրայ դրած պարտքին, անոր կիրառումը կը մնայ մեծապէս թերի: Յեղասպանութեան հոշակագրին կենդանի ժառանգութիւնը արտացոլելու եւ անոր ձախողութեան խնդիրները հարցադրելու միտումով՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կազմակերպեց այս դասախօսական երեկոն՝ հրաւիրելով մեծահամբաւ Դատախազ՝ Դոկտ. Լուիս Մորենօ Օքամփօն: Ուստի, Դոկտ. Պայրազտարեան ջերմօրէն ողջունեց դատախազը՝ հրաւէրը ընդառաջելուն համար, եւ ամփոփ կերպով ներկայացուց անոր ասպարէզին կենսագրականը, որ հարուստ է խիզախ կեցուածքներով, ի մասնաւորի Արցախի վերջին իրադարձութիւններուն առնչուած, ինչպէս նաեւ դատախազի վերջին հրատարակութեան՝ Միջազգային Քրէական Դատարանի ներքին խոհանոցին մասին:

Յաջորդիւ, բեմ բարձրացաւ Դոկտ. Լուիս Մորենօ Օքամփօ: Երախտագիտութիւն յայտնելէ ետք Մայրավանք գտնուելու հրաւէրին համար՝ ան երեք կենդանի օրինակներով ընդգծեց Հայու տիպարին պայքարող գիծը եւ քաջալերեց շմարել այս ոգին՝ յաղթահարելու համար ներկայ մարտահրաւէրները:

Առաջին հերթին ան խօսեցաւ Գալիֆորնիոյ Գերագոյն Ատենանի Դատախազ լիբանանահայ Կասիա Աբգարեանին մասին՝ անդրադառնալով օր մը առաջ Միջազգային Քրէական դատարանին մէջ Ազրպէյճանի կատարած ցեղասպանութեան գծով քննութիւն բանալու հայցին: Ան ըսաւ, որ Աբգարեան ո՛չ միայն փաստեր ներկայացուցած է Արցախի վերջին պատերազմէն մինչեւ Արցախի պարպումին տանող ժամանակաշրջանին վերաբերեալ Ազրպէյճանի ցեղասպանական քաղաքականութեան, այլ նաեւ ներկայիս Հայաստանի Հանրապետութեան սպառնացող ցեղասպանութեան առնչուած: Խօսելով Ցեղասպանութիւն կատարելու մտադրութեան ապացոյցներու մասին՝ Օքամփօ ներկայացուց Ալիեւի ռեժիմին թէ՛ յայտարարութիւնները եւ թէ՛ քայլերը, որոնք Աբգարեան օգտագործած է իր փաստաթուղթերուն մէջ: Այն ինչ որ Ալիեւ 2023-ին կատարեց Արցախի դէմ, արդէն իսկ տարիներ առաջ, 2015-ին, տարբեր յայտարարութիւններով մտադրութիւն ցուցաբերած է, իսկ ներկայիս, նոյն քաղաքականութեամբ ա՛հ ու սարսափի կ'ենթարկէ Հայաստանի քաղաքացիները, ըսաւ ան:

Օքամփոյի ներկայացուցած Հայու երկրորդ տիպարը արցախցի հասարակական եւ քաղաքական գործիչ, Արցախի հանրապետութեան մարդու իրաւունքներու նախկին պաշտպան, Արցախի նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար՝ Արտակ Բեկլարեանն էր: Ան ըսաւ, որ հակառակ Արցախի առաջին պատերազմին հօր ականի պայթումի հետեւանքով փոքր տարիքէն տեսողութիւնը կորսնցուցած ըլլալուն, իսկ աւելի ուշ՝ կանուխ տարիքին մայրը կորսնցուցած ըլլալուն, Բեկլարեան չէ ընկրկած, այլ ուսման հետեւած է Հայաստանի եւ արտասահմանի մէջ ու վերադարձած է Արցախ՝ ծառայելու համար իր ազգին: Օքամփօ դիտել տուաւ, որ միայն ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդ մը կրնայ հասկնալ ցեղասպանութեան հետեւանքները եւ իրենց ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար Արցախէն բռնի տեղահանուած արցախցիները ամէն իրաւունք ունին Արցախ վերադառնալու եւ միջազգային ապահովութեան երաշխիքով ապրելու եւ պահանջք բարձրացնելու:

Վերջապէս, Օքամփօ խօսեցաւ ցեղասպանութեան վերապրողի զաւակ՝ Գարլոս Արսլանեանի ճանապարհորդութեան մասին, Լիբանանէն Արժանթին: Արսլանեան ըլլալով անիրաւուած ազգի մը զաւակ, որոշած է Արժանթինի մէջ իրաւաբանութիւն ուսանիլ: Անհեթեթ պատճառներու համար իրաւաբանութեան ոլորտին մէջ աշխատելու առաջին հայցը մերժուելէն անմիջապէս ետք՝ Գարլոս Արսլանեան թափած է դատախազի մը դուռը եւ ներկայացուցած իր վրդովումը՝ կատարուած անիրաւութեան դէմ, որմէ ետք այդ դատախազը զինք ընդունած է գործի: Հակառակ իրմէ պահանջուածին տակաւին տիրապետած չըլլալուն, Արսլանեան ինքնաշխատութեամբ շուտով տիրապետած է բոլոր պահանջներուն եւ տարիներ ետք դարձած է Արժանթինի դատախազը՝ այն դատարանին, որ 1985 թուականին հինգ ամիս շարունակ դատաւարած է Արժանթինի բռնատէր համակարգի կառավարիչներուն դէմ դատը:

Օքամփօ նաեւ անդրադարձաւ ցեղասպանութեան հոշակագիրի սահմանափակումներուն եւ Միջազգային Քրէական Դատարանի դատախազութեան օրերուն իր գործունէութեան մասին՝ ընդգծելով, որ համաշխարհային միասնականութիւնը կարելոր է պայքարելու համաշխարհային մեծ պետութիւններու քաղաքականութեան: Վերջապէս, ան խօսեցաւ Արցախի հարցին առընչութեամբ իր հետաքրքրութեան եւ այս ուղղութեամբ իր տարած աշխատանքներուն մասին:



Հուսկ, իր եզրափակիչ օրհնութեան խօսքը ուղղեց ներկաներուն Արամ Ա. Կաթողիկոս: Ողջունելէ ետք Օքամփոյին ներկայութիւնը Անթիլիասի Մայրավանքին մէջ, Նորին Սրբութիւնը իր միտքերը բաժնեց հինգ հիմնական կէտերու մէջ: Ան ըսաւ, որ մարդկութեան դէմ ոճիրի կանխարգիլումը պէտք է սկսի ազգային գետնի վրայ, իսկ Ցեղասպանութեան եղելութեան դիմաց լռողները եւս հարկ է ենթակուին պատժամիջոցներու: Վեհափառ Հայրապետը դիտել տուաւ նաեւ, որ Միջազգային Ընտանիքը իրաւական գործընթացի կողքին պէտք է քաղաքական կամք պարտադրէ իր հաշուեյարդարին մէջ եւ կարելորեց համաշխարհային կառավարման նոր մեթոտի մը ստեղծման անհրաժեշտութիւնը:

Իր խօսքի աւարտին, բարձր գնահատելով Դոկտ. Լուիս Մորենօ Օքամփոյի հայանպաստ աշխատանքը եւ Հայ Դատի պահանջատիրական պայքարին մէջ անոր ունեցած ներդրումը՝ ան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ասպետի կարգ»ի շքանշանով պարգևատրեց զինք:

«ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՈՐԲԵՐԸ» ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՅԱՆԴԵՍ՝ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հովանաւորութեամբ, Ուրբաթ, 19 Ապրիլ 2024-ի առաւօտուն, «Հայոց Յեղասպանութիւնը եւ Հայ որբերը» հատորին շնորհահանդէսը կատարուեցաւ Հայոց Յեղասպանութեան որբերու «Արամ Պէգիբեան» թանգարանի յարկին տակ, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա վերլուծական հարթակ»ին կազմակերպած «Արցախի իրաւունքներու վերականգնումի հրամայականը ընդդէմ Ազրայէճանի ցեղասպանական քաղաքականութեան» խորագրեալ համագումարի մասնակիցներուն եւ «Թռչնոց Բոյն»ի խնամակալութեան ու տեսչութեան:

Բացման խօսքով հանդէս եկաւ Կաթողիկոսութեան համահայկական խորհրդաժողովները համակարգող՝ Շահան Գանտահարեան: Ան դիտել տուաւ, որ բնական էր Վեհափառ Հայրապետին տնօրինումով եւ հրաւերով կազմակերպուած այս տարուան ապրիլեան գիտաժողովը «Թռչնոց Բոյն»-էն մեկնարկելը, որովհետեւ որբանոցներուն մէջ կազմաւորուեցան Յեղասպանութեան վերապրող սերունդներ՝ գիտակից ըլլալով կազմակերպուած հաւաքակա-



նութիւն դառնալու կարեւորութեան: Իր խօսքին մէջ, Գանտահարեան անդրադարձաւ Ազգ. Բարերար Տէր եւ Տիկ. Ալեքքօ եւ Անի Պէգիբեան ամուլին նուիրեալ ու ազգանուէր աշխատանքին: Ան ըսաւ, որ դրժբախտաբար, վերջերս կորսնցուցինք Անի Պէգիբեանը, սակայն անոր ու ամուսնոյն յանձնառութիւնը սոյն թանգարանին եւ ընդհանրապէս Հայ դատին նկատմամբ վառ օրինակ պիտի մնայ Հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ:

Ապա խօսք առաւ Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգ. ակադեմիայի (Գ.Ա.Ա.) ակադեմիկոս, պատմաբան՝ Փրոֆ. Աշոտ Մելքոնեան, որ ուրախութիւն յայտնեց ի տես Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հայաստանի Գ.Ա.Ա.-ի միջեւ գոյացած համագործակցութեան, որուն պտուղներէն մէկն է վերոնշեալ հատորին մղում տուած գիտաժողովը: Այս իմաստով ան իր որդիական երախտագիտութիւնը յայտնեց Արամ Ա. Կաթողիկոսին:

Խօսք առին նաեւ Հ.Հ. Գ.Ա.Ա. Պատմութեան ինստիտուտի փրոֆեսորներ՝ Գէորգ Ստեփանեանն ու Արմէն Մարուքեանը: Անոնք խօսեցան հատորին նախորդող գիտաժողովին առիթ ընծայած գործընթացին, ինչպէս նաեւ ներկային մէջ նոյն ցեղասպանական արարքը շարունակուելուն եւ յանցագործներուն անպատիժ մնալուն մասին:

Ապա բեմ բարձրացաւ նոյն ինստիտուտի Պատմական Գիտութիւններու թեկնածու՝




Գոկտ. Արփինէ Բաբլումեան, որ ներկայացուց գիրքը: Հատորը կը սկսի Արամ Ա. Կաթողիկոսին Հայրապետական օրհնութեան գիրով, որմէ ետք կը կարդանք Գէորգ Ստեփանեանի խօսքը: Հատորը կը պարունակէ Արմէն Մարուքեանի «Հայ որբերն Օսմանեան Կայսրութեան ցեղասպանական քաղաքականութեան թիրախում» վերնագրեալ եւ Բաբլումեանի աշխատասիրութեամբ Մա-



րիա ճէջքպսընի օրագրութիւնը՝ որպէս Ցեղասպանութեան սկզբնաղբիւր յօդուածները: Այս առումով Բաբլումեան ընդգծեց, որ օրագրութեան վերլուծութիւնը եւ համեմատական որոշակի նկատառումները կը հարստացնեն յօդուածը: Հատորը կը պարունակէ Սուսաննա Յովհաննիսեանի «Որբերու հայրիկը» յօդուածը, ուր հեղինակը կ'անդրադառնայ Յովհաննէս Թումանեանի որբախնամ գործունէութեան,





Նարինէ Մարգարեանի յօդուածը 1922-1925 թուականներուն որբերուն կողմէ լոյս տեսած «Տուն» ամսագիրին մասին, Անի Ֆեշէնկճեանի յօդուածը «Որբաշխարհի աստղ» պաշտօնաթերթին մասին, Կարօ Տէրունեանի յօդուածը Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցի մասին եւ երկու հարցազրոյցներ՝ Մարիա Յովսէփեանի կողմէ, մէկը «Թռչնոց Բոյն»-ի օրուան տնօրէն՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեանի հետ՝ Մարիա Ճէյքըպսընի գործունէութեան եւ որբանոցին ներկայ իրավիճակին մասին, իսկ միւրը՝ «Թռչնոց Բոյն»-ի նախկին սաներէն՝ Արփինէ Յովսէփեան-Պաղտասարեանի հետ:

Շնորհակալութեան ու գնահատանքի խօսք արտասանեց նաեւ Կաթողիկոսարանի Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեան: Ան անդրադարձաւ Երեւանի մէջ կայացած «Թռչնոց Բոյն»-ի 100-ամեակին նուիրուած գիտաժողովին, որուն մասնակցած էր ինք իբրեւ տնօրէն այս հաստատութեան, եւ կարեւորեց «Թռչնոց Բոյն»-ին եզակի դերակատարութիւնը, յատկապէս յետ-ցեղասպանութեան ժամանակաշրջանին, որ լծուած էր Յեղասպանութենէն մազապուրծ փրկուած Հայ որբերու խնամքին ու դաստիարակութեան:



Շնորհանդէսի աւարտին, ներկաները առիթը ունեցան ծանօթանալու թանգարանին ու անոր տարբեր բաժանմունքներուն:



**«ԱՐՑԱԽԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԵԱԼ ՉԷ՛ ԵՒ
ԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆ Է»**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ մատուցուած Ս. Էւ Անմահ Պատարագի ընթացքին, Կիրակի, 21 Ապրիլ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Հայրապետական պատգամ յղեց հաւատացեալ ժողովուրդին՝ հիմնականօրէն անդրադառնալով արցախահայութեան տագնապին գծով լուծումներ որոնելու եւ արցախահայութեան տուն վերադառնալու իրաւունքը հաստատելու պայքարին մէջ Հայ եկեղեցւոյ առած քայլերուն:

Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի ձեռամբ մատուցուած Ս. Պատարագին, հաւատացեալներու կողքին, ներկայ էին այդ օրերուն Կաթողիկոսարանին մէջ գումարուող համագումարի մասնակիցները:

Իր պատգամին մէջ, առաջին հերթին, Վեհափառ Հայրապետը վերջի-շեցուց Քրիստոսի՝ իր աշակերտներուն վստահած առաքելութիւնը, որուն իրագործումին շնորհիւ ներկայիս մենք կը վայելենք Հայ եկեղեցւոյ հովանին:



Առ այդ, այս պրիսմակէն դիտելով Հայ եկեղեցւոյ պատմութիւնը՝ Նորին Սրբութիւնը դիտել տուաւ, որ Հայ եկեղեցին մի՛շտ ալ իր կեանքը նոյնացուցած է իր ժողովուրդի կեանքին հետ. այս իմաստով արցախահայութեան ներկայի հրատապ հարցերը կը պատկանին նաե՛ւ մեր եկեղեցւոյ: Ան ընդգծեց, որ Հայ եկեղեցին, իր մարգարէական կոչումին հաւատարիմ մնալով, յորդորողի եւ վտանգներու ու շարիքի դիմաց կեցուածք ճշդողի եւ ուղղողի դեր ստանձնած է՝ վկայ Ղեւոնդ Երէցներն ու Խրիմեան Հայրիկները:

Անդրադառնալով վերջին տարիներուն Հայաստանի մէջ մեր եկեղեցւոյ նկատմամբ արտայայտուող կեցուածքներուն, որոնց նպատակը լուսանցքայնացնել է մեր եկեղեցւոյ պատմական դերակատարութիւնը՝ Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց. «Նման երեւոյթներու եւ փորձերու դիմաց, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, մենք «Ո՛չ» կ'ըսենք. կը մերժենք նման մօտեցումներ եւ քայլեր՝ ոեւէ մէկուն կամ որեւէ իշխանութեան կողմէ: Այդ փորձերը խոտոր կը համեմատին մեր ժողովուրդին, եկեղեցւոյ առաքելութեան, մեր պատմութեան ոգիին ու վկայութեան»: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը իր զօրակցութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ նշելով, որ Հայ եկեղեցին մէ՛կ եկեղեցի է՝ իր Հայրապետական երկու Աթոռներով. ուստի, որեւէ արարք, կեցուածք կամ արտայայտութիւն՝ ուղղուած Ս. Էջմիածնին, ուղղուած է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որովհետեւ մեր եկեղեցին մէկ է, եւ մենք չենք կրնար լուռ մնալ նման երեւոյթներու դիմաց:

Այս բոլորէն ետք, Արամ Ա. Կաթողիկոս դիտել տուաւ, որ Մեծի Տանն



Կիլիկիոյ Ս. Աթոռը իր առաքելութիւնը ըմբռնած է որպէս հաւատքի՝ առաքելութիւն եւ ազգային ծառայութիւն: «Մեր պատմութիւնը յստակ կերպով կը վկայէ, որ հոգեւորն ու ազգայինը, հայրենիքը, ազգն ու եկեղեցին մէկ ամբողջութիւն կը կազմեն: Եկեղեցին ինքզինք պէտք չէ նոյնացնէ քաղաքական, պետական, կուսակցական կառուցներու հետ. ան ինքզինք պէտք է նոյնացնէ Հայաստանի գերագոյն շահերուն եւ մեր ազգի իտէալներուն հետ», շեշտեց Նորին Սրբութիւնը՝ միաժամանակ յիշեցնելով անցնող տարիներուն Հայրենիքը յուզող հարցերուն ու մարտահրաւէրներուն նկատմամբ մեր Ս. Աթոռին կեցուածքներն ու տեսակէտները: «Յաճախ ըսած ենք եւ պիտի ըսենք, թէ Արցախը մեզի համար անցեալ չէ՛. Արցախը մեզի համար միշտ ներկայ է, մեր կեանքին մէջ մնայուն տազնապ է եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան օրակարգին վրայ միշտ առաջնահերթութիւն է», ըսաւ ան եւ այս առումով անդրադարձաւ «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ին կազմակերպած գիտաժողովին:

Բացատրելով Հարթակին եւ այս գիտաժողովին նպատակները, մասնակիցներուն մասնագիտական եւ իրենց ոլորտներուն մէջ ազդեցիկ դերակատարութիւնը՝ Նորին Սրբութիւնը անգամ մը եւս շեշտեց, որ մեր Ս. Աթոռը Արցախի ժողովուրդին հետ է եւ անոր տազնապին լուծման համար, միջազգային համայնքի երաշխաւորութեամբ, իրաւական եւ քաղաքական ուղիներու որոնման աշխատանքներ կը տանի, որովհետեւ Արցախի մէջ կատարուած ցեղասպանութեան դէմ պայքարը լողունքներէ անդին կը պահանջէ գործնական քայլեր: Ան յիշեցուց, որ հայութեան պատմութիւնը բնաւ զիջումի քաղաքականութեան պատմութիւն չէ եղած, այլ եղած է մարտունակ քաղաքականութեան պատմութիւն: Համայն հայութեան Հայրենիք Հայաստանի ու Արցախի տազնապները նաեւ մե՛ր տազնապներն են, ըսաւ ան ու իր խօսքը եզրափակելով՝ յորդորեց. «Հետեւաբար, եկէ՛ք, սիրելի ժողովուրդ Հայոց, Աստուծոյ օրհնութեամբ մեր հաւատքը ու մեր յոյսը վերահաստատենք՝ Արցախի եւ մեր հայրենի ժողովուրդին նկատմամբ: Եկէ՛ք, Աստուծոյ օրհնութեամբ, գործնապէս ցոյց տանք, թէ մենք մէկ Հայրենիք ունինք, մէկ ազգ ենք եւ այս անանջատելի մէկութեան գիտակցութեամբ շարունակենք զօրավիգ կանգնիլ, գործնապէս, Արցախին, Հայաստանին եւ հայրենի մեր ժողովուրդի գաւակներուն»:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՍՈՐԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՈՒ 109-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցած համաժողովրդային ոգեկոչումներու կողքին, այս տարի Լիբանանի մէջ միջ-համայնքային յատուկ ձեռնարկներով ոգեկոչուեցան Հայոց Ցեղասպանութեան սրբացեալ նահատակները եւ ասորական ջարդերու զոհերը:

22 Ապրիլ 2024-ին, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի հովանաւորութեամբ եւ հիւրընկալութեամբ, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը (Մ.Ա.Ե.Խ.) կազմակերպեց դասախօսութիւն մը՝ «Որպէսզի մեր յիշողութիւնը միշտ թարմ մնայ» խորագրով: Դասախօսեց Խորհուրդի Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Միշէլ Ապս: Դասախօսութեան ընթացքին փաստաթուղթեր ցուցադրելով, ան հանրութեան պարզեց Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութիւն մը ըլլալու հանգամանքը: Դոկտ. Ապս իր խօսքին մէջ բաղադատական մը կատարեց անցեալին տեղի ունեցած Ցեղասպանութեան ու ներկայիս Արցախի մէջ գործադրուած բռնի տեղահանութեան միջեւ:

25 Ապրիլ 2024-ին, կազմակերպութեամբ Ասորիներու Լիկային, Պէյրութի Ասորի Ուղղափառ Առաջնորդարանէն ներս տեղի ունեցաւ յիշատակի ձեռնարկ, ուր խօսք արտասանեցին Լիբանանի Խորհրդարանի Հայկական Պլոքի ներկայացուցիչ՝ Տիար Յակոբ Բագրատունի եւ քաղաքական այլ անձնաւորութիւններ: Անոնք իրենց խօսքին մէջ դատապարտեցին Թուրքիոյ որդեգրած մերժողական կեցուածքը եւ պահանջեցին պատմութեան ընթացքին անիրաւուած ժողովուրդներու իրաւունքներուն վերականգնումը:

26 Ապրիլ 2024-ին, «Լիբանանեան Ուժեր» կուսակցութիւնը յատուկ երեկոյ մը կազմակերպեց՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան եւ ասորական ջարդերուն: Զեռնարկին խօսք առին մտաւորականներ, քաղաքագէտներ եւ հոգեւորականներ: Այս առիթով, յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, արաբերէն լեզուով խօսք արտասանեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան: Հոգշ. Հայր Սուրբը ընդհանուր գիծերով անդրադարձաւ մարդկային իրաւանց հիմքը հանդիսացող արդարութեան, Թուրքիոյ փանթուրանական նկրտումներուն եւ արաբական աշխարհի մէջ թրքական ներկայութեան:

Յիշեալ ձեռնարկներուն, ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթանեանն ու Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը:

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԻՇԽԱՆԻ ԿԱՐԳ»Ի
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԻԱՏՐԵՑ
ԲԱՐԵՐԱՐ ԵՐԶՕ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԸ**

Հնդառաջելով Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանի խնդրանքին եւ ի գնահատութիւն երկար տարիներու ազգանուէր ու եկեղեցանուէր գործունէութեան, Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Իշխանի Կարգ»ի շքանշանով պարգեւատրեց Բարերար Երջօ Սամուէլեանը:



Այս առիթով հրապարակուած Հայրապետական սրբատառ կոնդակին մէջ Նորին Սրբութիւնը հետեւեալ կերպով բնութագրած է եկեղեցական ու ազգային բնագաւառին մէջ բարերար Սամուէլեանի գործունէութիւնը. «Լիբանանի հայութիւնը Զեզ ճանչցաւ որպէս լուսարձակներէ հեռու՝ սակայն իր ազգային, եկեղեցական, կրթական ու ընկերային կեանքէն ներս բազում բարերարութիւններով կարեւոր ներդրում ունեցող սրտակից ազգային ու առատաձեռն բարերար: Լիբանանեան պատերազմի թէժ օրերուն, Լիբանանի Ազգ. Առաջնորդարանը ստիպողաբար հեռացաւ իր կայքէն եւ գործեց

շատ ծանր ու դժուար պայմաններու մէջ: Պուրճ Համուտի մէջ նոր Առաջնորդարան մը կառուցելու անյետաձգելի ծրագիրը իրականացաւ շնորհիւ Զեր իշխանական նուիրատուութեան: Նորակառոյց Ազգ. Առաջնորդարանի համալիրէն ներս «Երջօ Սամուէլեան» անունով մկրտուած սրահը Մենք կը նկատենք շօշափելի վկայութիւն մը՝ Լիբանանի հայութեան բարձր գնա-

հատանքին ու խոր երախտագիտութեան: Քաջ գիտենք, որ Աստուծոյ կողմէ Ձեզի շնորհուած բարիքները անաղմուկ ու առատաձեռն կերպով բաժնած էք մեր ժողովուրդին, յատկապէս կարիքաւոր դասին հետ՝ թէ՛ Ազգ. Առաջնորդարանի Ընկերային ծառայութեան բաժանմունքին ճամբով եւ թէ՛ առանձնապէս՝ «Զուարթնոց» Կեդրոնէն սկսեալ մինչեւ «Թռչնոց Բոյն», եւ հոգալով համեստ ընտանիքներու զաւակներուն կրթաթոշակը ու չքաւոր հիւանդներու բժշկական խնամքին ծախսերը»:

Սրբատառ կոնդակի աւարտին, նորին Ս. Օծութիւնը իր աղօթքը բարձրացուցած է առ Աստուած, որ բարերար Երջօ Սամուէլեանին ու անոր հարազատներուն պարգեւէ քաջառողջութիւն եւ Տիրոջ օրհնութեամբ վարձահատոյց ըլլայ անոնց:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՑԵԼԵՑ
ԼԵՌԱԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀԻԻՍ. ԼԻԲԱՆԱՆԻ
ԱՍՈՐԻ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՒՅ ԱՌԱՋՆՈՐԴԸ**

Ուրբաթ, 1 Մարտ 2024-ին, Լեռնալիբանանի եւ Հիւս. Լիբանանի Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ նորընտիր Առաջնորդ՝ Խրիստոսթոմոս Միքայէլ Շամուն այցելեց Արամ Ա. Կաթողիկոսին՝ ստանալու համար անոր օրհնութիւնը իր առաջնորդական առաքելութեան սկզբնաւորութեան:

Վեհափառ Հայրապետը ողջունեց նորընտիր Առաջնորդին ընտրութիւնը եւ յաջողութիւն մաղթեց անոր՝ իր հովուական աշխատանքներուն մէջ: Նորին Սրբութիւնը յիշեց, որ երկար դարերու գործակցութիւն գոյութիւն ունի երկու եկեղեցիներուն միջեւ, որոնք աստուածաբանական ու դաւանական նոյն տեսակէտները ունին:



Հանդիպման աւարտին, Նորին Ս. Օծութիւնը ձեռաց խաչ մը նուիրեց նորընտիր Շամուն Եպիսկոպոսին:



**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ԵԹՈՎՊԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ**

Երկուշաբթի, 4 Մարտ 2024-ին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի եթովպական համայնքը ներկայացնող պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ համայնքի Հոգեւոր Հովիւին եւ վարչութեան ատենապետին:



Այցելուները Նորին Ս. Օծուխեան փոխանցեցին Եթովպիոյ եկեղեցւոյ Հոգեւոր Պետին եղբայրական ողջոյնները, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին համայնքին նկատմամբ անոր ցուցաբերած հոգածութեան եւ պետութեան առնչուած կարգ մը հարցերու գծով խնդրեցին անոր միջամտութիւնը:

Յայտնենք, որ Լիբանանէն ներս կը գործեն շուրջ 70,000 եթովպացիներ, որոնց շուրջ 50,000-ը կը պատկանին Եթովպիոյ Ուղղափառ եկեղեցւոյ: Անոնք Լիբանանի մէջ ունին եկեղեցի եւ կեդրոն, Անթիլիաս-Պիքֆայա ճանապարհին միջեւ շրջանի մը մէջ: Նկատի ունենալով, որ եթովպական համայնքը պետական ճանաչում չունի եւ Հայ եկեղեցւոյ կողքին Արեւելեան Ուղղափառ եկեղեցական ընտանիքին մաս կը կազմէ, շուրջ 20 տարիներ առաջ կառուցուած եկեղեցին արձանագրուած է Կաթողիկոսարանին անունով, եւ անհրաժեշտութեան պարագային Կաթողիկոսարանը օգտակար կը դառնայ եթովպական համայնքին:



**ԴՈԿՏ. ՆՈՐԱ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱԻ
Ե.Հ.Խ.Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՓՈԽ ԱՏԵՆԱԴԵՏ**

5-8 Մարտ 2024-ին, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) կեդրոնատեղիին (Փրնեկ, Զուիցերիա) մէջ տեղի ունեցաւ Խորհուրդի միջազգային հարցերու յանձնաժողովի հանդիպումը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ յանձնաժողովի իբրեւ լիիրաւ անդամ իր գործօն մասնակցութիւնը բերաւ Դոկտ. Նորա Պայրագտարեան: Յայտնենք, որ այս յանձնաժողովը Ե.Հ.Խ.ի կարեւորագոյն կառույցներէն մէկն է, որ կը զբաղի քաղաքական, ընկերային, տնտեսական եւ միջազգային հարցերով:

Յանձնաժողովի փոխ ատենապետուհի ընտրուեցաւ Դոկտ. Նորա Պայրագտարեան, որ վերջին տասը տարիներուն անդամ էր նոյն Խորհուրդին եւ կարեւոր դերակատարութիւն ունեցած էր անոր աշխատանքներուն մէջ: Յանձնաժողովի ատենապետն է Դոկտ. Մաթիուս Ճորճ, որ մօտէն ծանօթ է Վեհափառ Հայրապետին եւ ընդհ. քարտուղարն է Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդին:

Դոկտ. Նորա Պայրագտարեան Փրնեկի մէջ յանձնաժողովի նիստին դասախօսութիւն մը տուաւ “Global Governance: Challenges and Emerging Geopolitical Trends” նիւթին շուրջ:

Յայտնենք, որ Դոկտ. Պայրագտարեան անդամ է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդր. Վարչութեան Քաղաքական ժողովին եւ քաղաքական գիտութեան դասախօս՝ Պէյրութի Ամերիկեան, ինչպէս նաեւ Լիբանանեան Պետական համալսարաններուն մէջ:



ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Ե.Հ.Խ.Ի ՀԱՄԱԽՈՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ
ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԺՈՂՈՎԻՆ

10-15 Մարտ 2024-ին, Պոլսոյ մէջ, Տիեզերական Պատրիարքութեան հրաւերով, գումարուեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) Համախորհուրդական եւ համագործակցութեան մնայուն յանձնախումբի տարեկան ժողովը: Արամ Ա. Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ ժողովին մասնակցեցաւ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան:

Յանձնախումբը ունի 14 անդամ-անդամուհի՝ եօթը Ուղղափառ ու Արեւելեան Ուղղափառ եւ եօթը Բողոքական եկեղեցիներ, յանձնախումբը կ'ընտրուի եօթը տարին անգամ մը գումարուող Ե.Հ.Խ.ի համաժողովէն եւ կը քննարկէ Խորհուրդին յաջորդ եօթնամեակի ծրագիրներն ու գործունէութիւնը եւ կ'երաշխաւորէ, որ Ե.Հ.Խ.ի բոլոր անդամ եկեղեցիները, քրիստոնէական սիրով լեցուած, հեզասահ յարաբերութիւն ու գործակցութիւն ունենան Խորհուրդի կեանքին մէջ: Յայտնենք, որ յանձնախումբը ծնունդ առաւ Արամ Ա. Կաթողիկոսին Ե.Հ.Խ.ի ատենապետութեան օրերուն եւ Նորին Սրբութեան ջանքերով՝ առաւելաբար ապահովելու համար Ուղղափառ եկեղեցիներու անդամակցութեան շարունակութիւնը Խորհուրդին մէջ:

Յանձնախումբին աշխատանքը մեծ մասամբ յատկացուեցաւ Ե.Հ.Խ.ի կանոնադրութեան եւ անդամակցութեան կարգ մը կէտերու լուսաբանութեան, յանձնաժողովներու գործունէութեան եւ 2023-2030-ի ծրագիրներու ներկայացումին ու ուղղորդումին, որուն իր մասնակցութիւնը բերաւ Ե.Հ.Խ.ի Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Ճերի Փիլէյ:

Այս առիթով ժողովականները նաեւ այցելեցին Պոլսոյ կարգ մը Ուղղափառ ու Բողոքական եկեղեցիներ եւ աղօթեցին հաւատացեալներուն հետ, եւ հանդիպեցան Ն.Ա.Տ. Բարթոլոմիո Տիեզերական Պատրիարքին ու Ն.Ա.Տ. Սահակ Արք. Մաշալեան Պատրիարքին: Նարեկ Արքեպիսկոպոս երկու Պատրիարքներուն փոխանցեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եղբայրական ողջոյնները:

Շաբաթ, 16 Մարտ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի մուտն ի վիրապ տօնին առթիւ, Նարեկ Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ Գուգլունճուքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» եկեղեցւոյ մէջ Սահակ Պատրիարքին հանդիսապետութեամբ մատուցուած Ս. Պատարագին եւ ճաշի ընթացքին իր սրտի խօսքը ուղղեց հաւատացեալ ժողովուրդին:

Պոլիս կեցութեան օրերուն, Սրբազան Հայրը միջ-եկեղեցական աշխատանքային հանդիպումներ ունեցաւ Քաղկեդոնի Յոյն Ուղղափառ Առաջնորդ՝ Էմմանուէլ Մետրոպոլիտին եւ Թուրքիոյ Հայ Կաթողիկ Առաջնորդ՝ Գերապայծառ Լեւոն Զեքիեանին հետ: Ան նաեւ այցելեց «Մարմարա», «Ժամանակ» ու «Ակօս» թերթերու խմբագիրներուն եւ «Արաս» հրատարակչականի տնօրէնին:

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ
Ե.Հ.Խ.Ի ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

Ժընեյի (Զուիցերիա) մէջ տեղի ունեցած Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) ներկայ ութամեայ նստաշրջանի աշխատանքներուն ծրագրաւորման ժողովներուն ծիրին մէջ, կլիմայական արդարութեան եւ կայուն զարգացման յանձնաժողովին յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իր մասնակցութիւնը բերաւ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) անդամ՝ Արշաւ Ճէրէճեան:



Յանձնաժողովը ընդգծեց Եկեղեցիներու դերակատարութիւնը կլիմայական արդարութեան, սնունդի եւ ջուրի, տնտեսագիտական, կենսաբազմազանութեան եւ տիաքոնիայի հարցերու լուծման անհրաժեշտութեան՝ դիտել տալով, որ վերոնշեալներուն բարւոք լուծումները կ'ապահովեն մարդկանց հիմնական իրաւունքները: Սոյն օրակարգերը յառաջիկային պիտի շարունակուին մշակուիլ եւ ի գործ դրուիլ թէ՛ առցանց եւ թէ՛ անձամբ գումարուած նիստերու ընթացքին, որպէսզի համագործակցութիւնը առաւել եւս խթանուի եւ ջանքերը աւելի լաւ կերպով համադրուին:



ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԴՀ. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հինգշաբթի, 21 Մարտ 2024-ին, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Ճերի Փիլէյ այցելեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, ընկերակցութեամբ նոյն Խորհուրդին մէջ Միջին Արեւելքի առնչուած շարք մը պատասխանատուութիւններ ունեցող Գարլա Խիժոյեանին եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) փոխ ընդհանուր քարտուղար՝ Սեդա Խտըշեանին:

Նորին Արքեպիսկոպոս Եւ Ընդհ. Քարտուղարը երկար հանդիպում մը ունեցան, որուն ընթացքին, ընդառաջելով Ընդհ. Քարտուղարի փափաքին՝ Նորին Ս. Օծութիւնը ընդհանուր արժեւորում մը կատարելէ ետք միջ-եկեղեցական շարժումին պարզած ներկայ կացութեան՝ իր տեսակէտները յայտնեց Ե.Հ.Խ.ի կարգ մը ծրագիրներու ու աշխատանքներու գծով, միաժամանակ շեշտեց կարգ մը մարզերու առաջնահերթութիւն տալու հրամայականը:



Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը Խորհուրդին ներկայ նախագահներէն մէկն է, իսկ անցեալին երկու շրջաններ, շուրջ 16 տարի, վարած էր Խորհուրդի կեդր. ու գործադիր վարչութեանց ատենապետութիւնը:

Խորհրդակցական հանդիպումէն ետք, Դոկտ. Փիլէյ ճաշի հիւրը եղաւ Արամ Ա. Կաթողիկոսին, ապա Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեանի առաջնորդութեամբ շրջեցաւ Մայրավանքի բաժանմունքները՝ մօտէն տեղեակ դառնալով կատարուող աշխատանքներուն:

Յայտնենք, որ նոյն օրը առաւօտեան, Ընդհ. Քարտուղարը իր պատուիրակութեան հետ միասին այցելած էր Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի համալիր, ինչպէս նաեւ Դպրեվանք եւ «Թոչնոց Բոյն» ու Յեղասպանութեան որբերու թանգարան:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱԻԱՔ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱԿԱՆՔԻՆ ՄԵՋ

Չորեքշաբթի, 20 Մարտ 2024-ին, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի 50-ամեակին առիթով եւ հիւրընկալութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, միջ-եկեղեցական յատուկ հանդիպում մը տեղի ունեցաւ «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ՝ պատուոյ հիւր ունենալով Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Ճերի Փիլէյ:

Բացման խօսքով հանդէս եկաւ Կաթողիկոսարանի Միջ-եկեղեցական Բաժանմունքի վարիչ՝ Գերայ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան, որ ներկայացուց հանդիպման նպատակը: Ապա, Արամ Ա. Կաթողիկոս գլխաւոր բանախօսութիւնը տուաւ, որմէ ետք Դոկտ. Փիլէյ ներկայացուց Ե.Հ.Խ.ի դիմագրաւած մարտահրաւէրները: Բանախօսութիւններուն յաջորդեցին քննարկումներ, իսկ փակման խօսքը արտասանեց Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Միշէլ Ապս:

Հանդիպման ներկայ էին Լիբանանի Եկեղեցիներու Հոգեւոր Պետերու ներկայացուցիչներ, Ե.Հ.Խ.ի Միջին Արեւելքի ծրագիրներու պատասխանատու՝ Գարլա Խիթոյեան, զանազան համալսարաններու դասախօսներ, Լիբանանի մէջ գործող միջ-եկեղեցական կառույցներու ներկայացուցիչներ, Ե.Հ.Խ.ի տարբեր յանձնախումբերու մէջ գործող անդամներ, ինչպէս նաեւ օրուան հանդիպման կազմակերպիչ եւ Մ.Ա.Ե.Խ.ի փոխ Ընդհ. Քարտուղար՝ Սեդա Խտըշեան: Քննարկման նիստին մասնակիցները իրենց տեսակէտները փոխանցեցին եւ հարցումներ ուղղեցին Վեհափառ Հայրապետին ու Ընդհ. Քարտուղարին:

Նորին Արքեպիսկոպոս, մեկնելով միջ-եկեղեցական շարժումին իր տասնամեակներու հարուստ փորձառութենէն, համապարփակ ակնարկ մը նետեց միջ-եկեղեցական շարժումին զարգացման եւ ներկայ մարտահրաւէրներուն ու եզրափակեց իր թելադրութիւններով: Ան հինգ կէտերով ընդգծեց այն գլխաւոր տարածքները, որոնց մէջ հարկ է ծաւալել միջ-եկեղեցական շարժման գործունէութիւնը: Այս ծիրին մէջ, ան կարեւորեց ընկերային, քաղաքական եւ տնտեսական իրականութիւններու քննական ըմբռնումը, որ հնարաւոր կը դարձնէ անարդարութիւնները աւելի լաւ տեսնելն ու վերլուծելը (Conscientization) եւ հարցերը իրենց համաժիրին մէջ քննելը (Contextualization): Նորին Ս. Օծութիւնը նաեւ ընդգծեց եկեղեցիներու միութեան եւ աղբիւրներու փոխանակման կարեւորութիւնը, որմէ ետք անդրադարձաւ Արեւելքի եկեղեցիներուն իւրայատուկ դրուածքին: Վերջապէս, Նորին Արքեպիսկոպոս յայտնեց, որ Արեւելքը Քրիստոնէութեան բնօրրանն է, հետեւաբար քրիստոնեաները կարելի չէ պոկել իրենց հողերէն՝ հակառակ բազմաթիւ առկայ դժուարութիւններուն:

Վեհափառ Հայրապետին բանախօսութենէն ետք, խօսք առաւ Դոկտ. Փիլէյ, որ անդրադարձաւ Ե.Հ.Խ.ի դիմագրաւած մարտահրաւէրներուն եւ անոնց լուծումներու որոնման աշխատանքին: Ան բացատրեց վերջին տասնամեակներուն ընթացքին Ե.Հ.Խ.ին որդեգրած ուղղութիւնը՝ ուխտագնացութիւնը, որ տարբեր մարդոց միասին ուղեւորութիւն կ'ենթադրէ: Այս ըսելով՝ ան վստահեցուց, որ թէկուզ համաշխարհային ներկայ հակամարտութիւններն ու պատերազմները մէկ կողմէ եւ շատ մը հարցերու շուրջ եկեղեցիներու տարակարծութիւնները միւս կողմէ կը դժուարացնեն խաղաղութեան հասնիլը եւ եկեղեցիներու միութիւն ապահովելը, այնուամենայնիւ Ե.Հ.Խ.ը կ'աշխատի ի նպաստ ընկերակցութեան եւ երկխօսութեան եւ յայտնեց, որ իրողութիւնը մեզի կը պարտադրէ տեղական հակամարտութիւններու վերլուծումը շանջատել համաշխարհային շրջագիծէն: Դոկտ. Փիլէյ հիմնականօրէն ընդգծեց երկխօսութեան միջոցով տարբեր կողմեր մէկ սեղանի շուրջ բերելու Ե.Հ.Խ.ի առաքելութիւնը՝ խաղաղութեան եւ արդարութեան համար: Բանախօսը մանրամասն կերպով բացատրեց նաեւ Ե.Հ.Խ.ի իւրաքանչիւր յանձնախումբի առաքելութիւնը՝ ապագաղութատիրութեան, կանանց անհաւասարութեան, սեռային փոքրամասնութիւններու իրաւունքներուն, բնիկներու իրաւունքներուն, կլիմայի արդարութեան եւ այլ հրատապ հարցերու լուծումներու որոնման համար:

Հայն քննարկման նիստին յաջորդեց Մ.Ա.Յ.Խ.ի Ընդհ. Քարտուղարին փակման խօսքը, որ իր կարգին բարձրաձայնեց Միջին Արեւելքի եկեղեցիներու մարտահրաւէրներուն եւ Մ.Ա.Յ.Խ.ի տարած աշխատանքին մասին:

Դպրեվանքի սաներու առաջնորդութեամբ եւ երգեցողութեամբ՝ ներկաները էքիմէնիք աղօթքով եզրափակեցին երեկոն:



ԳԻՏԱԺՈՂՈՎ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՈՎ
ՍԿԻԶԲ ԱՌԱԲ «ԸՆԴԴԵՄ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ԳԻՏԱԺՈՂՈՎԸ**

«Արցախի էջը փակուած չէ՛ մեզի համար»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Արցախի իրաւունքներու վերականգնումի հրամայականը՝ ընդդէմ Ազըր-պէյճանի ցեղասպանական քաղաքականութեան» գիտաժողովը, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ կազմակերպութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա վերլուծական հարթակ»-ին, ընթացք առաւ Շաբաթ, 20 Ապրիլ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ՝ ներկայութեամբ Միջազգային Քրէական Դատարանի Հիմնադիր եւ Դատախազ՝ Դոկտ. Լուիս Մորենս Օքամփոյի եւ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց նախկին նախարար՝ Վարդան Օսկանեանի եւ մասնակցութեամբ Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն հրաւիրուած պատմաբաններու, միջազգային իրաւունքի մասնագէտներու եւ քաղաքագէտներու:

Հայրապետական պատգամով Արամ Ա. Կաթողիկոս կատարեց համագումարին բացումը: Ողջունելով Միջազգային Քրէական Դատարանի Հիմնադիր Դատախազին ներկայութիւնը՝ ան գնահատեց յանուն արդարութեան տարածանոր գործունէութիւնը: Վեհափառ Հայրապետը դիտել տուաւ, որ արդարութիւնը Աստուծոյ ընծայած շնորհքն է եւ եկեղեցւոյ առաքելութիւնը, որուն հաւատարիմ է Հայ եկեղեցին: Այս համագումարը կը միտի արծարծելու այն ճանապարհները, որոնք կը տանին արցախահայութեան իրաւունքներու վերականգնումին, որովհետեւ Արցախի էջը փակուած չէ՛ մեզի համար, ընդգծեց Նորին Սրբութիւնը:

Ապա, Արցախի կացութեան վերաբերեալ, Դոկտ. Օքամփոյի վերջին երկու տեղեկագիրներու լոյսին տակ, Նորին Ս. Օծութիւնը հարցադրումներով բարձրացուց Արցախի մէջ կատարուած ցեղասպանութեան հանդէպ միջազգային ընտանիքին անտարբերութեան խնդիրը, ինչպէս նաեւ՝ Միջազգային Քրէա-

կան Դատարանին դիմաց Ալիեւը հետաքննութեան ենթարկելու կարելիութիւնները: Ան նաեւ հարց դրաւ արցախահայուցեան վերադարձի եւ իրաւունքներու վերահաստատման խնդիրներով միջազգային օրէնքի հեռանկարները, մանաւանդ երբ Ազրպէյճան ինք կը հրաւիրէ արցախահայուցեանը Արցախ վերադառնալ որպէս Ազրպէյճանի քաղաքացիներ: Նորին Սրբութիւնը վերոնշեալ երկու խնդիրները որակեց իբրեւ գոյակցական պայքար եւ ընդգծեց անոնց թէ՛ իրաւաբանական եւ թէ՛ քաղաքական խնդիր ըլլալը: Այս հարցերուն լոյսին տակ, ան հրաւիրեց Դոկտ. Օքամփոն՝ «Ազրպէյճանի իրականացուցած ցեղասպանութիւնը եւ արցախահայուցեան վերադարձի իրաւունքը» խորագրով իր նիւթը ներկայացնելու:

Ընկերվար միջազգայնականի Փոխ Նախագահ՝ Մարիօ Նալպանտեան հակիրճ տողերով ներկայացուց դասախօսը եւ անոր հայանպաստ աշխատանքը: Դոկտ. Լուիս Մորենօ Օքամփօ իր խօսքին մէջ ընդգծեց, որ պէտք է շարունակենք Արցախի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւնները որակել իբրեւ ցեղասպանութիւն, որովհետեւ առանց ցեղասպանութեան հատուցման՝ արցախահայուցեան վերադարձը եւ իրենց իրաւունքներու ապահովումը անկարելի է: Խօսելով պետութիւններու անտարբերութեան մասին՝ ան ըսաւ, որ պատճառը պետութիւններու պարտաւորութիւններէ խուսափիլն է եւ իրենց աշխարհաքաղաքական շահերուն չհամընկնիլը: Այս ծիրին մէջ, ան յանձնարարեց նեղի մատնել ղեկավարները՝ Ալիեւի հետ իրենց գործակցութեան համար: Օքամփօ նաեւ բացատրեց միջազգային օրէնքի նրբութիւնները, օրինակ, երբ Ալիեւին ցեղասպան անուանելը կը պահանջէ յատուկ դատավարութիւն, ուստի նոյն խնդիրը տարբեր կերպով կարելի է բարձրացնել:

Օքամփոյի զեկոյցէն ետք, Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց նախկին նախարար՝ Վարդան Օսկանեան խօսք առնելով ըսաւ, որ ցեղասպանութեան դէմ պայքարը միշտ եղած է Հայ ժողովուրդի պայքարներու ճակատին՝ իւրաքանչիւր հանգրուանին ա՛լ աւելի մարտահրաւէրներ բանալով մեր առջեւ: Ան մտահոգութիւն յայտնեց, որ ժամանակի ընթացքին ցեղասպանութեան ճանաչման ու հատուցման պայքարը կրնայ նուաղիլ: Օսկանեան խօսեցաւ Արցախի ցեղասպանութեան հարցը բարձրացնելուն շուրջ Օքամփոյին տարած աշխատանքի մասին եւ հարց տուաւ մեր դատին համար իրաւաբանութեան եւ քաղաքականութեան ճիշդ օգտագործումին գծով՝ շեշտելով Հայաստանի իշխանութեան կարելոր դերակատարութիւնը այս հարցին շուրջ:

Զեկոյցներէն ետք տեղի ունեցաւ շահաւէտ քննարկում-գրոյց, ուր անդրադարձ կատարուեցան Արցախի մէջ կատարուած մարդկային իրաւունքներու խախտման քաղաքական հարց ըլլալուն, ինքնավարութեան, երրորդ կողմի պատասխանատուութեան, Արդարադատութեան միջազգային դատարանին մէջ այս հարցերուն բարձրացման, Սփիւռքի դերակատարութեան, անիրական երազներով պայքար տանելու վտանգին, Ռուսիոյ խաղաղապահ ուժերու

դերակատարութեան եւ հանրային կարծիքի ազդեցութեան մասին, ի շարս ալլոց:

Բացման նիստէն ետք հանդէս եկաւ Փրոֆ. Աշոտ Մելքոնեան, որ համապարփակ կերպով անդրադարձաւ Ազրայէջճանի աւելի քան մէկ դարէ ի վեր իր սահմանակից երկիրներուն եւ ժողովուրդներուն դէմ կատարած պատմամշակութային խեղաթիւրման քաղաքականութեան: Ապա, Փրոֆ. Գէորգ Ստեփանեան խօսեցաւ «Մեծ Ազրայէջճան» ծրագրին նպատակով համաթուրքական հայեցակարգի հանգրուաններուն եւ այդ մէկուն իրականացման համար աշխարհաքաղաքական շահերու բերումով տարածաշրջանային դերակատարներուն ազդեցութեան մասին: Դոկտ. Գայիանէ Յովհաննիսեան զեկուցեց Արցախի նկատմամբ Ազրայէջճանի վարած ազգային խտրական քաղաքականութեան եւ հակահայ ժողովրդագրական քաղաքականութեան դրսեւորումներուն մասին՝ հիմնական նպատակ ունենալով փոխել շրջանին էթնիկ պատկերը: Նիստը վարեց Փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան:

Երրորդ նիստի ընթացքին, փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան իբրեւ զեկուցաբեր լուսարձակի տակ առաւ 44-օրեայ պատերազմէն ետք տարածաշրջանային նոր աշխարհառազմավարութիւնը, որուն հիմքը կը կազմեն նոր օսմանականութեան եւ փանթուրքիզմի հայեցակարգերը՝ այս առումով Արցախի հայաթափումը եւ Արցախի ամբողջական կլանումը Ազրայէջճանի կողմէ: Այս նիստին զեկուցեց նաեւ Դոկտ. Կարէն Խանլարեան, որ ընդգծեց Սիւնիքի աշխարհաքաղաքական դերը համաթուրքական ծաւալապաշտութեան խափանման գործընթացքին մէջ՝ մասնաւորապէս թուրք-ազրայէջճանական ցեղասպան դաշինքին կողմէ պարբերաբար հնչող «Ձանգեզուրի միջանցք» հոնտորաբանութեան առումով եւ անդրադարձաւ Իրանի պետական պաշտօնակատարներու դիրքորոշումներուն այս գծով, իսկ Ահարոն Շիրտըմեան ներ-



կայացուց նոր օսմանականությունը եւ այս իմաստով տարբեր ոլորտներու մէջ տարուած քաղաքականությունները: Սոյն նիստը վարեց Փրոֆ. Աշոտ Մելքոնեան:

Չորրորդ նիստի գրուցավարն էր Ահարոն Շխրտըմեան: Ելոյթ ունեցան Փրոֆ. Արմէն Մարուքեան, որ Արցախի եւ Հայաստանի հանրապետություններուն դէմ Ազրայէյճանի սանձագերծած լայնածաւալ պատերազմի քարոզչական-տեղեկատուական ուղղություններուն մասին մանրամասնեց եւ դիտել տուաւ, որ Հայաստանն ու Սփիւռքի կառույցները պէտք է վերանային իրենց գործունէութեան նախկին մարտավարությունը եւ որդեգրեն պայքարի նոր մեթոտներ: Ապա, Դոկտ. Նորա Պայրազտարեան համապարփակ կերպով մատնանշեց Արցախի մէջ կատարուած ցեղասպանական արարքի միջազգային օրէնքի տակ քննարկումը՝ պետական եւ ոչ-պետական կարողականություններուն ընձեռած հնարաւորություններու ծիրին մէջ եւ կեդրոնացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 2015 թուականին բացած դատին վրայ՝ Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի գծով իբրեւ նախադէպ:

Օրուան վերջին նիստով, Դոկտ. Իսկուհի Աւանէսեան ներկայացուց Արցախի խաղաղ բնակչութեան նկատմամբ Ազրայէյճանի ցեղասպանական գործողությունները, միջազգային իրաւունքներու լայնածաւալ խախտումներն ու պատերազմական յանցագործությունները: Փրոֆ. Վահրամ Բալայեան խօսեցաւ Սեպտեմբեր 2023-ին Ազրայէյճանի սանձագերծած ռազմական գործողություններուն մասին եւ Ազրայէյճանի օգտագործած ռազմավարական նշանակություն ունեցող աշխարհագրական դիրքը եւ ուժանիւթային աղբիւրները, ու անդրադարձաւ Արցախի բռնի տեղահանման հետեւանքներուն եւ կործանարար գործընթացը կանխելու կարելիությունները: Իսկ Եղիա Թաշճեան ներկայացուց Հարաւային Կովկասի շուրջ յետ 2020-ի աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական իրադարձությունները եւ ապագայ մարտահրաւէրները: Նիստը վարեց Տիգրան Եկաւեան:

Երկրորդ օրը, վեցերորդ նիստով զեկոյց ներկայացուց Շահան Գանտահարեան: Ան անդրադարձաւ Արցախի մէջ Ազրայէյճանի կիրարկած ցեղասպանական գործողություններու արձագանգներու երեք ուղղություններուն՝ պաշտօնական (Երեւանի ու Ստեփանակերտի) ուղղություն, ոչ-պետական՝ սակայն միջազգային հեղինակություն եւ վարկ վայելող հիմնարկներու կամ իրաւաքաղաքական ոլորտի կարեւորագոյն դէմքերու ուղղություն եւ տարբեր պետություններու օրէնսդրական ազգային ժողովի բանաձեւերու ուղղություն: Ապա Դոկտ. Արփինէ Բաբլումեան զեկուցեց միջազգային մամուլին 2023 թուականի արցախահայություններուն բռնագաղթին ու հայրենազրկման անդրադարձին մասին եւ համապարփակ վերլուծում կատարեց օգտագործուած ուղղություններուն եւ անոր յետին քաղաքականություններուն: Նիստը վարեց Դոկտ. Վահրամ Բալայեան:

Եօթերորդ նիստով ելույթ ունեցան Դոկտ. Հրայր Պալեանն ու Դոկտ. Վիգէն Չթըրեանը, գեկուցավար ունենալով Փրոֆ. Արմէն Մարուքեան: Դոկտ. Պալեան հարցադրումներ բարձրացուց Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան բանակցութիւններուն ձախողումին վերաբերեալ եւ մանրամասնեց հակամարտութիւններու լուծման ներկայի քաղաքականութիւնները եւ միջնորդներուն՝ իւրաքանչիւրը իր շահերը հետապնդելը՝ քան հակամարտութիւններուն լուծում բերելու սկզբունքը: Իսկ Դոկտ. Չթըրեան խօսեցաւ ուժային հաւասարակշռութեան վերականգման միջոցներուն մասին՝ վերլուծելով պարտութեան մղած պատճառները եւ Հայաստանի ռազմավարական գործընկերներու պակասը, Հայաստանի դերը միջազգային յարաբերութիւններուն մէջ:

Երրորդ եւ վերջին օրուան առաջին նիստով հանդէս եկաւ Դոկտ. Խաչիկ Տէր Ղուկասեան, որ համապարփակ կերպով ներկայացուց Սփիւռքի քաղաքականացման գործընթացը՝ լուսարձակի տակ առնելով Յեղասպանութեան հարցը հանրութեան ուշադրութեան վերստին յանձնելու աշխատանքները եւ արդարահատուցման համար առած ուղին, ինչպէս նաեւ հարցադրումներ բարձրացուց այս բոլորէն դասեր քաղելով Արցախի հարցը դնելու եւ Սփիւռքին վերաշխուժացման ու զօրաշարժի համաշխարհային կերպով կազմաւորելու խնդիրին շուրջ: Ապա, գեկուցեց Տիգրան Եկաւեան՝ անդրադառնալով Սփիւռքի դերակատարութեան ներկայ մարտահրաւերներուն դիմաց, ի մասնաւորի փանթուրքիզմի, Հայաստանի հետ յարաբերութեան ու ռազմավարական տեսլական մշակելու իր օրակարգը ստեղծելու առնչութեամբ: Հուսկ, Փրոֆ. Հայկ Օշական իր գեկուցումով Սփիւռքի ներկայ վիճակը պարզելու համար անդրադարձաւ Սփիւռքի քաղաքական ինքնութեան՝ սկսեալ 1830-ական թուականներուն Եւրոպայէն սկսած ազգայնականութեան գաղափարախօսութեամբ, ու այս մեկնակէտէն խօսեցաւ Արցախի ներկայ իրականութեան Սփիւռքի ընկալման մասին: Նիստը վարեց Դոկտ. Հրայր Պալեան:

Իսկ գիտաժողովին իններորդ եւ վերջին նիստով Դոկտ. Մելանիա Բալայեան գեկուցեց Ազրպէյճանի կողմէ ռազմակալուած Արցախի հայկական մշակութային ժառանգութեան իւրացման մասին, սկսելով Ազրպէյճանի աղուանական ծագումէն՝ հասնելով Արցախի եկեղեցիներուն ալպանական ծագում ունենալու կեղծ տեսութիւնները: Հուսկ, Լեոնիկ Յովհաննիսեան ներկայացուց Արցախի նիւթական եւ ոչ-նիւթական մշակութային ժառանգութեան պահպանման խնդիրները, խօսեցաւ մեր ժառանգութեանց նկատմամբ Ազրպէյճանի վարած քաղաքականութեան մասին եւ կատարեց շարք մը առաջարկներ: Վերջապէս, Արմինէ Տիգրանեան ներկայացուց Արցախի մշակութային պաշտպանութեան միջազգային իրաւական մեքանիզմը՝ անդրադառնալով մշակութային ժառանգութեան պաշտպանութեան դրութիւններուն, օրէնքներուն ու սկզբունքներուն: Նիստը վարեց Դոկտ. Խաչիկ Տէր Ղուկասեան:

Ենթակա համագումարի եզրափակիչ իր օրհնութեան խօսքը արտասանեց Արամ Ա. Կաթողիկոս: Ան ըսաւ, որ այս գիտաժողովին քննարկումները պէտք է շարունակուին զանազան վայրեր՝ զանազան ձեւերով, նկատի ունենալով, որ գիտաժողովը ակադեմական հարցերը կեանքի իրականութեան լոյսին տակ տեսնել փորձեց: Ան դիտել տուաւ, որ ներկայացումներն ու քննարկումները ինքնաքննական ոգի եւ առարկայական մօտեցումներ կը պարունակէին, ինչպէս նաեւ՝ հայեցակէտերու նոյն ուղղուածութիւնը տիրական ներկայութիւն էր: Նորին Ս. Օծութիւնը յայտնեց, որ արծարծուած նիւթերը ո՛չ միայն այժմէական եւ հրատապ հարցեր էին, այլեւ՝ հարցեր, որոնք խորքային կերպով քննարկումի կարիք ունին, եւ վերջապէս ընդգծեց մեր ընելիքը ծրագրելու անմիջականութիւնը:

Իր խօսքի աւարտին, ան իր գնահատանքը յայտնեց մասնակիցներուն, յատկապէս՝ Շահան Գանտահարեանին, Փրոֆ. Արմէն Մարուքեանին եւ Փրոֆ. Աշոտ Մելքոնեանին, այս գիտաժողովի նախապատրաստական ու ծրագրաւորման աշխատանքներուն համար, եւ նշեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մի՛շտ պատրաստ է աջակցելու այն բոլոր նախաձեռնութիւններուն ու աշխատանքներուն, որոնց նպատակը Հայաստանի հզօրացումն է, եւ այս պարագային՝ Արցախի մեր ժողովուրդի վերադարձի իրաւունքներու պաշտպանութիւնը՝ միջազգային հովանաւորութեամբ:

Յայտնենք, որ գիտաժողովէն ետք «Կիլիկիա վերլուծական հարթակ»-ը գումարեց փակ նիստ մը, ուր քննարկեց գիտաժողովէն բխած քննարկումները, վերլուծումները, հարցերն ու առաջարկները եւ հետեւեալ յայտարարութիւնը հրապարակեց.-



ՀԱՄԱԳՈՒՄԱՐ՝ Ի ՆՊԱՍՏ

ԱՐՑԱԽԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա վերլուծական հարթակ»-ի կազմակերպութեամբ, 20-22 Ապրիլ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցաւ «Արցախի իրաւունքներու վերականգնումի հրամայականը՝ ընդդէմ Ազրայէճանի ցեղասպանական քաղաքականութեան» խորագրով միջազգային համագումարը: Եռօրեայ նիստերուն մասնակցեցան Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքի տարբեր շրջաններէն շուրջ 30 պատմաբաններ, միջազգային իրաւունքի մասնագէտներ եւ քաղաքագէտներ:

Վեհափառ Հայրապետին հրաւերով համագումարին ներկայ էին նաեւ Միջազգային Քրէական Դատարանի Առաջին Դատախազ՝ Դոկտ. Լուիս Մորենո Օքամփո, ինչպէս նաեւ Արցախի Ազգ. Ժողովին ստեղծած Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան հարցերով յանձնախումբի աշխատանքները համակարգող, նախկին Արտաքին Դործոց նախարար՝ Վարդան Օսկանեան:

Համագումարը քննարկեց Արցախի հայաթափման յաջորդած Ազրայէճանի յանցաւոր քաղաքականութիւնը եւ անոր արձագանգները միջազգային շրջանակներու եւ մամուլին մէջ: Ուշադրութեան կեդրոնին էին Արցախի ժառանգութեան նկատմամբ իրագործուող մշակութային Ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ Սփիւռքի ներուժի համախմբումը եւ Արցախի իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ հնարաւոր քայլերը: Շեշտուեցան Արցախի ժողովուրդին միջազգային երաշխիքներով հաւաքական վերագարծի իրաւունքի եւ յարակից այլ իրաւունքներու իրացման հիմնաւորումներն ու հնարաւորութիւնները:

«Կիլիկիա վերլուծական հարթակ»ը քննարկեց նաեւ Արցախի հայաթափման հետեւանքով Հայաստանի Հանրապետութեան սպառնացող գոյութենական վտանգները եւ որոշեց.-

ա) Հրատարակել համագումարի նիւթերու ժողովածուն:

բ) Պատրաստել Ազրայէճանի ցեղասպանական քաղաքականութիւնը փաստագրող թղթածրար՝ առ ի օգտագործում իրաւաքաղաքական բոլոր շրջանակներուն, ի նպաստ Հայ ժողովուրդին ընդհանրապէս եւ Արցախին իրաւունքներու վերականգնման աշխատանքներուն մասնաւորապէս:

գ) Հաստատել խորհրդակցական կապեր համահայկական օրակարգերու ձեւաւորման շուրջ վերլուծական եւ իրաւաքաղաքական աշխատանքներ տանող կեդրոններու եւ դերակատարներու հետ:

«Կիլիկիա վերլուծական հարթակ»-ը պիտի շարունակէ իր հերթական աշխատանքները՝ օրակարգի վրայ ունենալով Հայրենիքի եւ Սփիւռքի խնդիրները:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, 12-15 Մարտ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ յաջորդաբար տեղի ունեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներ եւ Թեմակալ Առաջնորդներու ու Ազգ. Վարչութեանց ներկայացուցիչներու հանդիպումներ: Յիշեալ մարմինները նախ առանձնաբար հանդիպումներ ունեցան եւ ապա՝ միացեալ, յատուկ օրակարգերու համաձայն:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կրօնական ժողովը, առաջին հերթին, լայնօրէն քննարկեց Դպրեվանքի գործունէութիւնը, Տեսուչ Հայր Սուրբին ներկայացուցած զեկոյցի լոյսին տակ, եւ գնահատելով Դպրեվանքին կատարած հոգեմտաւոր կազմաւորումի առաքելութիւնը՝ թելադրեց վերանորոգ թափով շարունակել հոգեւորական, ուսու-



ցիչ, դպրապետ ու մտաւորական պատրաստելու կոչուած Դպրեվանքի առաքելութիւնը: Ապա, ժողովին ներկայացուեցաւ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի զեկոյցը, ուր հակիրճ կերպով նկարագրուած էին անցնող շրջանին տեղի ունեցած ձեռնարկներն ու իրագործումները: Յաջորդաբար քննարկուեցան միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութեանց առնչուած նիւթեր, միշտ ներկայացուած զեկոյցներու լոյսին տակ: Աստուածաշունչի արեւմտահայերէնի թարգմանութեան շարունակուող աշխատանքները նկատուեցան էական: Քահանայից պատրաստութիւնը նկատուեցաւ խիստ հրամայական՝ նկատի ունենալով թեմերու կարիքը հոգեւոր մարդուժի: Այս ծիրէն ներս շեշտուեցաւ տուեալ թեմէն ունենալու քահանայացուներ, որպէսզի քահանայ-ժողովուրդ յարաբերութիւնը ըլլայ աւելի արդիւնաւէտ: Երիտասարդութիւնը առանցքային տեղ գրաւեց Կրօնական ժողովի քննարկումներուն մէջ եւ կարեւորութեամբ շեշտուեցաւ եկեղեցին երիտասարդութեան տանելու հրամայականը: Յաջորդաբար զեկոյցներ տրուեցան «Կիրիկիա» մատենադարանի, հնատիպերու, ձեռագրատան, արխիւներու, «Շնորհալի» ու «Նարեկացի» երգչախումբերու եւ տեղեկատուական բաժանմունքին կողմէ եւ առանձնաբար քննարկուեցան անոնց կատարած աշխատանքներն ու յառաջիկայ ծրագիրները: Յատուկ քննարկումի նիւթ դարձան մեր եկեղեցւոյ ծէսին բարեկարգութեան առնչուած կարգ մը հարցեր, ինչպէս նաեւ ընկերաբարոյական խնդիրներ: Բնականաբար ժողովը նաեւ քննեց յարակից, ինչպէս նաեւ թեմերէն եկած հարցեր ու առաջարկներ: Իւրաքանչիւր օրակարգի քննարկումէն ետք Վեհափառ Հայրապետը կատարեց անհրաժեշտ թելադրութիւններ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Քաղաքական ժողովը եւս ունեցաւ իր լիակատար նիստը: Ժողովը յաջորդաբար ընդունեց Կաթողիկոսարանի առնչուած յանձնախումբերը՝ «Թռչնոց Բոյն», Ազունիէի Ազգ. Բուժարան, Ազգ. Ծերանոց, Հայագիտական ու Մանկավարժական կեդրոններ: Իւրաքանչիւր յանձնախումբ ներկայացուց իր զեկոյցը, ապա տեղի ունեցաւ ընդհանուր քննարկում: Քաղաքական ժողովը նաեւ լսեց Կաթողիկոսարանի Կալուածոց եւ Տնտեսական խորհուրդներէ բաղկացած շահարկման յանձնախումբի զեկոյցը, ուր առաւելաբար պարզուած էին Լիբանանէն ներս յառաջացած ընկերատնտեսական տագնապին հետեւանքները Կաթողիկոսարանի տնտեսական կացութեան վրայ:

Ժողովը իր միօրեայ նիստի երկրորդ բաժինը յատկացուցած էր թեմերու հետ հանդիպումներու: Այս ծիրէն ներս հանդիպումներ տեղի ունեցան Գանատայի, Արեւելեան ու Արեւմտեան Ամերիկայի թեմերուն, ինչպէս նաեւ Սպահանի ու Թեհրանի թեմերու Թեմակալ Առաջնորդներուն ու Ազգ. Իշխանութեան ներկայացուցիչներուն հետ: Յիշեալ հանդիպումներուն զեկոյցներ



ներկայացուցեցան թեմերու կատարած աշխատանքներուն ու դիմագրաւած մարտահրաւէրներուն մասին, բնականաբար նաեւ կատարուեցան քննարկումներ: Վեհափառ Հայրապետը մօտէն տեղեակ ըլլալով թեմերու կեանքին ու մտահոգութիւններուն՝ կատարեց անհրաժեշտ թելադրութիւններ:

ՄԻԱՑԵԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍՓԻՒՌՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԻՆ

Երրորդը հանդիպումը տեղի ունեցաւ մասնակցութեամբ Ազգ. Կեդր. վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու, Առաջնորդներու ու Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներուն: Հանդիպումը ամբողջութեամբ նուիրուած էր Սփիւռքի վերակազմակերպումին:

Առաջին հերթին, Նորին Սրբութիւնը իր պատգամը ուղղեց ներկաներուն եւ յիշեցուց, թէ ինչո՞ւ նախաձեռնած էր Սփիւռքի վերակազմակերպման եւ ապա բացատրեց, թէ ինչ քննարկումներ կատարուած էին իր կողմէ հրապարակուած յաջորդական հռչակագիրներու լոյսին տակ: Ան տասը կէտերու մէջ ներկայացուց Սփիւռքի դիմագրաւած գլխաւոր մարտահրաւէրները: Իր պատգամի վերջին բաժինը, Նորին Ս. Օծութիւնը յատկացուցած էր թեմերու վերակազմակերպումին: Նորին Սրբութեան պատգամէն ետք, բոլոր թեմերը յաջորդաբար ներկայացուցին ցարդ իրենց կատարած աշխատանքները, ինչպէս նաեւ յառաջիկայ ծրագիրները՝ թեմերու վերակազմակերպումի գծով:

Հանդիպման աւարտին Արամ Ա. Կաթողիկոս վերաշեշտեց Սփիւռքի վերակազմակերպման անյետաձգելի անհրաժեշտութիւնը:



ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԹԵՄԵՐՈՒ ՀԵՏ

Ժողովական աշխատանքներու վերջին օրը, Վեհափառ Հայրապետը յաջորդաբար հանդիպումներ ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերու ներկայացուցիչներուն հետ: Առանձնաբար քննուեցան թեմերու կեանքին առնչուած շատ մը հարցեր: Ան լսելէ ետք իրեն ներկայացուած խնդիրները, մտահոգութիւններն ու առաջարկները՝ անհրաժեշտ թելադրութիւններ կատարեց ի խնդիր թեմերու բարգաւաճման ու ծաղկման:

*

* *

Երեք օրերու վրայ տարածուած հանդիպումներն ու աշխատանքները ամփոփելով ու եզրակացնելով, Արամ Ա. Կաթողիկոս հետեւեալ կէտերը շեշտեց.-

1) Յատուկ գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ մեր թեմերը կազմակերպուած են եւ հաւատքով ու նուիրումով լծուած են իրենց աշխատանքին: Ինչ որ կը կատարուի մեր եկեղեցւոյ կողմէ, այս պարագային թեմերու ճամբով, հաւատքի առաքելութիւն ու ազգային ծառայութիւն է: Հոգեւորը ու ազգայինը անքակտելիօրէն շաղախուած են մեր եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մէջ: Այսպէ՛ս եղած է միշտ ու այսպէ՛ս պէտք է մնայ: Իւրաքանչիւր թեմ տարբեր դրուածք ունի եւ անհրաժեշտ է զանոնք նկատի ունենալ մեր առած որոշումներու գծով:

2) Ինչպէս ժողովական քննարկումներու ընթացքին շեշտեցինք, Սփիւռքի վերակազմաւորումը անյետաձգելի անհրաժեշտութիւն է: Սա դիւրին աշխատանք չէ, սակայն հրամայական է: Այս գործընթացին հարկ է լծուիլ հանգըրուանային կերպով՝ ճշգելով այն ինչ որ առաջնահերթ է ու կարելի: Մեր թեմերու վերակազմակերպումը պէտք է ուղեցոյց հանդիսանայ գաղութներու վերակազմակերպման:

3) Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն ժողովին զեկուցում տրուեցաւ նաեւ Արցախի ժողովուրդի իրաւունքներու վերականգման ուղղութեամբ Կաթողիկոսութեան տարած աշխատանքներուն մասին: Ինչպէս ծանօթ է ձեզի, «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ին ճամբով լծուած ենք լուրջ խորհրդակցութիւններու, քննարկումներու ու վերլուծումներու: Մեր գլխաւորութեամբ հետեւողական աշխատանք կը տարուի ցեղասպանագէտներու եւ միջազգային արդարադատութեան մարզին մէջ հեղինակութիւն եղող անձնաւորութիւններու հետ կապեր հաստատելու, միջազգային տարբեր կազմակերպութիւններու ու ատեաններու մօտ Արցախի առեւանգուած ռազմաքաղաքական ղեկավարութեան ու ռազմագերիներու ազատ արձակման առաջադրանքի իրականացման ուղիները ճշգելու: Յառաջիկային պիտի յայտարարենք այս ուղղութեամբ առնուելիք շօշափելի քայլերու մասին:

4) Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը կը շարունակէ նոր ծաւալ ստանալ՝ զանազան ծրագիրներու ու նախաձեռնութիւններու ճամբով: Այս ծիրէն ներս թէ՛ մարդուժի եւ թէ՛ նիւթական ներդրումի կարիքը զգալի կը դառնայ: Այս ուղղութեամբ «Խորէն Ա. Կեդրոն»ի բացումը, Ֆանարի մէջ, ուր պիտի գործեն Կաթողիկոսարանի կարգ մը բաժանմունքները, մեծապէս պիտի նպաստէ մեր ծառայութեան առաւել կազմակերպման:



ՇՆՈՐՀԱԲԱՇԵՈՒՄ

ՄԱԿԱՐ, ՍԻՓԱՆ, ՄԵՍՐՈՂ ԵՒ ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ԱՐԺԱՆԱՑԱՆ ԱՐԲՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԻ

Հինգշաբթի, 14 Մարտ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցած Ազգ. Կեդր. վարչութեանց Կրօնական ու Քաղաքական ժողովներու խառն նիստի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս Արքեպիսկոպոս տիտղոս շնորհեց՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանին, Սպահանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սիփան Եպս. Քէչէճեանին, Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանին եւ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանին:

Նորին Արքեպիսկոպոսը բարձր գնահատելով իւրաքանչիւրին՝ իր Թեմէն ներս տարած նուիրեալ ծառայութիւնը, անոնց շնորհեց Արքեպիսկոպոս տիտղոսը՝ շեշտելով, որ յիշեալ պարգեւատրումը միայն գնահատանքի արտայայտութիւն չէ, այլեւ առաւել խթան՝ վերանորոգ նուիրումով շարունակելու ծառայութիւնը մեր ժողովուրդին:



ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

**ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ,
ՈՒՐԲԱԹՕՐԵԱՅ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՒԵՑԱՆ ԾԵԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԷՋ**

Դպրեվանեցիները, գլխաւորութեամբ տեսչութեան, Մարտ ամսուան ընթացքին միացան ծխային եկեղեցիներու Ուրբաթ օրերու հսկումի արարողութիւններուն: Այս առիթով անոնք այցելեցին հետեւեալ եկեղեցիները.- Հայաշէնի Ս. Յովհաննու Կարապետ, Նոր Հաճընի Ս. Գէորգ, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եւ Թրիփոլիի Ս. Հոգեգալուստ եկեղեցիները: Դպրեվանեցիներուն կողմէ կատարուած շարականներու երգեցողութեան ու արտասանուած աղօթքներուն երկիւղածութեամբ մասնակից դարձան ներկայ հաւատացեալները եւ լսեցին անոնց կողմէ տրուած օրուան խորհրդածութիւնները:

Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ արարողութեան աւարտին խօսք առաւ Ծխատէր՝ Արժ. Տ. Վարդան Աւ. Քհնյ. Մարտիրոսեանը, որ իր անհուն ուրախութիւնը յայտնեց ի տես Դպրեվանեցիներու ներկայութեան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեանը, որ իբր քարոզի նիւթ ընտրած էր բարկութիւնը եւ զայն յաղթահարելու միջոցները:

Ս. Գէորգ եկեղեցւոյ Ծխատէր՝ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Հեճինեանը եւս իր ուրախութիւնը յայտնեց Դպրեվանքի սաներուն այցելութեամբ: Այստեղ, օրուան խորհրդածութիւնը կատարեց Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեանը, բնաբան ունենալով Քրիստոսի «Ես ալ քեզ չեմ դատապարտեր. գնա՛ եւ ասկէ ետք մի մեղանչեր» խօսքը ու շեշտը դրաւ Քրիստոսի ողորմածութեան եւ ներողամտութեան վրայ:

Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ դպրեվանեցիներուն աղօթակից դարձաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանը: Օրուան խորհրդածութիւնը կատարեց Բրշ. Սերժ Սրկ. Քիւշէրեան, որ իր քարոզին իբր բնաբան ընտրած էր. «Մեղքերդ ներուած են, հաւատքդ քեզ փրկեց, խաղաղութեամբ գնա՛» (Ղկ 7:50) համարը:

Խորհրդածույթներն ենք, խօսք առաւ նաեւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ անդրադարձաւ պահեցողութեան շրջանին կարեւորութեան եւ անոր ունեցած ազդեցութեան՝ հաւատացեալին կեանքին մէջ: Ան բարձրօրէն գնահատեց Դպրեվանքի տեսչութիւնն ու սաները:

Վերջապէս, Թրիփոլիի Ս. Հոգեգալուստ եկեղեցւոյ մէջ օրուան խորհրդածույթները կատարեց Բրշ. Երուանդ Սրկ. Եղիայեանը, բնաբան ունենալով Արեւագալի ժամերգութեան արտասանուած հետեւեալ մաղթանքը. «Լոյսովդ ո՛վ Քրիստոս, ամէնքս լուսաւորուեցանք»:

Իւրաքանչիւր այցելութեան ընթացքին, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանը իր երախտագիտական խօսքերը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանին, ինչպէս նաեւ տուեալ եկեղեցւոյ Ծխատէր Քահանայ Հայրերուն, Թաղական խորհուրդներուն եւ տիկնանց յանձնախումբերուն՝ սիրալիր ընդունելութեան եւ սիրոյ սեղաններուն համար: Հոգշ. Հայր Սուրբը իւրաքանչիւր անգամ քաջալերեց ծնողները իրենց զաւակները վստահելու Դպրեվանքի կրթութեան՝ յանուն Հայ ազգի առաւել ծաղկման:

ՈՒԽՏԵՐԹ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԵՒ ԽՈՐ ՎԻՐԱՊ ՄՏՆԵԼՈՒՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Շաբաթ, 16 Մարտ 2024-ին, Դպրեվանքի տեսչութեան առաջնորդութեամբ, խումբ մը Դպրեվանքեցիներ թափօր կազմած Ս. Գրիգոր Լուսաւորիչի տօնին աւանդական ուխտերթը կատարեցին՝ հոգեգմայլ շարականներու երգեցողութեամբ: Ուխտերթը սկիզբ առաւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքէն, Տէրունական աղօթքի եւ Դպրեվանքի քայլերգի երգեցողութեամբ, ճամբուն ընթացքին Լուսաւորիչ Հայրապետին նուիրուած շարականներու երգեցողութեամբ հասան Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար:

Դպրեվանքեցիները գոհունակ եւ նորոգուած ոգիով աղօթեցին Մայր Տաճարին մէջ, որ Աստուծոյ օրհնութեամբ եւ պահպանութեամբ յաջողեցան իրենց ուխտը կատարել: Ապա, Ս. Գրիգոր Լուսաւորիչի տօնին առիթով մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագին իրենց մասնակցութիւնն ու ծառայութիւնը բերին:

ԴԵՐԱՍԱՆ ԴԱԻԹ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ ՍԵՒԱԿ ՂԱԶԱՐԵԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԴՊՐԵՎԱՆՔ

Երկուշաբթի, 25 Մարտ 2024-ի յետմիջօրէին, Պարոյր Սեւակի 100-ամեակին առիթով եւ Համազգայինի հրաւերով, Լիբանան ժամանած Պարոյր Սեւակին թողնիլը՝ Սեւակ Ղազարեան եւ վաստակաշատ դերասան եւ բեմադրիչ՝ Դաւիթ Յակոբեան այցելեցին Դպրեվանք եւ հանդիպում ունեցան դպրեվանեցիներուն հետ, ընկերակցութեամբ Համազգայինի հրատարակչատան տնօրէն՝ Յակոբ Հաւաթեանին:

Հաւաթեան ամփոփ կերպով ներկայացուց հիւրերն ու անոնց Լիբանան այցելութեան նպատակը, ապա Դաւիթ Յակոբեանը ընթերցեց Պարոյր Սեւակի քերթուածներէն փունջ մը, որմէ ետք խօսք առաւ Սեւակ Ղազարեանը եւ ներկայացուց Պարոյր Սեւակի ծննդեան 100-ամեակին ձօնուած ձեռնարկներուն շարքը:

Աւարտին, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանը բեմ բարձրացաւ ու երախտագիտութեան եւ ուրախութեան խօսք արտասանեց, ապա յուշանուէրով մը պատուեց հիւրերը:

ՏԵՍՈՒՉ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

2-5 Ապրիլ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան այցելեց Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն (Էջմիածին)՝ գործակցութեան աշխատանք մեկնարկելու Դպրեվանքին եւ «Գէորգեան» ու «Վազգէնեան» հոգեւոր ճեմարաններուն միջեւ:

Արդարեւ, Դպրեվանքի Տեսուչ Հայր Սուրբը եւ «Գէորգեան» ու «Վազգէնեան» ճեմարաններու Տեսուչ՝ Գերպ. Տ. Շահէ Մ. Վրդ. Անանեան ունեցան աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքին քննարկուեցան հոգեւոր դպրանոցներու յարաբերութիւններու ամրապնդման եւ գործակցութեան կարելիութեան առնչուած նիւթեր: Հանդիպումները ընդգրկեցին շինիչ խորհրդակցութիւններ եւ գործնական աշխատանքներու գծով գաղափարներու փոխանակում: Քննարկումները պիտի շարունակուին հետեւողական հանդիպումներով:

Նշենք, որ յիշեալ հանդիպումներուն ներկայ էին նաեւ «Գէորգեան» ձեմարանի Փոխ Տեսուչ՝ Հոգշ. Տ. Յուսիկ Աբղ. Սմբատեանն ու ուսումնակրթական Տնօրէն՝ Արժ. Տ. Գաբրիէլ Քհնյ. Վարդանեանը:

Յայտնենք նաեւ, որ Տեսուչ Հայր Սուրբը Արցախէն տեղահանուած ընտանիքներու այցելեց՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աշակցութիւնը ցուցաբերելու եւ արցախահայ աշակերտներու «Թռչնոց Բոյն»-ի մէջ ուսանելու առիթը ընծայելու:

Հ.Մ.Ը.Մ.-ի ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՊԻՔՖԱՅԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ

Կիրակի, 21 Ապրիլ 2024-ին, Պիքֆայայի Ս. Նահատակաց խորանին առջև տեղի ունեցավ մէկ ու կէս միլիոն սրբադասուած նահատակներուն յիշատակի նախատօնակը՝ նախագահութեամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի եւ մասնակցութեամբ տեսչական կազմի անդամներուն, դպրեվանեցիներուն եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Լիբանանի սկառուտական ընտանիքին:

Նախատօնակէն ետք ներկաները ուղղուեցան յուշակոթող ու ծաղկեպսակ զետեղեցին Նահատակաց յուշարձանին առջև:

Հ.Մ.Ը.Մ.-ի շեփորախումբի կատարողութեամբ Լիբանանի, Հայաստանի եւ Արցախի քայլերգներու ունկնդրութենէն ետք, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Լիբանանի Շրջանային խմբապետուհի՝ Թալին Փափիրեան: Ապա ներկաներուն իր պատգամը յղեց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան: Ան դիտել տուաւ, որ հայու տեսակը չի՛ ճանչնար յուսահատութիւն եւ կը պայքարի մինչեւ վերջին շունչ, աւելցնելով, որ Հայրենիքը սրբութիւն է, զոր պէտք է պահպանենք եւ Հ.Մ.Ը.Մ.-ի նշանաբանին համաձայն, զիրար պէտք է բարձրացնենք, որպէսզի ազգովին միասնաբար բարձրացանք:



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՀՈԳԵԻՈՐ ԼՍԱՐԱՆ՝
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ**

Հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 20 տարիներէ ի վեր, ամէն Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00-11:00, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարէն ներս կը կատարէ Հոգեւոր Լսարան, ուր Միաբան Հայրերու կողմէ սաղմոսասացութեամբ, շարականի ուսուցումներով, աղօթքներով ու մանաւանդ կրօնական խորհրդածութիւններով, մեր ժողովուրդի զաւակներուն կը ջամբուին հոգեւոր մատակարարում:

Առ այդ, Մարտ եւ Ապրիլ ամիսներու ընթացքին, կատարուած են հետեւեալ հոգեւոր խորհրդածութիւնները.-

ա) 5 Մարտ 2024-ին, Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խօսեցաւ «Ի ծնէ կոյրին բժշկութիւնը» նիւթին մասին:

բ) 19 Մարտ 2024-ին, Գերշ. Տ. Մակար Արք. Աշգարեան խօսեցաւ «Մեղքի կործանարար հետեւանքը եւ ապաշխարութեան ներգործող դերակատարութիւնը» նիւթին մասին:

գ) 26 Մարտ 2024-ին, Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան խօսեցաւ «Աւագ Շաբաթը՝ Յովհաննու Աւետարանին ընդմէջէն» նիւթին մասին:

դ) 9 Ապրիլ 2024-ին, Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան խօսեցաւ «Աշխարհամատրան Կիրակի» (Կանաչ Կիրակի) նիւթին մասին:

ե) 16 Ապրիլ 2024-ին, Հոգշ. Տ. Եզեկիէլ Աբղ. Սելլումեան խօսեցաւ «Երանիներ» նիւթին մասին:

զ) 30 Ապրիլ 2024-ին, Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան խօսեցաւ «Ներե՞լ թէ՞ Դատել» նիւթին մասին:



**ՀՈԳԵՄՏԱԻՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝
«ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԵԱՆՔ» ՅԱՅՏԱԳՐԻ ԸՆԴՄԵՉԵՆ**

Հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 3 տարիներէ ի վեր, համագործակցութեամբ Լիբանանի «Վանայ Զայն» ռատիոկայանին, ժողովուրդին կը մատուցէ հոգեւոր, բարոյախօսական եւ դաստիարակչական յայտագիր մը՝ «Հաւատք եւ Կեանք» խորագրով, որ տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, ուղիղ սփռումով:

Մարտ եւ Ապրիլ ամիսներու ընթացքին, Միաբան Հայրերու կողմէ կատարուեցան հետեւեալ խորհրդածութիւնները.-

ա) 7 Մարտ 2024-ին, Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան խօսեցաւ «Քառասնօրեայ պահեցողութիւնն ու պահեցողը» նիւթին մասին:

բ) 21 Մարտ 2024-ին, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան խօսեցաւ «Նորոգւած միտքերով՝ նոր մարդ եղէք» նիւթին մասին:

գ) 4 Ապրիլ 2024-ին, Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան խօսեցաւ «Եկեղեցին եւ տեղեկատուական աշխարհը» նիւթին մասին:

դ) 11 Ապրիլ 2024-ին, Հոգշ. Տ. Եզեկիէլ Աբղ. Սելլումեան խօսեցաւ «Աստուծոյ խոստացած փրկութիւնը» նիւթին մասին:

ե) 18 Ապրիլ 2024-ին, Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Սարգիսեան խօսեցաւ «Մեղք եւ Շնորհք» նիւթին մասին:

զ) 25 Ապրիլ 2024-ին, Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեան խօսեցաւ «Ինչպէ՞ս կրնանք մեր հաւատքը աւելցնել» նիւթին մասին:



ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԷՉ

Լիբանանի Հայ Գաղութի կեանքէն ներս գործող հոգեւոր, ընկերային, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ, զանազան ծրագիրներ եւ ձեռնարկներ իրագործեցին եւ համագործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Միաբան Հայրեր հիւրընկալեցին:

Միաբան Հայրերը յիշեալ ձեռնարկներու ընդմէջէն, եկեղեցւոյ առաքելութիւնը տարին ժողովուրդին մէջ, իրենց ներկայութեամբ եղան ժողովուրդին հետ եւ իբրեւ Հայ եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներ՝ իրենց ծառայութիւնը մատուցին ժողովուրդին:

Այս առիթով, Մարտ եւ Ապրիլ ամիսներու ընթացքին, անոնք պատգամներով, քարոզախօսութեամբ ու դասախօսութիւններով իրենց մասնակցութիւնը բերին վերոյիշեալ ձեռնարկներուն:-

ա) Կիրակի, 3 Մարտ 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Գերպ. Տ. Շնորհք Մ. Վրդ. Աշըգեան, նիւթ ունենալով՝ «Տնտեսի Կիրակի» խորագիրը:

բ) Կիրակի, 10 Մարտ 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, նիւթ ունենալով՝ «Դատաւորի Կիրակի» խորագիրը:

գ) Ուրբաթ, 15 Մարտ 2024-ի առաւօտեան ժամը 9:30-ին, կազմակերպութեամբ «Վանայ Զայն» ռատիոկայանին տեղի ունեցաւ «Բարեւ» յայտագիրը: Օրուան հոգեւոր պատգամը փոխանցեց՝ Հոգ. Տ. Վիգէն Վրդ. Տալլըճեան, նիւթ ունենալով՝ «Ս. Գրիգոր Լուսաւորիչի կեանքն ու գործունէութիւնը» խորագիրը:

դ) Երեքշաբթի, 19 Մարտ 2024-ի առաւօտեան ժամը 11:00-ին, կազմակերպութեամբ «Գարակէօզեան» Հաստատութեան, «Շամլեան-Թաթիկեան» դպրոցի սրահէն ներս տեղի ունեցաւ Ս. Զատիկուան ձեռնարկ, որուն ընթացքին իր հոգեւոր խօսքը փոխանցեց՝ Հոգ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան, նիւթ ունենալով՝ «Յարութեան յոյսով՝ վերանորոգուեցէք» խորագիրը:

ե) Աւագ Երեքշաբթի, 26 Մարտ 2024-ի առաւօտեան ժամը 9:30-ին, կազմակերպութեամբ «Վանայ Զայն» ռատիոկայանին տեղի ունեցաւ «Բարեւ» յայտագիրը: Օրուան հոգեւոր պատգամը փոխանցեց՝ Գերպ. Տ. Փառէն Մ. Վրդ. Վարդանեան, նիւթ ունենալով՝ «Ս. Զատիկուան աւանդութիւններն ու եկեղեցւոյ կարգերը» խորագիրը:

զ) Կիրակի, 7 Ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, կազմակերպութեամբ Հայ եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան, նիւթ ունենալով՝ «Նոր Կիրակի (Կրկնագատիկ)» խորագիրը:

ԽՈՐԷՆ Ա. ԿԵԴՐՈՆ

**«ԽՈՐԷՆ Ա. ԿԵԴՐՈՆ»Ը
ԲԱՅՈՒԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԵՑԱԲ
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԿՈՂՄԵ**

«Գարակէօզեան» եւ «Սուրէն Խանամիրեան» նախկին Ազգ. վարժարաններու կառույցը, Ֆանարի «Լէյլաւան» ժողովրդային տուներուն կից, երիտասարդական ու մշակութային կեդրոնի պատշաճեցման համար վերանորոգութեան ենթարկուելէ ետք, հանրութեան կը տրամադրուի որպէս «ԽՈՐԷՆ Ա. ԿԵԴՐՈՆ»: Այս առիթով, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներուն, Թեմակալ Առաջնորդներուն, թեմերու Ազգ. Վարչութեանց ատենապետներուն, Հայ համայնքներու ու քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչներուն, Միաբան հայրերուն եւ Դպրեվանքի խումբ մը աշակերտներուն, Արամ Ա. Կաթողիկոս կատարեց կեդրոնին պաշտօնական բացումը:

Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ դիտել տուաւ, որ «Խորէն Ա. Կեդրոն» անունը արժանի կերպով սոյն կեդրոնին ճակատին վրայ կը տեսնենք,



որովհետեւ երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոս ինք հաստատած ու կառուցած է այս կեդրոնն ու անոր կից գտնուող ժողովրդային տուները: Արամ Ա. Կաթողիկոս յիշեցուց, որ այս կառույցը շինուած է որպէս վարժարան, իսկ այսօր, ըլլալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային առաքելութեան մէկ կարեւոր բաժինը, իր մէջ կ'ընդգրկէ Կաթողիկոսարանի Հայագիտական եւ «Նաչեր Գալուստեան» Մանկավարժական կեդրոնները, Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը (Հ.Ե.Հ.Ո.Մ.), «Շնորհալի» ու «Նարեկացի» երգչախումբերը, ինչպէս նաեւ մեր Ս. Աթոռին առաքելութեան հետ աղերս ունեցող զանազան կեդրոններ, ինչպիսին են՝ «Կիլիկիա» մատենադարանը եւ լսարաններու ու համագումարներու յատուկ սրահներ:



Ան իր խօսքին մէջ նշեց, որ այսպիսի կեդրոններ միջոց են առաքելութիւն ծաւալելու եւ նկատի ունենալով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային առաքելութեան ու ծառայութեան հետզհետէ առաւել ընդարձակումը, նման կեդրոններ պիտի նպաստեն այդ ուղղութեամբ: Ան ընդգծեց, որ Կաթողիկոսութեան առաքելութիւնը ուղղուած է մեր ժողովուրդի զաւակներուն՝ «ո՛ր որ մեր ժողովուրդը կարիքը ունի հոգեւոր սնունդի ու մեր կրթական մշակութային արժէքներու կենսագործման, հո՛ն է մեր Ս. Աթոռը՝ իր Միաբանութեամբ, թեմերով եւ ժողովական կառույցներով»:

Խօսքի աւարտին, Նորին Սրբութիւնը յայտնեց, որ կեդրոնի պատասխանատու նշանակած է Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանը: Այս կեդրոնը որոշ դասաւորումներ ըրած է շրջանի 300 Հայ ընտանիքներու զաւակներուն հա-

մար, որպէսզի անոնք եւս մասնակից դառնան այստեղ ծաւալուող աշխատանքներուն: Վերջապէս, ան յատուկ կերպով ողջունեց եւ իր հայրական օրհնութիւնը տուաւ կեդրոնի վերանորոգման աշխատանքներուն իրենց ներդրումը բերած բոլոր բարերարներուն, ինչպէս նաեւ Հիւս. Ամերիկայի Արեւելեան, Արեւմտեան եւ Գանատայի թեմերուն:



Ողջոյնի խօսքէն ետք, Նորին Սրբութեան գլխաւորութեամբ եւ կեդրոնի տնօրէն Հայր սուրբին առաջնորդութեամբ, ներկաները ծանօթացան կեդրոնի շէնքին ու զանազան բաժանմունքներուն:

Նշենք, որ հանդիսութեան գեղարուեստական կոկիկ յայտագիրով ելոյթ ունեցաւ Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը:



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

**ՁԱԲԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԲ ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ**

Շաբաթ, 2 Մարտ 2024-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Ձա-
ւարեան Ուսանողական Միութիւնը (Ձ.Ո.Մ.)՝ ստանալու համար անոր օրհնու-
թիւնն ու թելադրութիւնները: Հանդիպումին ներկայ էր Ձ.Ո.Մ.ի մօտ Հայ Յե-
ղափոխական Դաշնակցութեան Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ՝ Վաչէ Նա-
ճարեան:

Ձ.Ո.Մ.ի անունով սրտի խօսք արտասանեց Միութեան ատենապետ՝ Սա-
նահին Թոմասեան: Ան ըսաւ, որ միութիւնը կը բոլորէ իր 120 ամեակը. 2024
տարուան ընթացքին զանազան ձեռնարկներու ու ծրագիրներու ճամբով լու-
սարձակի տակ պիտի առնուի միութեան 120-ամեայ գործունէութիւնը եւ իբ-
րեւ մեկնարկ յիշեալ ձեռնարկներուն, միութեան անդամները ահաւասիկ կը
գտնուին Անթիլիասի Մայրավանքին մէջ՝ ստանալու համար Նորին Սրբութեան
օրհնութիւնը, թելադրութիւնն ու ցուցմունքները, որպէսզի յառաջիկայ տարի-



ներուն, անոնք կարողանան շարունակել իրենց վստահուած աշխատանքը: Ապա, Թոմասեան խնդրեց Նորին Ս. Օծութենէն, որ իր պատգամը ուղղէ Զ.Ո.Մ.ականներուն:

Արամ Ա. Կաթողիկոս իր ուրախութիւնը յայտնեց ի տես յատկապէս վերջին շրջանին երիտասարդներու եռուզեռին՝ Անթիլիասի Մայրավանքէն ներս, որ ցցուն արտայայտութիւնն է երիտասարդութեան վստահուած դերակատարութեան մեր եկեղեցական ու ազգային կեանքին մէջ: Արդարեւ, ան ողջունեց Զաւարեան Ուսանողական Միութեան անդամներուն ներկայութիւնը Կաթողիկոսարանի յարկին տակ եւ շնորհաւորեց անոնց 120-ամեայ գործունէութիւնը:

Իր խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը ընդգծեց համալսարանական ուսանողութեան կարեւորութիւնը մեր ազգային կեանքէն ներս եւ շեշտեց երիտասարդներուն ունենալիք ներդրումը մեր գաղութներու գործունէութեան: Ան յայտնեց, որ Հայ կեանքը, յատկապէս Սփիւռքի մէջ, անհրաժեշտ կարիքը ունի վերակազմակերպումի, որուն արդէն իսկ ձեռնարկած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, եւ այս առումով երիտասարդներուն դերը հրամայական է, որպէսզի նախկին ու ներկայ սերունդներուն միջեւ կամուրջ մը ստեղծելով՝ կարողանանք հաւաքական ճիգով ու միասնակամութեան ոգիով մեր համայնքներուն ու գաղութներուն կեանքը շարունակել վերանորոգ թափով՝ ի պայծառութիւն մեր կառուցներուն ու կազմակերպութիւններուն: Այս սրբազան գործին մէջ երիտասարդութիւնը իր ըսելիքը եւ ընելիքը հարկ է ունենայ, որովհետեւ ան է մեր կեանքին արին ներարկող գործունէայ ու աշխոյժ տարրը:

Այս մտածումներէն մեկնած՝ Նորին Արքութիւնը իր հայրական ու Հայրապետական օրհնութիւնը փոխանցելով ներկաներուն՝ դարձեալ շնորհաւորեց Զ.Ո.Մ.ի 120 ամեակը եւ անոր յառաջիկայ աշխատանքներուն ու հայանպաստ ծրագիրներուն համար յաջողութիւն ու վերելք մաղթեց:

Աւարտին, Զ.Ո.Մ.ականները իրենց հարցումները ուղղեցին Նորին Ս. Օծութեան՝ Հայ դատին, Արցախին, Հայաստանին եւ Սփիւռքի վերակազմակերպման առնչուած հարցերու շուրջ:

Աւարտին, ատենապետ Սանահին Թոմասեան յուշանուէր մը յանձնեց Նորին Արքութեան՝ միութեան 120 ամեակին առիթով:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԾԱՓՈՆԻ ԴԵՍՊՈՆԸ**

Հինգշաբթի, 7 Մարտ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելությունը Լիբանանի մօտ Ճափոնի դեսպան՝ Մակոշի Մասայոյի:

Նկատի ունենալով, որ դեսպանին առաջին այցելությունն էր Կաթողիկոսարան, Նորին Սրբությունը ընդհանուր գիծերով բացատրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության կառույցն ու առաքելությունը, յատկապես ծանրանալով լիբանանահայության եւ անոր քաղաքական դերակատարության վրայ: Նորին Ս. Օծությունը նաեւ անդրադարձավ համայնքին ներս գործող կրթական, ընկերային ու մշակութային կառույցներու գործունեության եւ անոնց դիմագրաւած դժուարություններուն, յատկապես ընկերատնտեսական մարզին մէջ:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՄՕՏ ԳԱՆՍԱՅԻ
ԴԵՍՊՈՆՈՒԴԻՆ ԱՅՑԵԼԵՑ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹԵԱՆ**

Շաբաթ, 9 Մարտ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի մօտ Գանատայի դեսպանուհի՝ Սթեֆանի Մըքքալըմ, ընկերակցութեամբ քաղաքական հարցերու իր խորհրդականին:

Հանդիպման ընթացքին առաւելաբար քննարկուեցան Լիբանանի նախագահական ընտրութեան, հարաւի մէջ ստեղծուած կացութեան եւ Լիբանան-Գանատա յարաբերութեանց առնչուած հարցեր:

**ՊԱՐՈՅՐ ՍԵՄԱԿԻ ԹՈՌՆԻԿԸ՝ ՍԵՄԱԿ
ՂԱԶԱՐԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԲԵՍԱԴՐԻՉ
ՈՒ ԴԵՐԱՍԱՆ՝ ԴԱԻԹ ՅԱԿՈԲԵԱՆ,
ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱՆԹԻԼԻԱՍ**

Հինգշաբթի, 21 Մարտ 2024-ին, Պարոյր Սեւակի թոռնիկը՝ Սեւակ Ղազարեան եւ հայրենի բեմադրիչ ու դերասան՝ Դաւիթ Յակոբեան, այցելեցին Արամ Ա. Կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետը ընդունեց հիւրերը եւ գնահատեց անոնց տարած գործունեությունը գրականութեան, մշակոյթի եւ արուեստի մարզերուն մէջ: Աւարտին, անոնք Նորին Սրբութեան նուիրեցին Համազգայինի հրատարակչատունէն նոր լոյս տեսած Սեւակի «100 ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ» հատորի առաջին օրինակը:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՆԸ**

Ուրբաթ, 22 Մարտ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբեկեան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ արծարծելու Հայաստանի ու Լիբանանի ներքին կացութեանց առնչուած հարցեր:

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԸՂԱԶԱԿԱՆ ԵՐԵ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԼԻԲԱՆԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Շաբաթ, 23 Մարտ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Հայ քա-

ղաքական երեք կուսակցություններու Լիբանանի ներկայացուցիչները՝ Վանիկ Տազետեան (Ս.Դ.Հ.Կ.), Յակոբ Բագրատունի (Հ.Յ.Դ.) եւ բժիշկ Աւետիս Տազետեան (Ռ.Ա.Կ.):

Կուսակցություններու ներկայացուցիչները Վեհափառ Հայրապետին պարզեցին Հայոց Ցեղասպանութեան 109-րդ ամեակին առիթով քաղաքական երեք կուսակցություններու նախաձեռնութեամբ տեղի ունենալիք աշխատանքներն ու ժողովրդային ձեռնարկները:

Նորին Սրբութիւնը ողջունեց միջկուսակցական գործակցութիւնը, յատկապէս համահայկական ու համայնքային հարցերու ու նախաձեռնություններու գծով: Ան շեշտեց լիբանանահայ մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցութեան անհրաժեշտութիւնը Ապրիլ 24-ի առիթով տեղի ունենալիք ձեռնարկներուն, ինչպէս նաեւ կայանալիք եկեղեցական ու ժողովրդային հաւաքներուն՝ ցոյց տալու մեր շրջապատին ու յատկապէս ցեղասպաններուն, մեր ժողովուրդին հաւաքական կամքն ու պահանջատիրական անկուն ոգին:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՀԱՅՐԵՆԻ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Չորեքշաբթի, 3 Ապրիլ 2024-ին, Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան հրաւերով Լիբանան ժամանած հայրենի արուեստագէտներ՝ Նունէ Եսայեան, Յովիկ Արշակեան եւ «Տը պոյինկ օրքեսթրա»ին երաժիշտները, այցելեցին Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը մեծապէս գնահատեց արուեստագէտներուն ներդրումը ժառանգութեան պահպանման մէջ եւ այս առիթով Համազգայինին նուիրեց արժէքաւոր երգարաններ: Նշեալ հանդիպումին Նունէ Եսայեան եւ Յովիկ Արշակեան երգեցին շարք մը երգեր:

Նշենք, որ հիւրերը շրջեցան «Կիլիկիա» թանգարան: Անոնք նախապէս այցելած էին Ս. Աստուածածին Վանքն ու Դպրեվանքը:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Ապրիլ ամսուան ընթացքին Վեհափառ Հայրապետին այցելած պաշտօնական հիւրերու կարգին յիշենք հետեւեալները.-

• Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահ՝ Պերճ Մեղրակեանը: Անոնք քննարկեցին Հայաստանին դիմագրաւած դժուարությունները եւ ընդհանրապէս Հայաստան-Սփիւռք գործակցութեան առնչուած նիւթեր:

• «Ազգ. Ազատ Հոսանք» կուսակցութեան փոխ նախագահուհի՝ Դոկտ. Մարթին Նաժըմ Բթայլի: Անոնք քննարկեցին Լիբանանի ներկայ կացութեան առնչուած հարցեր:

• Հայաստան-Սփիւռք գործակցութեան նախկին նախարարուհի՝ Հրանուշ Յակոբեան: Այցելութիւնը առիթ հանդիսացաւ ընդհանուր արժէտորում կատարելու Հայաստան-Սփիւռք յարաբերութեան ներկայ կացութեան: Վեհափառ Հայրապետը գնահատեց Յակոբեանի բերած կարեւոր նպաստը Հայաստան-Սփիւռք գործակցութեան առաւել ծաւալման, միաժամանակ ողջունելով նոյն նպատակին նուիրուած Յակոբեանի եռահատոր հրատարակութիւնը՝ «Հայրենի-Սփիւռք գործակցութեան տասնամեայ ուղին» խորագրով:

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ Ս. ԳՐՈՑ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ
ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ԺՈՂՈՎԻՆ**

Չորեքշաբթի, 10 Ապրիլ 2024-ին, Հարիսայի «Բեթանիա» հիւրանոցին մէջ գումարուեցաւ Ս. Գրոց Լիբանանի ընկերակցութեան նորընտիր գործադիր խորհուրդին ընդհ. ժողովը:

Միօրեայ տարածուած ժողովի ընթացքին, նախ Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Մայք Պասսուս պարզեց ընկերակցութեան առաքելութիւնը, ապա անդրադարձաւ գործադիր խորհուրդի անդամներուն ստանձնած պատասխանատուութեան: Քննարկուեցան նախորդ շրջանի աշխատանքները եւ որոշուեցաւ յաջորդ երեք տարիներու աշխատանքային ուղեգիծը:

Յայտնենք, որ յիշեալ խորհուրդին անդամ է Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջկրօնական բաժանմունքի պատասխանատու՝ Հոգ. Ս. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԿԵՐԱՑՈՒՑ
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԱՐՔ. ԽԱՉԵՐԵԱՆԻՆ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՈՍՁՆՈՐԴ**

Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովը իր 51-րդ նիստին ընթացքին, Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեանը ընտրեց որպէս Թեմակալ Առաջնորդ: Այս առիթով ժողովի դիւանը պաշտօնական նամակով մը ընտրութեան արդիւնքները փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ խնդրեց անոր վաւերացումը: Նորին Սրբութիւնը Հայրապետական պաշտօնագրով մը իր օրհնութիւնը տուաւ ժո-

ղովական անդամներուն եւ վաւերացուց Սրբազան Հօր ընտրութիւնը:

Գեղամ Սրբազան Հայրը նախապէս Առաջնորդն էր Յունաստանի Հայոց Թեմին, որմէ առաջ որպէս Առաջնորդ ծառայած էր Լիբանանի Հայոց Թեմին: Ան տարբեր պարտականութիւններ եւ պաշտօններ ստանձնած է, ինչպէս՝ Դպրեվանքի հսկիչ, մատակարարապետ, ազգային վարժաններու մէջ կրօնի եւ հայագիտութեան ուսուցիչ: 2017 թուականին Քալիքի «Ս. Հոգի» համալսարանէն ստացած է իրաւաբանական ճիւղի մագիստրոսի աստիճան: Ունի հայերէն եւ արաբերէն հրատարակութիւններ:

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ
ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԸ**

Ուրբաթ, 26 Ապրիլ 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի մօտ Պապական նուիրակ՝ Փաուլօ Պորճիա Եպիսկոպոսը եւ Ն.Ս. Ֆրանսիս Պապին կողմէ նամակ մը յանձնեց Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբութեան եւ Պապական նուիրակին խօսակցութեան առանցքը դարձաւ ընդհանրապէս Լիբանանի կացութիւնը եւ յատկապէս նախագահական ընտրութիւնը:

**ՎԵՅԱՓԱՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ
ԴԵՍՊԱՆՆԵՐԸ**

Ուրբաթ, 26 Ապրիլ 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս յաջորդաբար ընդունեց Հայաստանի եւ Յունաստանի դեսպանները:

Հայաստանի դեսպան՝ Վահագն Աթաբեկեանի հետ Նորին Սրբութեան

գրոյցը կեդրոնացաւ Հայաստանի դիմագրաւած մարտահրաւերներուն եւ Ապրիլ 24-ի նշումին վրայ՝ Հայաստանի թէ՛ Մփիւքի մէջ:

Յունաստանի դեսպանուհի՝ Տեւփինա Քուրուլովուլուն եկած էր իր գորակցութիւնը յայտնելու Հայ ժողովուրդին՝ Հայոց Ցեղասպանութեան 109րդ ամեակին առիթով: Ան յայտնեց, որ Հայ ժողովուրդին դատը արդարութեան դատ է, եւ յոյն ժողովուրդը կը միանայ յանուն արդարութեան ու մարդկային իրաւանց դարաւոր պայքարին:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր ակնարկ նետելու Լիբանանը յուզող խնդիրներուն՝ յատկապէս նախագահական ընտրութեան վրայ:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ
Հ.Ս.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Երեքշաբթի, 30 Ապրիլ 2024-ին,
Արամ Ա. Կաթողիկոս իր գրասենեա-

կին մէջ ընդունեց Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան (Հ.Ս.Ը.Մ.) Լիբանանի Շրջանային վարչութիւնը:

Վարչութեան անդամները Վեհափառ Հայրապետին ներկայացուցին միութեան աշխատանքային յառաջիկայ ծրագիրները, յատկապէս Մայիս ամսուան ընթացքին տեղի ունենալիք Մայիսեան Փառատօսին առնչուած: Այս ուղղութեամբ Շրջանային վարչութեան անդամները խնդրեցին Նորին Սրբութեան բարձր հովանաւորութիւնը:

Նորին Ս. Օծութիւնը իր հայրական օրհնութիւնը տուաւ եւ ջերմ գնահատանքը յայտնեց ի տես Հ.Ս.Ը.Մ.ի կատարած անխոնջ աշխատանքներուն, ո՛չ միայն Լիբանանի, այլեւ՝ բոլոր գաղութներուն մէջ, յատկապէս հայեցի դաստիարակութեան ու ազգային կազմաւորման իմաստով: Արդարեւ, ան թելադրեց, որ նոյն ոգիով ու յանձնառութեամբ միութիւնը շարունակէ իր հայանպաստ գործունէութիւնը:



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 3 ՄԱՐՏ 2024: ԻԱ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Դ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ՏՆՏԵՍԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան:

ԿԻՐԱԿԻ, 10 ՄԱՐՏ 2024: ԻԸ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Ե. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԴԱՏԱԻՈՐԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

ՇԱԲԱԹ, 16 ՄԱՐՏ 2024: ԼԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: ՏՕՆ Է ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐՉԻՆ ՄԵՐՈՅ ՍՈՍԿԱԼԻ ՉԱՐՉԱՐԱՆԱՑՆ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅՆ Ի ՎԻՐԱՊՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

ԿԻՐԱԿԻ, 17 ՄԱՐՏ 2024: ԼԵ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Զ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԳԱԼՍԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Արք. Աշգարեան:

ԿԻՐԱԿԻ, 24 ՄԱՐՏ 2024: ԾԱՂԿԱԶԱՐԴ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան եւ Հայրապետական Պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

ԱԽԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 28 ՄԱՐՏ 2024: ՅԻՇԱՏԱԿ ԸՆԹՐԵԱՑ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

ԱԻԱԳ ՇԱԲԱԹ, 30 ՄԱՐՏ 2024: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:

ԿԻՐԱԿԻ, 31 ՄԱՐՏ 2024: Ս. ԶԱՏԻԿ: ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ իր Հայրապետական Պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ԱՊՐԻԼ 2024: Բ. ՕՐ ԶԱՏԻԿ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան:

ԿԻՐԱԿԻ, 7 ԱՊՐԻԼ 2024: Ը. ՕՐ ԶԱՏԻԿ: ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ): ՏՕՆ ԱԻԵՏ-ՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:

ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ 2024: ԺԵ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: ԱՇԽԱՐՀԱՄՍՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՒՐԱԿԷ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 21 ԱՊՐԻԼ 2024: ԻԲ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: (ԿԱՐՄԻՐ ԿԻՒՐԱԿԷ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան եւ Հայրապետական Պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, 24 ԱՊՐԻԼ 2024: ԻԵ. ՕՐ ՅԻՆԱՆՑ: (ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ՀԱԻԱՏՈՅ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ):

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան:

ԿԻՐԱԿԻ, 28 ԱՊՐԻԼ 2024: ԻԹ. ՕՐ ՄԵԾԻ ՅԻՆԱՆՑ: ՏՕՆ ԵՐԵՒՄԱՆ Ս. ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

Տպարան
Կաթողիկոսութեան Հայոց
Մեծի Տանն Կիլիկիոյ
Անթիլիաս - Լիբանան